

ՀԱԿՈՐ ՍԱՆԱՍՈՐՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԿԱԾ
ԴԿԱԴՐՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈՒ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(մեկնություններ)

Երկրորդ, վերամշակված հրատարակություն

ԵՐԵՎԱՆ
«Գասպրիմտ» հրատարակչություն
2011

ՀՏԴ 2: 1/14
ԳՄԴ 86.3+87
Ս 190

Սանասարյան Յ.Ա.

Ս 190 Համակարգված դավադրություն / Յ.Ա.Սանասարյան.- Երկրորդ, վերամշակված հրատարակություն. - Եր.: Գասպրինտ հրատ., 2011.- 184 էջ:

Ուսումնասիրության մեջ վերլուծվում են դրամաշնորհների, վարկերի, <Կայուն զարգացում> հայեցակարգի, Միջազգային դաշնագրերի և ազդեցիկ այլ լծակների միջոցով պետությունների իրավական համակարգը և կյանքի ընթացքը համաշխարհային միակենտրոն կառավարմանը հարմարեցնելու միտումները:

ՀՏԴ 2 : 1/14
ԳՄԴ 86.3+87

ISBN 978-9939-832-35-7

© Սանասարյան Յ.Ա., 2011

ՆԱԽԱԲԱՆ

Խորհրդային Միության բնակչությունը գրեթե զրկված էր արտաքին աշխարհի հետ առնչվելու հնարավորությունից և հիմնականում լուռ հակակրանք ուներ այդ հասարակարգի նկատմամբ: Մարդկանց մեծամասնության պատկերացման մեջ բարու և արդարության երաշխիքը համարվում էին Միացյալ Նահանգներն ու եվրոպական երկրները, իսկ չարիքն ու բռնությունը վերագրվում էին միայն բոլշևիկյան հասարակարգին: Սակայն, նրա փլուզումից հետո, երբ հնարավոր դարձավ առնչվել արդարության ու բարու խորհրդանիշ կարծեցյալ այդ երկրների բարքերին, ապա այս անգամ էլ սրանց էր վերագրվում մարդու իրավունքների ոտնահարման, ընտանիքի ու պետության հիմքերը քայքայող գաղափարների տարածման, ազգամերժ անհատի և կրավորական ու բարոյագուրկ հասարակության ձևավորման, սոցիալական անարդարության և անհեթեթ պատերազմների մեղքը: Բայց կարճ ժամանակ անց շատերը հասկացան, որ դարձյալ առկա է մոլորությունը, քանզի համամոլորակային գործընթացները ցույց են տալիս, որ թեպետ այսօրվա գորեղ երկրները մասնակից են աշխարհում վարվող քաղաքականությանը, սակայն, հիմնականում՝ կատարողի կարգավիճակով և գործիք են այն ուժի ձեռքին, որը ձգտում է սանձել մարդկային միտքը, վերահսկել ու կառավարել համայն մարդկության մշակութային, ֆինանսական ու նյութական գործընթացները և, ապա, ամբողջությամբ տիրանալ երկրագնդին: Նաև հասկանալի դարձավ, որ այդ ուժն իր նպատակներն իրականացնում է իր գլխավոր հենարանների՝ կրոնական կառույցների և աշխարհում ֆինանսական ու քաղաքական լծակներ ունեցող հեղինակավոր Միջազգային կազմակերպությունների միջոցով:

Բնականաբար հարց է ծագում, թե այդ ի՞նչ ուժի մասին է խոսքը և արդյո՞ք չափազանցված չեն նրա կարողությունների ու հնարավորությունների մասին տարածված ու տարածվող լուրերը:

Միմյանց լրացնող ու հաստատող վկայություններն ու առօրյա գործընթացները ցույց են տալիս, որ ավելի քան երկու հազարամյակ շարունակ գործում է մի համակարգ, որը ձևավորվել է նույն էթնոսի որոշ ընտանիքների միավորմամբ և դարձել համաշխարհային մի յուրօրինակ կառույց՝ մի դավադիր ուժ: Այժմ այդ կառույցն արդեն տիրացել է համաշխարհային կապիտալի, տեղեկատվական համակարգերի, նյութատեխնիկական և այլ հարստությունների զգալի զանգվածին և դարձել է աշխարհի գրեթե բոլոր երկրների պարտատերը: Պարզվում է, որ այդ կառույցի (դավադիր ուժի) գաղափարախոսությունն ու ծրագիրը, ինչպես նաև դրա իրականացման մեխանիզմներն արտացոլված են Աստվածաշնչում, որտեղ ասվում է, որ Երկրագունդն իր ամբողջ հարստություններով պատկանում է հրեաներին, բոլոր ժողովուրդները ստորադաս են նրանց, հրեաներին վերապահվում է կեղեքել, ստրկացնել, ոչնչացնել օտար ժողովուրդներին և տիրանալ նրանց ունեցվածքին: Ավելի քան երկու հազար տարի է, ինչ դիցառասպելներին միաձուլված այս կառույցի ծրագիրն ու գաղափարախոսությունը որպես կրոնական ուսմունք-դոգմա ընդունվել է աշխարհի հարյուրավոր ժողովուրդների կողմից:

Այս կառույցի՝ գաղափարախոսության, ծրագրի ու գործունեության մասին էլ կխոսվի ստորև շարադրանքում:

ԱՌԱՋԱԲԱՆ

Համաշխարհային ֆինանսների և նյութական կարողությունների ահռելի զանգվածը փոքրաթիվ մարդկանց պատկանելու փաստն արդեն անվիճելի է: Օրինակ, ՄԱԿ-ի 1996 թվականի «Հարգացման ծրագիր» զեկույցի տվյալներով՝ 358 միլիարդատեր կլանային ընտանիքների եկամուտը դուլարային հաշվարկով գերազանցում է Երկրագնդի բնակչության 45 տոկոսի եկամուտներին: 1909 թվականին, հավանաբար, այդ ընտանիքներն է նկատի ունեցել Վալտեր Ռատենաուն՝ ասելով, թե միմյանց ձանաչող 300 ընտանիք կանխորոշում են եվրոպական տնտեսության ճակատագիրը և հենց իրենցից էլ ժառանգորդներ են ընտրում: Հենրի Ֆորդը «Նյու-Յորք Թայմս» թերթում հայտարարել է (1925 թ.), թե հսկողության տակ վերցրեք սեփական շահի համար պատերազմներ ստեղծող 50 առավել հարուստ ֆինանսիստ հրեաների, և պատերազմները կվերանան: Սույն խնդրի առնչությամբ Նյու-Յորքի քաղաքապետ Ջոն Խայլանը 1922 թ. մարտի 26-ի իր ձառում ասել է. «Մեր պետության իրական սպառնալիքը անտեսանելի կառավարությունն է, որը հսկա ծովահրեշի նման իր շոշափուկներն է տարածում մեր քաղաքի, մեր նահանգի, մեր ազգի վրա: Այդ ծովահրեշին գլխավորում է բանկիրային տների մի փոքր խումբ, որը սովորաբար կոչվում է «միջազգային բանկիրներ»: Այդ մի փոքր խումբը, իր եսասիրական նպատակով, իրականում ղեկավարում է մեր կառավարությանը»:

Համամարդկային ունեցվածքի զգալի զանգվածը սեփականած դավադիր ուժի առանձին հանգույցները (հիմնականում՝ միմյանց արյունակից ընտանիքները), սովորաբար մարդկությանը ներկայանում են «միջազգային», «համաշխարհային» կազմակերպություններ և այլ անուններով: Կարելի է ենթադրել, որ այդպիսի գործելակերպը պայմանավորված է նրանով, որ դավադիր ուժի պարագլուխներն անցյալի փորձից գիտեն, որ իրենց կործանարար ու մարդակույ ծրագիրը տարբեր ժողովուրդների մեջ կարող է արմատավորվել և իրականանալ միայն այնպիսի անունների քողի տակ, որոնք հասարակության մեջ հավատ են ներշնչում, իսկ, օրինակ, Միջազգային կազմակերպություն անվանումը մեծ մասամբ դեռ

ընկալվում է իբրև բոլոր ազգերի նախաձեռնությամբ ստեղծված և նրանց շահերից բխող մի առաքելություն: Օգտվելով մարդկանց մեջ կարծրացած այս թյուրիմացությունից ու թյուրըմբռումից, համայն մարդկության կառավարման ղեկն իր ձեռքը վերցնելու նպատակ հետապնդող դավադիր ուժը, Միջազգային կազմակերպությունների միջոցով, աշխարհի երկրներին բացահայտորեն թելադրում է այնպիսի դրույթներ ու չափանիշներ, որոնք բխում են իր իսկ շահերից և հակասում մարդկության շահերին: Եթե ոչ այդ ուժի, հապառում շահերից են բխում, օրինակ, ազգային պետությունների դերի թուլացման, պետական կառավարման համակարգի ապակենտրոնացման, կառավարություններին տնտեսական գործունեությունից զրկելու, պետական ունեցվածքի վաճառքի, մահապատժի վերացման պարտադրանքը, ինչպես նաև միասեռականության, թմրամոլության, պոռնկության խրախուսումը կամ վարկային քաղաքականությամբ իրականացվող ակնհայտ մահաբեր շահեր: Փաստորեն, սակավաթիվ մարդկանց գերհարստանալու և ուրիշներին իշխելու, իսկ մարդկության մեծամասնության համար՝ աղքատանալու և ստրկանալու պայմաններ են ստեղծվում, նաև հանցագործների համար ապահովվում են նրանց իսկ ձեռնադր պայմաններ, ինչպես նաև անհրաժեշտ բուժման կարիք ունեցողներին, այսինքն՝ բնական վարք ու բարքից շեղվածներին փորձում են համարել նորմալ մարդիկ և, ըստ էության, խրախուսվում է նրանց քանակի մեծացումը: Այսինքն՝ պետական համակարգի անդամալուծում, հանցագործությունների օրինականացում, արատավոր հասարակության գերակայության հաստատում: Պարզ է, որ այսպիսի իրավիճակը նշված կառույցի-ուժի համար երանելի պայմաններ է ստեղծում իր ծրագիրն ի կատար ածելու գործում:

Այդ ուժը տվյալ պահի հասարակական ընկալմանը համապատասխան, մարդկությանը ներկայանում է այլևայլ ձևերով՝ օգտագործելով սուրբ գաղափարներ և ժամանակահունչ եզրեր (տերմիններ): Եվ այն ժամանակ, երբ բացահայտվում է շահարկվող գաղափարի տակ քողարկված բուն դավադիր նպատակը, նշված ուժը շրջանառության մեջ է դնում լուսավոր ապագա խոստացող, բայց իրականում քայքայիչ ու ավերիչ նպատակներ հետապնդող նորանոր գաղափարներ: Այստեղ որպես օրինակ կարող են ծա-

ռայել ժամանակին շրջանառության մեջ դրված հուղայաքրիստոնեության, դրանից մոտ երկու հազար տարի հետո՝ կոմունիզմի, իսկ մեր օրերում՝ «Կայուն զարգացում» հայեցակարգի գաղափարախոսությունները:

Նշված ուժը իր զգալի նպատակին հասնելու ճանապարհին հետևողականորեն քայքայում ու ոչնչացնում է մարդու կյանքն ապահովող բոլոր համակարգերն ու հենարանները, գլխավորապես մարդուն օտարում է հենց իրենից ու բնությունից: «Չամաշխարհային Նոր կարգեր», «Օրակարգ-21», «Կայուն զարգացում», «Սիասնական եկեղեցի», «Չամաշխարհային եկեղեցի» և այլ՝ առաջին հայացքից ոչինչ չասող, սակայն նպատակայնորեն ստեղծված-հորինված գաղափարների քողի տակ փաստորեն իրականացնում է ազգային պետության, ընտանիքի, ազգային լեզվի, ազգային մշակույթի, գիտության, ազգային կրթության, ազգային ինքնագիտակցության, ազգային արժանապատվության, ազգային ոգու, ազգային հավատքի քայքայում ու ոչնչացում: Գլխավորապես թիրախ ընտրված երկրներում բացահայտորեն կասեցվում է գիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացումը, մարդու բարեկեցությանն ուղղված գիտատեխնիկական նորույթների ներդրումը, որի հետևանքով նաև քայքայվում ու ավերվում են բնական համակարգերը՝ մարդու կյանքի հենարանները: Սի խոսքով, պայմաններ են ստեղծվում աղքատության ու սովի խորացման, բնակչության թվի նվազեցման և ամենագլխավորը՝ այդ գործընթացների անշրջելիության համար: Սիաժամանակ «գթասրտորեն» խոշորածավալ ֆինանսներ (դրամաշնորհներ, «մարդասիրական օգնություններ», վարկեր) են տրամադրվում՝ պատերազմի, սովի, աղքատության, անապատացման, թմրամոլության և այլ վտանգավոր երևույթների դեմ իբրև թե պայքարի համար, երբ համաշխարհային ծավալուն գործողությունները թույլ են տալիս ենթադրել, որ նշված աղետալի գործընթացները «եռուն» պահելու և դրանց հետևանքների վերացման և կանխարգելման համար անհրաժեշտ ֆինանսական հոսքերը կառավարվում են նույն կառույցի կողմից:

Աղաղակող փաստերի համադրումից պարզ երևում է, որ, իրոք, գոյություն ունի կուռ ռազմավարությամբ (**ծրագիր-մեթոդ-ֆի-**

Նանս-հրահանգ-կատարող) գործող մի ուժ, որը ձգտում է տիրանալ աշխարհին և այն ղեկավարել մեկ կենտրոնից: Այլ հարց է, թե ինչպե՞ս հավատալ դիվային նպատակներ ունեցող և առասպելական թվացող այդպիսի ուժի գոյությանը և այդ հարցում ի՞նչն է խանգարում մարդուն՝ ըմբռնելու իրողությունը և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել:

Քննարկվող խնդիրն ընկալելու ճանապարհը շատերիս համար եղել է բարդ ու հակասական: Հայտնի է, որ Հայաստանում այդ խնդիրը համարյա չի արծարծվում և, ընդհանրապես, հասարակայնության մեջ չի գիտակցվում: Ռուսաստանում ապրած մի քանի տարիների ընթացքում, խնդրին առնչվող յուրաքանչյուր տեղեկություն կանխավ մերժում էի՝ այն համարելով իբրև պետական անվտանգության ծառայությունների հորինած և բնակչության շրջանում տարածած բանսարկություն: Անհավանական, ծիծաղելի և անհեթեթ թվացող այդ տեղեկություններն իմ մեջ ցավի զգացում էին առաջացնում. մտածում էի՝ տես, թե բոլշևիկյան գործիչներն ի՛նչ նողկալի մեթոդ են ընտրել՝ տաղանդավոր, ազնիվ ու արդարամիտ հրեա ժողովրդին վարկաբեկելու համար:

Նկարագրվածից մոտ 25 տարի անց հասկանալի դարձավ, որ քննարկվող խնդրում իմ պատկերացումները հիմնազուրկ են եղել և այստեղ իր դերն է կատարել նպատակայնորեն հորինված գաղափարների հետևողական քարոզչությունը: Տվյալ խնդիրը նորովի ըմբռնելու գործում վճռորոշ նշանակություն ունեցավ այն պատահական դիպվածը, երբ փաստաթուղթ փնտրելիս, թղթակույտում ուշադրությունս գրավեց տարիներ առաջ Աստվածաշնչից դուրս գրված հետևյալ տողերը. *«Ինքնիրմէ մեռածը բնաւ մի ուտէք: Հանիկա քու դռներդ եղող պանդոխտին տուր որպէս զի ուտէ, կամ **օտարազգիի մը ծախէ. քանզի դուն քու Տէր Աստծոյդ սուրբ ժողովուրդն ես**»* (Բ Օրինաց 14:21):

Այսինքն՝ անմաքուր ու վտանգավոր սնունդը կարելի է վաճառել օտար ազգերին և քրեորեն հետապնդվող այդ չարագործությունը ներկայացնել որպես աստծո պատգամ, նրա շնչից բխած և դարեր շարունակ մնալ անպատի՞ժ: Այստեղ առկա է նաև ուշագրավ մեկ այլ դրույթ: Պարզվում է Եհովա աստվածն ունի իր եզակի սրբությունը, որը ոչ այլ ինչ է, քան այդ նույն Եհովա աստծո պատգամով՝

աշխարհի բոլոր ժողովուրդներին ոչնչացնելու և նրանց ունեցվածքին տիրանալու մոլուցքով տարված մի էթնոս:

Աստվածաշնչյան քննվող դրույթից պարզորոշ հասկացվում է, որ համայն մարդկությունը երկու դասի է բաժանված: Ըստ այդմ՝ հրեա ժողովուրդը համարվում է ընտրյալ ու լիարժեք, իսկ մյուս ժողովուրդները՝ երկրորդական և ապրելու ոչ արժանի: Նույն գաղափարախոսությունն ամրագրված է նաև Աստվածաշնչից բխող Թալմուդում՝ հրեաների օրենքների ու կանոնների սուրբ գրքում: Այստեղ, օրինակ, ասվում է.

«Այն ամենը, ինչ անհրաժեշտ է հրեային ծիսակատարության համար, օրինակ, վերոհիշյալ ծոպերը և այլն, իրավունք ունի պատրաստել միայն հրեան, այլ ոչ ակումը (ոչ հրեան, օտար ժողովրդի ներկայացուցիչը), քանի որ դրանք պետք է պատրաստվեն մարդու կողմից, քանզի ակումները հրեաների կողմից չպետք է մարդ համարվեն»:

««Կադիշ» աղոթքը (որը սկսվում է հետևյալ բառերով. «Ինդգադդալ վեյիվոսուկադդաշ») թույլատրվում է կատարել այնտեղ, ուր առնվազն տասը հրեա գտնվում են միասին և դա պետք է ընթանա այնպես, որ ոչ մի անմաքուր իր, օրինակ, թրիք կամ ակում, նրանց միմյանցից չբաժանի»:

«Եթե ինչ-որ տեղ ժանտախտ է հայտնվում, որի պատճառով շատ մարդիկ (այսինքն՝ հրեաներ) համաձարակի զոհ են դառնում, ապա առողջ հրեաները պետք է հավաքվեն սինագոգում և առանց ուտելու ու խմելու աղոթեն ամբողջ օրը, որպեսզի Եհովան խղճա նրանց և ժանտախտից ազատի: Իսկ երբ ժանտախտը հայտնվում է անասունների մեջ, ապա այդպես վարվել պետք չէ, բացառությամբ այն դեպքերից, երբ ժանտախտը հայտնվել է խոզերի մեջ, քանզի նրանց ներքին օրգանները նման են մարդկանց ներքին օրգաններին, ինչպես նաև, երբ ժանտախտը հայտնվում է ակումների մեջ, քանի որ նրանց մարմնակազմությունը նմանվում է մարդկայինի» (Г. Климов, Божий народ, лекции по высшей социологии, Краснодар, 1999, стр. 328-332):

Այստեղ քննելի խնդիր չէ այն, թե հրեաներին ինչ հիվանդագին գաղափարներ է պարտադրում Թալմուդը, քանզի դրանք ներազ-

գային օգտագործման համար գրված օրենքներ ու կանոններ են, և ապա, Թալմուդը դարեր շարունակ գաղտնի է պահվել և օտար ազգերին մատչելի է դարձել միայն վերջին դարերում, այն էլ դրա մի փոքր մասը և, ամենագլխավորը, Թալմուդը ոչ միայն ընդունելի է, օրինակ, քրիստոնյաների համար, այլև դրա բովանդակությամբ ծանոթ անձինք «Թալմուդ» անունը լսելիս, նողկանք ու տագնապ են ապրում: Սակայն այլ է Աստվածաշնչի խնդիրը: Հրեաների սուրբ գիրք Հին կտակարանը սուրբ գիրք է համարվում նաև քրիստոնյա ժողովուրդների համար: Օրինակ, Աստվածաշնչի Երկրորդ օրինացից վերը բերված ազգայնամուլական ու մարդատյաց գաղափարներ պարունակող քաղվածքը ընդունելի ու պաշտելի է թե՛ հրեաների-հուդայականների և թե՛ քրիստոնյա ժողովուրդների համար: Հուդայականների համար այն ընդունելի ու պաշտելի է, քանզի բխում է իրենց՝ հրեաների շահերից և կրոնական դոգմա է, իսկ քրիստոնյաների համար այն ընդունելի ու պաշտելի է, քանզի հակասում է իրենց՝ քրիստոնյաների շահերին, բայց կրոնական դոգմա է: Ողբերգական զավեշտ: Սակայն այստեղ զարմանալու ոչինչ չկա, քանի որ քրիստոնյա ժողովուրդներն արդեն դարեր շարունակ քննարկվող խնդրում համառորեն մերժում են տրամաբանությունը և, փաստորեն, դարձել են հրեականության-հուդայականության լծկաններ:

Հրեաների և քրիստոնյաների սուրբ գրքից՝ Աստվածաշնչից բերենք նաև «աստվածային» ներկայացվող հետևյալ դոգմաները, որոնք հրեաների հետ մեկտեղ ընդունում ու պաշտում են նաև քրիստոնյա ժողովուրդները:

Ահա Իսրայելին՝ հրեա ժողովրդին ուղղված Եհովա աստծո պատգամ-պարտադրանքներից մի քանիսը.

«Եւ դուն պիտի սպառես այն բոլոր ազգերը, որոնք քու Տէր Աստուածդ քու ձեռքդ պիտի տայ: Քու աչքդ անոնց պէտք է խնայէ... զանոնք պէտք է մէկէն հատցնես, որպէս զի դաշտին զազանները չչատնան... Անոնց անունները երկնքի տակէն ոչնչացուր...» (Բ Օրինաց 7:16-24):

«Օտարներու որդիները քու պարիսպներդ պիտի շինեն: Ու անոնց թագավորները քեզի ծառայութիւն պիտի ընեն...»

Քու դռներդ միշտ բաց պիտի ըլլան, ցորեկ ու գիշեր պիտի չգոցուին: Որպէսզի քեզի կրեն ազգերուն ստացուածքը: Քանզի այն ազգն ու թագաւորութիւնը որ քեզի չեն ծառայեր՝ պիտի կորսուին ու բոլորովին պիտի կործանին: Քեզի նեղութիւն տուողներուն տղաքները ծռելով քեզի պիտի գան: Բոլոր քեզ անարգողները Քու ոտքերուդ գարշապարներուն երկրպագութիւն պիտի ընեն: Քեզ Տերոջը քաղաքը, Իսրայէլի Սուրբին Սիօնը պիտի անուանեն: 15...Քեզ յափտենական փառք ու ազգէ ազգ տետող ուրախութիւն պիտի ընեն: Ազգերուն կաթը պիտի ծծես, Թագաւորներուն ստիւնքը պիտի ծծես» (Եսայեայ 60:10-16):

«Այսօր քու անունիդ վախն ու սոսկումը բոլոր երկնքի տակ եղող ազգերուն վրայ պիտի դնեմ, այնպէս որ քու համբավդ յտողները քու երեսէդ պիտի դողան ու տագնապին» (Բ Օրինաց 2:25):

«Երբ քու Տէր Աստուածդ քեզ տանի այն երկիրը, որուն համար քու հայրերուդ երդում ըրավ, որ քեզի մեծ ու գեղեցիկ քաղաքներ տայ, որոնք դուն շինած չես . եւ ամէն տեսակ բարիքներով լեցուած տուներ՝ որոնք դուն լեցուցած չես ու փորուած ջրհորներ՝ որոնք դուն փորած չես, այգիներ ու ձիթենիներ՝ որոնք դուն տնկած չես» (Բ Օրինաց 6:10-11):

«Ու երբ քու Տէր Աստուածդ զանոնք (ազգեր՝ Յ.Ս.) քու ձեռքդ տայ, զանոնք զարկ ու բոլորովին կորսցուր. անոնց հետ ուխտ մի ըներ ու անոնց մի ողորմիր. ոչ ալ անոնց հետ խնամութիւն ըրէ. քու աղջիկդ անոր տղուն մի տար ու անոր աղջիկը քու տղուդ մի առներ» (Բ Օրինաց 7:2-3):

«Ահա այս ժողովուրդը մատակ առիծի պէս պիտի ելլէ ու առիծի պէս պիտի բարձրանայ ու պիտի չպառկի մինչեւ որ որսը չուտէ ու սպաննուածներուն արիւնը չխմէ» (Թուոց 23:24):

Ինչպէս տեսնում ենք՝ կողմնակալություն, բռնություն, շովինիզմ, անմեղ մարդկանց սպանություն, ազգերի ու մշակույթի ոչնչացում քարոզող աստվածային կոչված պատգամները մարդկանց երևակայությամ մեջ ձևավորված աստվածային բնույթի՝ բարության և արդարության հետ ոչ միայն որևէ կապ չունեն, այլև, պարզապէս,

դիվային նպատակներ ունեցողի անողոք և անգութ հրամաններ ու կարգադրություններ են, այն էլ՝ կրոնական դոգմաներ դարձած: Եվ ամենաողբերգականն ու զարմանալին. քրիստոնյա ժողովուրդները ոչ միայն սիրով լսում են Հին կտակարանի քարոզիչներին, այլև ջանասիրաբար իրենք են կարդում հենց իրենց համար ստեղծված այդ մահվան գաղափարախոսությունը և ջերմեռանդորեն դրանով ղեկավարվում:

Այս խնդրին ծանոթ մարդիկ հաճախ տարակուսած հարցնում են, թե մարդկության մի հսկայական զանգվածը, իմա՝ քրիստոնյա ժողովուրդներն ինչո՞ւ են ակնհայտ առասպել- հեքիաթների վրա հիմնած և դրանց հետ միաձուլված դավադիր ուժի գաղափարախոսությունն ընդունում որպես անառարկելի ժշմարտություն և դրանով ղեկավարվում, ինչո՞ւ չեն նկատում, որ այստեղ իրենց համար ստրկություն ու մահ է քարոզվում և ի՞նչն է պատճառը, որ հարյուրամյակներ շարունակ հրեա-հուդայական հեղինակների կողմից նպատակայնորեն ստեղծված այդ գաղափարախոսությունը պահպանում է իր կենսունակությունը և հակահարվածի չի արժանանում: Առկախված հարցերից է նաև այն, որ եթե մախկինում այդ խնդրի ընկալումը դժվար է եղել մեծամասնության անգրագիտության և գիտության ոչ զարգացածության, ինչպես նաև տեղեկություն ստանալու սահմանափակության պատճառով, ապա այսօր՝ համատարած գրագիտության ու զարգացած գիտության ու տեխնիկայի դարում, ինչո՞ւ խնդիրը լրջությամբ չի ընկալվում և մահասփյուռ այդ գործընթացը չի կասեցվում:

Այս գաղափարախոսության թյուրըմբռնման խնդրում, հավանաբար, կարևորագույն աշխատանք է կատարում այն, որ դավադիր ծրագիրը կյանքի կոչողներից թերևս ամենագլխավորները՝ հուդայաքրիստոնեական եկեղեցիների հայրերը, հետևողական քարոզչության, պարտադրանքի, բռնության և այլ միջոցներով կարողացել են մարդկանց մեջ ձևավորել աշխարհի կեղծ պատկերի ստերեոտիպը, որը դարերի ընթացքում աստիճանաբար կարծրանալով դարձել է համարյա անշրջելի և կանխորոշում է նրանց մտածելակերպը, հետևաբար և՛ վարքագիծը: Դավադիր ուժի թակարդն ընկած միլիոնավոր մարդիկ, արդեն առանց այդ ուժի միջամտության, նշված կեղծ աշխարհընկալումը, որպես մեծագույն մի արժեք

ու սրբություն, շարունակաբար ներարկում են իրենց սերունդներին հենց օրորոցից, այսինքն՝ վերարտադրում են իրենց կյանքը մերժող, սակայն դավադիր ուժի ծրագրի իրականացման համար կամակատար գինվորներ: Այստեղ անվարան կարելի է ասել, որ այս մարդկանց դարձրել են ընտանի: Իսկ մարդկանց ընտանի դարձնելու տեխնոլոգիան և մեթոդաբանությունը մարդկությանը հայտնի է վաղնջական ժամանակներից: Օրինակ, մարդկանց իրական կյանքից շեղելով՝ ընտանի դարձնելու մղձավանջային պատկերը նկարագրված է աշխարհահեռչակ փիլիսոփա Պլատոնի «Քարանձավի խորհրդանիշը» աշխատությունում, որտեղ ներկայացված է իրական կյանքից մեկուսացված և կեղծ գաղափարներով-ստերեոտիպերով կառավարվող մարդկային մի հանրույթ, որը անփոխարինելի բարիք է համարում իրեն բաժին հասած ողորմելի ու դժբախտ կյանքի պայմանները:

Դավադիր ուժի բացահայտմանը խոչընդոտ է նաև այն, որ քրիստոնյաներիս, կարելի է ասել՝ պլատոնյան-սոկրատեսյան յուրահատուկ քարանձավի բնակիչներին համար այնքան էլ ցանկալի չէ և նույնիսկ ամոթաբեր է մեզ բաժին հասած դժբախտությունը (հուղայականությամբ ղեկավարվելը) խորությամբ քննելն ու անկեղծորեն արտահայտվելը, գուցե նաև այն պատճառով, որ պեսզի չմասսայականացվի մեր դարավոր կարճատեսությունն ու անմտությունը: Մյուս կողմից քննարկվող խնդրում վճռորոշ դեր է կատարում նաև այն, որ ժառանգաբար փոխանցվող հիշողությունը, իրական տեղեկությունների պակասի և նպատակայնորեն մատուցվող կեղծ տեղեկատվության պատճառով թերըմբռնելի ու թյուրըմբռնելի են դառնում ժամանակակից գործընթացները: Օրինակ, չնայած մարդկության անցած ուղին լեցուն է անարդարության և արյունահեղության օրինակներով, երբ որոշ էթնոսներ ձգտել են մյուսների նկատմամբ գերիշխանության հասնել, բայց, ընդհանուր առմամբ, ազգերի միջև եղել է ու կա փոխըմբռնում, իսկ երբեմն էլ՝ բարեսիրտ վերաբերմունք: Ինչպես նաև՝ նրանցից յուրաքանչյուրը, հիմնականում, ձգտել ու ձգտում է արարման ու մրցակցության ճանապարհով հասնել արժանապատիվ կյանքի: Այսպիսի հարաբերություններում ձևավորված բարոյական ու էթիկական չափանիշներն են պատճառներից մեկն այն բանի, որ

այսօրվա մարդը հիմնականում պատրաստ չէ հավատալու մարդկության ավանդույթներին խորթ և մարդկությանը թշնամի ուժի գոյությանը: Առավել ևս, որ այդ ուժի կազմած ծրագիրն առասպելի կամ բացարձակ անիրականանալի ուտոպիայի տպավորություն է թողնում: Բացի սրանից, այս խնդրում ծանրակշիռ դեր ունեն քարոզչական և այլևայլ մեթոդներով (պատիժներ, հասարակությունից օտարում, անձի հոգեկանի վրա ճնշում գործադրելու զանազան ձևեր) մարդու մտածելակերպն ու վարքագիծը ծրագրված և կառավարելի դարձնելու խնդրում արդեն առկա ձեռքբերումները, որոնք և լայնորեն իրականացվում-կիրառվում են:

Ողբերգական զավեշտ. հարյուրամյակներ առաջ, համարյա համատարած անգրագիտության պայմաններում, նշված կառույցը կարողացել է օտար ժողովուրդներին ստրկացնելու և ոչնչացնելու գաղափարախոսությունը քարոզել հենց այդ ժողովուրդներին և անասելի հաջողության հասնել, իսկ այժմ էլ, համարյա համատարած գրագիտության պայմաններում, օգտագործելով համամարդկային գիտատեխնիկական նվաճումները, կարողանում է նույնը կատարել արդեն ուսյալ համարվողների նկատմամբ: Այսինքն՝ նա կարողացել ու կարողանում է «ուղեղների լվացմամբ» իր ենթակայության տակ պահել և իր նպատակներին ծառայեցնել թե՛ անգրագետներին և թե՛ ուսյալներին:

Հազարամյակների հետևողական աշխատանքի արդյունքում ավերիչ ուժին հաջողվել է մարդկանց զգալի զանգվածի մտածելակերպում հոգեբանական պատնեշ կառուցել և իր կամակատարը դարձնել: Դա արդյունք է այն բանի, որ Աստվածաշնչի հեղինակներն ուրիշ ժողովուրդներին բնաջնջելու և նրանց հարստություններին տիրանալու ծրագիրը, ինչպես նաև հրեաների բացառիկությունը ներկայացրել են հուդայականության սուրբ գրքում՝ Հին կտակարանում, և որպես կրոնական դոգմա պարտադրել հրեաներին, ինչը նրանց մեջ ձևավորել է արտոնյալ տիրակալի հոգեբանություն: Ազգայնամոլ հրեա հեղինակները գրել են նաև Նոր կտակարանը, որի հիմքում դրել են հեզությունը, աղքատությունը, աշխատանքի մերժումը, կուսությունը և մատուցել-պարտադրել են ուրիշ ժողովուրդներին, ինչը քրիստոնյաների մեջ ձևավորել է զիջողի, մահը փափագող ստրուկի հոգեբանություն:

Նոր կտակարանում նույնպես հրեաների բացառիկություն է քարոզվում, օրինակ, հրեաներն իբր աստված ու կիսաստվածներ են ծնում (Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Մովսես, կույս Մարիամ, Յովհաննես Մկրտիչ, Յիսուս Քրիստոս և հարյուրավոր այլ հրեաներ, իբր, երկնքում են ապրում և հավերժորեն այնտեղ են ապրելու, իսկ տիեզերքի կառավարչի պաշտոնը պարգևել են Յիսուս Քրիստոսին): Նրանք՝ հուդայականության հայրերը, կատարել են ևս մի համարձակ քայլ. Յին և Նոր կտակարանները նույն կազմի մեջ դնելով՝ միաձուլելով, քրիստոնյաների համար կրոնական դոգմա են դարձրել նաև հրեաների կրոնը (այստեղ անհրաժեշտ է նշել, որ իրականությանն ամենևին չի համապատասխանում այն, որ Յին կտակարանի հետևորդներին՝ հրեաներին, կոչում են հուդայականներ, իսկ Նոր կտակարանի հետևորդներին՝ քրիստոնյաներ, երբ այս երկու կտակարանների բովանդակությունից պարզորոշ հասկացվում է, որ բուն հուդայական կրոնը հենց այդ երկու կրոնների միասնությունն է: Ծփոթից խուսափելու համար, հրեաների կրոնը՝ հուդայականությունը և քրիստոնեությունը միասին, պետք է պայմանականորեն կոչել Շնորհաճուր հուդայականություն):

Փաստորեն, աշխարհակործան ծրագիրը մատուցվում է իբրև աստծո պատգամ: Իսկ դրանով ղեկավարվում են ոչ միայն հավատացյալները: Օրինակ, քրիստոնեություն ընդունած երկրների համար Յին ու Նոր կտակարանները համարյա սահմանադրության դեր են կատարում, երբ այդ երկրներում իրական հավատացյալների թիվը դժվար թե գերազանցի հինգ տոկոսը: Յուդայականության սուրբ գրքի՝ Աստվածաշնչի, իմա՝ դավադիր ուժի ծրագրի վրա իրենց ձեռքը դնելով, արդար ու ազնվորեն ծառայելու երդում են տալիս պետական պաշտոնյաները: Պատահական չէ, որ նրանց մեծամասնությունը Եհովայի ճաշակով թրծված անխիղճ կողոպտիչներ են դուրս գալիս և նրանց մեջ ազնիվ ու արդար մարդ գտնելու համար պետք է շատ երկար փնտրել:

Աշխարհին տիրանալու ցանկություն ունեցել են շատերը, այդ թվում՝ հռչակավոր անձինք, սակայն նրանք իրենց ցանկությունը գերեզման են տարել: Այսինքն՝ եթե անգամ նրանք այդպիսի ծրագիր էլ են կազմել, ապա այդ ծրագիրը նրանց մահվանից հե-

տո հիմնականում մոռացության է մատնվել: Բացարձակորեն այլ պատկեր ենք տեսնում դավադիր ուժի ու նրա ծրագրի առումով:

Փաստերի համադրումն ու գործընթացները ցույց են տալիս, որ այստեղ հաճախ արծարծվող դավադիր ուժը սիոնիզմն է, իսկ մարդակույ ծրագիրը՝ սիոնիզմի ծրագիրն է: Ավելի քան 2500 տարվա վաղեմության այդ ծրագիրը մեկ ու կես դար է, ինչ կոչվում է սիոնիզմի ծրագիր: Աստվածաշնչի հեղինակներն այդ նույն սիոնիզմի ծրագիրը միահյուսել-բաղելել են առասպելների և մշակութային այլ նյութերի հետ և այն դարձրել են դժվար ճանաչելի: Հայտնի է, որ Հին կտակարանում ամփոփված է սիոնիզմի բուն ծրագիրը, իսկ Նոր կտակարանում՝ այդ ծրագրի իրականացման տեխնոլոգիան ու մեխանիզմները: Այսինքն՝ սիոնիզմի ծրագիրը և նրա իրականացումը դարձրել են կրոնական դոգմա-պարտադրանք: Թերևս կրոնական դոգմա դարձնելն է պատճառն այն բանի, որ մարդկության պատմության մեջ սիոնիզմի գաղափարախոսությունն իր երկարակյացությամբ աննախադեպ է և իր ծայր աստիճան վտանգավորությամբ հանդերձ՝ առայժմ անխոցելի: Պատահական չէ, որ 1975-ի նոյեմբերի 10-ին **ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 30-րդ նստաշրջանն իր թիվ 3379 բանաձևում սիոնիզմը բնութագրել է որպես «ռասիզմի և ռասայական խտրականության ձև»**, նշելով նաև, **որ սիոնիստական գաղափարախոսությունը և քաղաքականությունը զատվում են այնպիսի վառ արտահայտված գծերով, ինչպիսիք են՝ ծայրահեղ ազգայնականությունը, ռասիզմն ու շովինիզմը** (Международный сионизм: история и политика, Москва, Наука, 1977, стр. 3): Հարմանք է հարուցում այն, որ կենսական կարևոր այսպիսի որոշում կայացնող կազմակերպությունը, դրանից 17 տարի անց (1992 թ.), արդեն ինքն է շրջանառության մեջ դնում էկոլոգիական շապիկ հագցրած սիոնիզմի ծրագիրը՝ «Կայուն զարգացում» հայեցակարգ անվամբ: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ թեպետ սիոնիզմի գաղափարախոսությունը ստեղծել են հրեա հեղինակները և միտված է աշխարհի ունեցվածքը հրեաների սեփականությունը դարձնելուն, սակայն ակնհայտ է, որ այդ գաղափարախոսությունը վարկաբեկում է այն հրեաներին, ովքեր մերժում ու դատապարտում են այդ հակաբնա-

կան ու հակամարդկային գաղափարախոսությունը: Նաև՝ պետք է սահմանազատել *հակասեմիտ* և *հակասիոնիստ* (*անտիսեմիտ* և *անտիսիոնիստ*) եզրերը (տերմինները), որոնք բացարձակորեն տարբեր իմաստ ունեն, այն առումով, որ սիոնիստական գաղափարախոսությունը դատապարտողին *հակասիոնիստի* փոխարեն անվանում են *հակասեմիտ*, այսինքն՝ սեմիտ ժողովուրդներին մերժող, ինչը բացարձակորեն չի համապատասխանում իրականությանը: Դա ուղղակի նրբորեն հորինված սուտ է, որը հատուկ արված է այն նպատակով, որպեսզի հրապարակումներում և բանավոր խոսքում սիոնիզմը դատապարտողը որակվի որպես սեմիտ ժողովուրդներին դատապարտող: Այսպիսի շփոթը հնարավորություն է տալիս, որ իրական սիոնիստները վայնասուն բարձրացնեն, ինչը որոշակիորեն խոչընդոտում է մարդկության այդ գարշելի չարիքի՝ սիոնիզմի լիովին չբացահայտման և դրան արժանի հակահարված տալու գործին:

Դավադիր ուժի՝ սիոնիզմի գաղափարախոսության կողմնակիցներն ու սրա թակարդն ընկած անձինք սովորաբար պնդում են, թե աստված ինչ ասել է՝ նույնությամբ գրվել է սուրբ գրքում՝ Աստվածաշնչում. «սենք միայն ղեկավարվում ենք նրա՝ Եհովա աստծո պատգամներով»: Իսկ թե ովքե՛ր են եղել Աստվածաշունչ գրողները, այնտեղ ի՛նչ է գրված և ի՛նչ «պատգամներ» են դրանք: Չարմանալի է, որ այս ամենը մարդկանց չի հետաքրքրում: Օրինակ, Աստվածաշնչում Եհովա աստծո անունից սիոնիստ հրեա հեղինակների հորինած այդ պատգամներով համայն մարդկությունը պետք է հնձվի հրեական, ավելի ձիշտ՝ սիոնական գերանդիով: Կրոնահոգեբանական վերը նշված հաշտեցումը սիոնիստների համար մի հրաշալի մանդատ է՝ աշխարհին տիրանալու գործընթացում:

Ինչպիսի հանդգնություն: Նպատակայնորեն հորինված առասպելները, հեքիաթները, երազում տեսած երազները, հիվանդագին գառանցանքները, իմա՝ սիոնիզմի ծրագիրը միաձուլելով գրականության, պոեզիայի, իրավունքի և այլ ոլորտի արժեքներին և աստվածաշնչյան սրբություններ անվամբ մատուցում են որպես բացարձակ ձմարտություն: Եվ ամենազարհուրելին՝ այդ հակաբնական ու հակամարդկային հորինվածքները դարձրել են կրոնական դոգմաներ և բազում ժողովուրդների համոզել են, թե աստծո

կամոք ձեր ոչնչացումը պետք է իրականացվի հրեաներիս ձեռքով, և դուք այս հարցում պարտավոր եք մեզ օգնել, քանզի այդպիսին է մեր աստված Եհովայի կամքը: Ամենևին չպետք է զարմանալ, որ ավետարաններում և ծեսերում քրիստոնեական կրոնի հետևորդները հաճախ անվանվում են՝ ոչխարներ, իսկ հրեաները՝ ժողովուրդների քահանաներ և ուսուցիչներ:

Քարոզչությունն այնպես է հյուսված, որ մարդկանց, գլխավորապես հավատացյալների համար առարկելու ոչինչ չի մնում: Պարզ է, ո՞ր հավատացյալի մտքով կանցնի հեզորեն չկատարել իր աստծո կամքը: Կամ քրիստոնեություն դավանողն արդյո՞ք անհրաժեշտ կհամարի կամ հնարավորություն ունի վերլուծել, ըմբռնել ու մեկնաբանել Աստվածաշնչում խորամանկորեն հյուսված թակարդը, որը կարելի է մահվան թավշյա թակարդ անվանել, քանզի այդտեղ հավատացյալը ցնորական վիճակում է և իրեն հոգսերից հեռու ու «պաշտպանված» է զգում:

Անտարակույս, ընտրված է ամենանրբագույն զենքը. սիոնիզմի ծրագիրը համամարդկային հոգևոր արժեքների հետ միաձուլելով՝ դարձրել են նաև դժվար ճանաչելի: Այնպես է հորինված, որ սիոնիստական ծրագիրը և դրա իրականացնողների իրական կերպարներն ու կատարած և կանխատեսվող ավերիչ գործերը մարդկանց մտապատկերում հեշտությամբ զուգորդվում են դիցառասպելաբանական պատումների կամ արկածային, ֆանտաստիկ սյուժեների և երևակայությունների հետ, հետևաբար և դրանք ստանում են հեքիաթաերազային մշուշապատ ուրվագծեր և, դժբախտաբար, լրջորեն չեն ընկալվում: Մոտավորապես այնպես, երբ մարդը, ասենք, կիսարթուն վիճակում կինոնկար է դիտում: Այդպիսի ընկալումները մարդկանց ներաշխարհում կարող են, այսպես կոչված, հոգեբանական մետամորֆոզ առաջացնել, որը, կախված անհատի զգայական ու երևակայական առանձնահատկություններից, հնարավոր է, որ դառնա անշրջելի:

Փաստորեն մարդկանց մտածելակերպում արհեստականորեն մուծվում են կեղծ ու ինքնակործան այնպիսի գաղափարներ, որոնք խոչընդոտում են մարդուն՝ ճանաչելու կյանքը և առօրյա կամ նույնիսկ օրհասական իրավիճակում դրսևորելու սեփական նախաձեռնություն:

Դավադիր ուժին՝ սիոնիզմին ճանաչելու հարցում լուրջ խոչընդոտ է նաև այն, որ բոլորիս ծանոթ ժողովուրդների դիցառասպելներում, հեքիաթներում, մշակութային այլևայլ ստեղծագործություններում ներկայացված բարի-արարող-աստվածային և չար-կործանարար-դիվային ուժերի հակադրությունում չարը միշտ պարտվում է: Այդտեղ չարը, շատ հաճախ իր անհագ, արյունարբու բնույթի և ավերման բնագրի պատճառով նաև դիմում է ինքնառչնչացման, երբ համոզվում է, որ բարուն հաղթելու հնարավորությունն արդեն սպառված է:

Նշված հակամարտություններում բարու ի վերջո հաղթելու լավատեսությունը հիշյալ մշակույթները կրող ժողովուրդների մտածելակերպում ստեղծել է նաև խաբուսիկ ինքնավստահության ստերեոտիպ՝ թե, միևնույն է, չարն ի վերջո կործանվելու է, հետևաբար՝ անհանգստանալու առիթ չկա: Եթե ասվածին ավելացնենք նաև այն, որ իրականում գործող մահասփյուռ ուժը մարդկանց մտապատկերում զուգորդվում է առասպելներից հայտնի և, ի վերջո, կործանման դատապարտված դևերի և այլ չար ուժերի հետ, ապա, հասկանալի է, որ այդ պարագայում իրական պատկերներն ու ընթացող գործողությունները մարդու մտապատկերում կարող են մշուշապատվել, խամրել և չընկալվել:

Իրականությունը ճիշտ ընկալելու, տվյալ դեպքում դավադիր ուժին՝ սիոնիզմին ճանաչելու խոչընդոտներից մեկն էլ այն է, որ հավաստի տեղեկություն և գիտելիք ունենալը դեռ բավարար չէ ճշմարտությունը կեղծիքից զատելու համար: Ցանկացած տեղեկություն կամ պատկեր մարդը կկարողանա խորությամբ ընկալել և իմաստավորել միայն այն դեպքում, եթե դա համապատասխանում է նրա ներաշխարհի զգայական ու ենթագիտակցական տարողունակությանը: Այլապես ստացած տեղեկությունը (պատկերը) կարող է միայն մակերեսայնորեն ընկալվել և հեշտությամբ մարվելով՝ նույնիսկ հետք չթողնել: Իրողությունը գնահատելու և ճիշտ եզրահանգման գալու համար գլխավորը, թերևս, մարդու մեջ ձևավորված աշխարհայացքն է: Այլապես, անգամ ծանրակշիռ փաստերի առկայությունն ու առատությունը չեն կարող երաշխիք հանդիսանալ խնդրի բուն էությունը գիտակցելուն: Դժբախտաբար, քննարկվող խնդրի վրա արգելք (տաբու) է դրված կամ այն

ներկայացվում է հակառակ իմաստով:

Իրականացվող դավադիր ծրագրի մասին խորհելիս միշտ առկախվում է հետևյալ հարցը՝ չէ՞ որ Երկրագնդի ավերումը կասկածելի է դարձնում նաև նշված ուժի՝ սիոնիստների և նրանց պաշտպանյալների ապագան: Միաժամանակ հիշում եմ հայտնի բնախույզներից մեկի, եթե չեմ սխալվում, Բերնհարդ Գրոթմեկի աշխատություններում Աստվածաշնչի հետ առնչվող Թղթերից բերված, Աշխարհի ավարտը նկարագրող մի դրվագ: Ըստ այդմ, աստված (հրեաների ազգային աստված Եհովան) Աշխարհը հրով ու ջրով այրելուց ու հեղեղելուց հետո, երբ տեսնում է, որ որոշ բույսեր նույնիսկ նշված հրեշային կաթսայում դեռ կենսունակ են, իր մոտ է կանչում մայր մորեխին և հրամայում է՝ բազմանալ: Մայր մորեխը բազմանում ու ամբողջ Երկրագունդը լցնում է մորեխներով: Եհովան մորեխներին կարգադրում է՝ խժռել այն ամենը, ինչը հրով ու ջրով ինքը չի կարողացել ոչնչացնել: Եվ այդպես էլ կատարվում է: Չեմ հիշում, թե այդտեղ ինչպես է նկարագրվում մորեխների վախճանը, սակայն հաշվի առնելով նրանց ախորժակը և հետագայում կերի սպասվելիք բացակայությունը, կարելի է նաև գուշակել, որ նրանք ինքնառչնչացման են հասել կանիբալիզմի ճանապարհով՝ միմյանց խժռելով:

Ակնհայտ է, որ այժմ համաշխարհային զարգացումներում վճռորոշ դեր են կատարում հիմնականում մի քանի Միջազգային կազմակերպություններ (Միավորված ազգերի կազմակերպություն, Եվրախորհուրդ, Եվրամիություն, Համաշխարհային բանկ, Առևտրի համաշխարհային կազմակերպություն), իսկ ազգային պետությունների դերն աստիճանաբար երկրորդականանում է: Շատերիս թվում է, թե այդ կազմակերպությունները միմյանց նկատմամբ հակասություններ ու գաղափարական տարաձայնություններ ունեն, ինչն իբրև թե հնարավորություն է ստեղծում մարդկության համար համեմատաբար հավասարակշռված առաջընթացի: Սակայն կյանքը ցույց է տալիս, որ այժմ այդ կազմակերպությունների վարած քաղաքականությունը համարյա ընդհանրական է և փաստորեն նպաստում է սիոնիզմի ծրագրի իրականացմանը, ինչից ելնելով կարելի է գալ այն եզրակացությանը, որ դրանք ինչ-ինչ մեխանիզմներով ղեկավարվում են նույն ուժի կողմից՝ այն ուժի, որը հայտնի է

սիոնիզմ անվամբ և որի չարամիտ նպատակներն ամրագրված են Աստվածաշնչում:

* * *

Անկախության հռչակումից հետո մի շարք հեղինակավոր Միջազգային կազմակերպություններ Հայաստանի Հանրապետության իշխանավորներին առաջարկեցին որդեգրել համաշխարհային չափանիշներ, որոնցից ամենագլխավորը՝ երկրի Սահմանադրությունը, օրենքները, տնտեսությունը և մյուս ոլորտները համապատասխանեցնել «Կայուն զարգացում» հայեցակարգի դրույթներին: Այդ «վեհ» նպատակներին հասնելու և Հայաստանի Հանրապետության տնտեսությունը համաշխարհային չափանիշներին համապատասխանեցնելու համար նրանք խոստանում էին դրամաշնորհային և վարկային ներդրումներ կատարել: Առաջարկված չափանիշներից են՝ պետական կառավարման համակարգի ապակենտրոնացումը, պետական բոլոր ոլորտների կառավարման համակարգերի ապակենտրոնացումը, բոլոր ոլորտների և գույքի վաճառքը (ապապետականացում-սեփականաշնորհում), պետության դերի թուլացումը, արտադրության ու շուկայի ազատականացումը և անդամակցություն համաշխարհային շուկային, ապրանքների գների և ծառայությունների սակագների բարձրացումը, մահապատժի վերացումը, առանձնակի վերաբերմունք խղճի ազատությանը, այսինքն՝ վտանգավոր գաղափարներ քարոզող կազմակերպությունների գործունեության թույլտվություն, մեղմ վերաբերմունք հայրենադավության, թմրամոլության, անբարո բարքերի նկատմամբ և այլն:

Ստորև հակիրճ կխոսվի վարկերի, «Կայուն զարգացում» հայեցակարգի, դրամաշնորհների և պետության դերի թուլացման մասին:

**Եւ դուն շատ ազգերու փոխ պիտի տաս,
բայց դուն փոխ մի առներ, քանզի դուն
շատ ազգերու վրայ պիտի տիրես:**

Եհովա աստծո պատգամը՝ Իսրայելին

ՎԱՐԿԵՐ

Վարկերով մարդկանց հարստահարելը, կեղեքելը, ունեզրկելը և այդ միջոցով նրանց վրա իշխելը հնագույն պատմություն ունի: Օրինակ, ավելի քան 2000-ամյա վաղեմության հուդայաքրիստոնեության սուրբ գրքում՝ Աստվածաշնչում, իմա՝ սիոնիզմի գաղափարախոսության մատյանում, հրեաներին ուսուցանվում է. «Ստակը կամ ուտելիքը եւ կամ որեւէ բան որ **շահով** կրնայ տրուիլ, **քու եղբորդ շահով մի՛ տար: Օտարականէն շահ ա՛ն, բայց քու եղբորմէ՛ն շահ մի՛ առներ**» (ընդգծումը՝ Յ.Ս.) (Բ Օրինաց 23:19-20):

Այս քաղվածքից պարզ երևում է, որ վարկերի միջոցով մարդկությանը կողոպտելու մեթոդաբանությունը և դրա բազմադարյա փորձով արդարացված լինելն Աստվածաշնչի հեղինակներին լավագույնս ծանոթ են եղել: Հակառակ պարագայում, դժվար թե նրանք համարձակվեին վարկային քաղաքականությունն անթաքույց ամրագրել սիոնիզմի ծրագրում:

Բերված քաղվածքում՝ հարազատների-արյունակիցների հաշվին հարստանալու արգելքը հավանաբար հիմնավորվում է նրանով, որ ազգակիցներին կեղեքելով հարստանալն ի վերջո կբերի իր իսկ ազգի թուլացմանն ու քայքայմանը: Միայն այս դոգման արդեն բավարար չափով ցույց է տալիս, թե Աստվածաշունչը հրեա ժողովրդին համախմբելու և ուրիշ ժողովուրդների հաշվին ապրելու, նյութապես հարստացնելու խնդրում ինչ մեծ դեր ունի:

Հրեաների օրենքների ու կանոնների սուրբ գիրքը՝ Թալմուդը (Թալմուդը բխում է Աստվածաշնչից՝ Հին կտակարանից), նույնպես հրեաներին հորդորում-պարտադրում է վաշխառությամբ և այլազան եղանակներով անխղճորեն կողոպտել ու աղքատացնել օտար

ժողովուրդներին, նրանց զրկել ապրուստի միջոցներից՝ տիրանալ նրանց ունեցվածքին: Օրինակ, Թալմուդի օրենքներից մեկում ասվում է. «Երբ հրեան ակումին (ոչ հրեային) պահում է իր ճիրաններում (խալդերենում կա «մա'արուֆիյա» արտահայտություն, այսինքն՝ ձանկերից բաց չթողնելով քերթել, անվերջ-անդադար խաբել), այդ ժամանակ ևս մեկ ուրիշ հրեայի թույլատրվում է գնալ այդ ակումի մոտ ու նրան պարտք տալ և իր հերթին նրան այնպես խաբել, որ ակումը վերջնականապես զրկվի իր բոլոր փողերից: Սրա հիմնավորումն այն է, որ ակումի փողերը ոչ ոքի չպատկանող բարիք են, հետևաբար և հրեաներից առաջինը, ով որ ցանկանա, նա էլ իրավունք ունի տիրանալու այդ բարիքին» (Г. Климов, Божий народ, Лекции по высшей социологии, Краснодар, 1999, стр. 333-334):

Այս աշխատությունից բերենք օտար ժողովուրդներին վաշխառությամբ, գողությամբ ու խաբեությամբ հարստահարելու թալմուդյան նաև հետևյալ օրենքները:

«Խոլմագոեդի (հրեաների տոն, որը համընկնում է գարնան և աշնան հետ) ժամանակ, ցանկացած առևտուր արգելվում է, սակայն թույլատրվում է ակումի հետ վաշխառություն անել, քանի որ ակումի հետ վաշխառություն անելը միշտ էլ հաճելի է Տեր Աստծուն» /Օրախ - Խաիմ, 539 : 13/ (էջ 331):

«Եթե հրեան ակումի հետ գործ է վարում և մի այլ հրեա գա և խաբի ակումին, նույնն է թե ինչպես՝ թերաչափելով, թերակշռելով կամ թերհաշվարկով, ապա այդ երկու հրեաները պետք է կիսեն Եհովայի կողմից ի վերուստ ուղարկված շահույթը» (էջ 335):

«Երբ հրեան պարտքը հետ վերադարձնելու համար ակումի մոտ է ուղարկում սուրհանդակին, իսկ վերջինս գալով նկատում է, որ պարտքի մասին ակումը մոռացել է, ապա նա այդ փողերը պետք է վերադարձնի այն հրեային, որը նրան ուղարկել է, և ուղարկվածին (միջնորդին) չի կարելի որևէ պատրվակով արդարանալ, թե դրանով (այսինքն՝ ակումին փող վճարելով) նա ցանկացել է մեծարել Աստծո Անունը, որպեսզի ակումները ասեն, որ այնուամենայնիվ հրեաները օրինավոր մարդիկ են: Նման բան նա կարող էր անել միայն իր սեփական փողերով, իսկ նա ուրիշի փողերը ցրիվ տալու ոչ մի իրավունք չունի» (էջ 335):

«Հրեային խստիվ արգելվում է մերձավորին խաբել և արդեն խաբեություն է համարվում, եթե նա զրկում է նրան արժողության մեկ վեցերորդ մասից: Ով խաբել է իր մերձավորին, նա պարտավոր է ամբողջը հետ վերադարձնել: Ինքնին հասկանալի է, որ այս ամենն իրավացի է հրեաների դեպքում: Հրեային թույլատրվում է խաբել ակումին, և նա պարտավոր չէ ակումին վերադարձնել այն, որքանով որ նրան խաբել է, քանի որ Սուրբ գրքում գրված է. «Մի խաբեք ձեր մերձավոր եղբորը», իսկ ակումները մեր եղբայրները չեն, այլ ինչպես նշվում է. նրանք շներից էլ վատն են» (էջ 335):

«Երբ հրեան մեկ այլ հրեայի տունն է վարձում, այդ դեպքում թույլատրվում է, որ երրորդ հրեան գա և թանկ վճարելով, քան առաջին վարձակալը, տունը վարձի իր համար: Իսկ երբ տան տերը ակում է, այդ դեպքում թող անիծվի նա, ում մեղքով ակումը մեծ շահույթ կստանա» (էջ 336):

«Պարտականություն է համարվում կատարել այն ամենը, ինչ որ (հրեա) հիվանդը գրել է իր կտակում, բացառությամբ այն դեպքերի, երբ նա կարգադրել է մեղք համարվող որևէ գործ կատարել: Օրինակ, եթե հիվանդը իր կտակում որևէ բան է նվիրել ակումին, ապա այդ չպետք է կատարվի, քանզի ինչպես մենք կհամոզվենք հետագայում, ակումին որևէ բան նվիրելը մեծ մեղք է համարվում» (էջ 336):

«Շնչավոր կամ անշունչ առարկաներ գտած հրեան պարտավոր է դրանք վերադարձնել տիրոջը: Ինքնըստինքյան հասկանալի է, որ խոսքը բացառապես վերաբերում է որևէ բան կորցրած հրեային: Իսկ եթե գտածոն պատկանում է ակումին, ապա այդ ժամանակ հրեան ոչ միայն պարտավոր չէ վերադարձնել, այլև հակառակը, ծանր մեղք է համարվում ինչ-որ բան հետ վերադարձնել ակումին: Գտածը վերադարձնելն արվում է միայն այն նպատակով, որպեսզի ակումներն ասեն. «Հրեաները օրինավոր մարդիկ են» (էջ 336):

«Երբ հրեան ակումին փող է պարտք և այդ ակումը մահացել է, ապա այդ դեպքում հրեային արգելվում է փողը վերադարձնել նրա ժառանգորդներին: Հասկանալի է, այն պայմանով, որ ոչ մի ուրիշ ակում չգիտի այն մասին, որ հրեան մահացածին պարտք է: Բայց երբ թեկուզ մեկ ակում գիտի այդ պարտքի մասին, ապա հրեան պարտավոր է փողը վճարել ժառանգորդներին, որպեսզի ակումները չասեն. «Հրեաները խաբեբաներ են» (էջ 337):

«Երբ հրեան ինչ-որ բան է վաճառել ակումին և վերցրել է ավելին, քան հարկավոր է, իսկ հետո ակումի մոտ է գալիս մեկ ուրիշ հրեա և ասում է, որ գնվածը չարժե նրա համար վճարված գումարը, որի պատճառով ակումը գնվածը ետ է վերադարձնում, ապա երկրորդ հրեան առաջինին պարտավոր է վճարել իրական արժեքի և այս գնի տարբերությունը, որով վաճառվել է ակումին: Ճիշտ նույնպես, երբ հրեան ակումին բարձր տոկոսներով պարտքով փող է տվել և հայտնվում է երկրորդ հրեան՝ ակումին ավելի ցածր տոկոսներով փող առաջարկելով, ապա (երկրորդ) հրեան համարվում է ռաշա, այսինքն՝ անաստված և պարտավոր է առաջին հրեային փոխհատուցել այն հավելյալ գումարը, որը նա կկորզեր ակումից. եթե նա փողը չվերցներ երկրորդ հրեայից» (էջ 339):

«Յրեային արգելվում է որևէ բան տալ կամ գործ ունենալ ակումի հետ տոներից որևէ մեկից 3 օր առաջ, որովհետև այդպիսով ակումը կարող է հաճույք ստանալ հենց տոնին: Սակայն բարձր տոկոսներով ակումին պարտքով գումար տալը թույլատրվում է, քանի որ վճարման ժամանակ սպառնացող անհաջողությունից (ձախորդությունից)՝ հաճույքը նրա ճաշակով չի լինի» (էջ 345):

«Յրեային խստիվ արգելվում է մեկ այլ հրեայի տոկոսով (առանձնապես բարձր տոկոսներով) պարտք տալը: Եվ ընդհակառակը, թույլատրվում է ակումին կամ ակում դարձած հրեային վաշխառուական տոկոսներով պարտք տալ, քանի որ Սուրբ Գրքում ասվում է. «Դու պարտավոր ես քեզ հետ միասին ապրեցնելու քո եղբորը»: Սակայն ակումը եղբայր չի համարվում» (էջ 350):

«Երբ հրեայի ընտանիքի անդամը մահանում է, որի համար պետք է սգալ, ապա այդ դեպքում նրան չի կարելի 7 օր հեռանալ իր տնից և նույնիսկ (իր տանը) չի կարելի շահ ստանալու գործարք կատարել: Սակայն, երբ ակումի հետ վաշխառություն անելու հնարավորություն է ընձեռված, ապա այդ դեպքում նրան թույլատրվում է տնից դուրս գալ և սուգը ընդհատել, քանզի դա բարի գործ է, որը չի կարելի բաց թողնել, քանի որ ապագայում կարող է և այդպիսի առիթ չլինի» (էջ 355):

Թալմուդյան այս օրենքներից պարզ երևում է, որ հրեաների մեջ օտար ժողովուրդների նկատմամբ ներարկվում է արհամարհանք,

զգվանք, անհանդուրժողականություն, ատելություն, աստվածահաճո գործ է համարվում օտարին խաբելը, կողոպտելը, ապրուստից զրկելը, օտար ժողովուրդների ունեցվածքը համարվում է հրեաների սեփականությունը, հրեաներին թուլատրվում է խախտել անգամ իրենց համար սուրբ համարվող շաբաթօրյա կարգը կամ ընդհատել սուգը, եթե օտարին խաբելու, կողոպտելու հնարավորություն կա: Միաժամանակ Թալմուդը հրեային խստիվ արգելում է խաբել, հարստահարել մեկ այլ հրեայի և հրեաներին պարտադրում է լինել համերաշխ, միմյանց աջակցող:

Ինչպես տեսնում ենք, Աստվածաշունչը (Հին կտակարան, Հնգամատյան, Թորա), որպես հրեաների սահմանադրություն, սահմանում է հիմնարար դրույթներ, իսկ նրանց համար նույնպես սուրբ համարվող Թալմուդը այդ դրույթներն արդեն ներկայացնում է օրենքների, ենթաօրենսդրական ակտերի ու կանոնների տեսքով:

Հավանաբար շատերին կարող է հետաքրքրել այն հարցը, թե վաշխառությամբ ու խաբեությամբ ապրելու, օտար ժողովուրդների նկատմամբ անմար ու հիվանդագին ատելություն դրսևորելու, ոհմակային գործելակերպ որդեգրելու աստվածաշնչյան և թալմուդյան հորդորներն արդյոք որևէ հետք թողե՞լ են հրեա ժողովրդի նկարագրում ու գործելակերպում, թե՞ ոչ: Գուցեև այս հարցի պատասխան համարվի հրեաների ու հրեականության վերաբերյալ տարբեր ժամանակներում ապրած որոշ մտավորականների, պետական ու կրոնական գործիչների կարծիքները:

Բերենք դրանցից մի քանիսը:

Փիլիսոփա Թովմա Ակվինացի (1225-1274 թթ.). «Հրեաներին չպետք է թույլ տալ ունենալու այն, **ինչ վաշխառության միջոցով նրանք ձեռք են բերել ուրիշներից:** Լավ կլիներ, եթե նրանք աշխատեին, ազնիվ աշխատանքով վաստակեին իրենց ապրուստը, քանզի ոչինչ չանելով նրանք է՛լ ավելի շահամուլ են դառնում»:

Աբաթ Տրիտհամիյ Վյուրցբուրգցի (1462-1516 թթ.). «Հասկանալի է, որ **հրեական վաշխառությունից** զգվանքը զարգանում է վերևից ու ներքևից: **Ես հավանություն եմ տալիս՝ օրենքով հրեական վաշխառությամբ շահագործումից ու խաբեությունից մարդկանց պաշտպանելուն:** Արդյո՞ք հնարավոր

է, որ օտար եկվորները մեզ ղեկավարեն ոչ թե իրենց քաջության կամ վեհ առաքինության շնորհիվ, այլ միայն՝ իրենց ողորմելի փողերի միջոցով: Արդյո՞ք այդ ժողովուրդը կհամարձակվի (շարունակել) անպատիժ ձարպակալել գյուղացու և արհեստավորների քրտինքի հաշվին»:

Էրազմ Ռոտերդամցի (1468-1536 թթ.). «Աղքատների նկատմամբ հրեաների կողմից իրականացվող այս ինչ կողոպուտ ու կեղեքում է, որը աղքատներն այլևս չեն կարող տանել... Աստված ողորմեա նրանց: **Յրեական վաշխառուներն արագորեն արմատավորվում են նույնիսկ փոքր գյուղերում,** և եթե նրանք 5 ֆլորին պարտք են տալիս, ապա վեց անգամ ավելի գրավ են պահանջում: **Նրանք տոկոսներից տոկոսներ են գանձում,** այնպես որ, աղքատը կորցնում է այն ամենը, ինչ ուներ»:

Մարտին Լյութեր (1483-1546 թթ., եկեղեցական բարեփոխիչ). «Յրեաների ճչացող սրտերը կրքոտ ցանկությամբ հույս են կապում այն օրվա հետ, երբ նրանք կկարողանան մեզ հետ վարվել այնպես, ինչպես Պարսկաստանում վարվեցին Էսֆիրի ժամանակներում: Եվ հրեաների համար ինչքան հարագատ է Էսֆիրի գիրքը, որը արդարացնում է նրանց արյունարբությունը, վրիժառությունը և ավազակային ախորժակի հույսերը: Արևը երբեք չի ջերմացրել (լուսավորել) ավելի արյունարբու և վրիժառու մի ժողովրդի, որը փայփայում է այլադավաններին խեղդելու և ոչնչացնելու գաղափարը: ... Արևի տակ այլ մարդկանցից որևէ մեկը այդքան ազահ չէ, քան նրանք են, որոնք կան և կլինեն ազահ, **ինչ որ ցուցանում է նրանց վաշխառուական անիծված Աստվածը:** Նրանք իրենց հանգստացնում են նրանով, որ երբ կգա Մեսիան, ապա նա կհավաքի ու նրանց միջև կբաժանի ամբողջ աշխարհի ոսկին ու արծաթը: ... Պետք է ոչնչացվեն նրանց աղոթագրքերն ու Թալմուդի գրքերը, որոնք նրանց ուսուցանում են անաստվածություն, սուտ, սրբապղծություն: Երիտասարդ հրեաներին պետք է տալ բրիչներ, կացիմներ, բահեր, ձախարակներ, իլիկներ, որպեսզի նրանք իրենց հացը վաստակեն քրտինքը դեմքին: ... Իշխաններն ու օրենսդիրները նստած են ու խռմփում են իրենց բաց բերաններով և հրեաներին հնարավորություն են տալիս վերցնել, գողանալ, կողոպտել այն, ինչ իրենց պետք է... Նրանք հրեական վաշխա-

ռությանը հնարավորություն են տալիս, որպեսզի իրենց ամեն ինչը ներծծեն և պլոկեն (հանեն) իրենց մաշկը: Նրանք իրենց դարձրել են մուրացկան-ուզվոր, իրենց իսկ փողերի համար: Հրեաները վերցնում են մեր փողերն ու ունեցվածքը և դառնում են մեր սեփական երկրի տերերը»:

Կլիմենտ 8-րդ Պապ (1592-1605 թթ. կաթոլիկ եկեղեցու առաջնորդ). «Ամբողջ աշխարհը տառապում է հրեաների վաշխառությունից, նրանց մենաշնորհից և ուռձացումներից: Նրանց պատճառով բազմաթիվ դժբախտ մարդիկ չքավորության գիրկն են ընկել, գլխավորապես գյուղացի աշխատավորներն ու չքավորները»:

Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ Մեծ (1712-1786 թթ.). «Պետությունների ղեկավարները (տիրակալները) չպետք է հրեաներին իրենց տեսադաշտից բաց թողնեն: Նրանք պետք է կանխեն հրեաների ներթափանցումը մեծածախ առևտրի մեջ և հետևեն բնակչությունից նրանց վերցրած վաշխին (տոկոսին) և որտեղ էլ որ լինի, զրկեն նրանց անազնիվ արարքի ծրագիր կազմելու հնարավորությունից: Առևտրականներին ոչ մի բան այնքան չի ձնշում, որքան անթույլատրելի այն շահույթը, որ ունենում են հրեաները»:

Մարիա-Թերեզա (ավստրիական կայսրուհի, 1717-1780 թթ.). «Երկրի ներսում ես չգիտեմ մեկ այլ չարաբաստիկ ժանտախտ, ինչպիսին այդ ռասան է, որը ժողովրդին կողոպտում է՝ խորամանկությամբ, վաշխառությամբ, փող պարտք տալով»:

Լորդ Յարրինգտոն (Անգլիայի Լորդերի պալատի անդամ, 1858 թ. հուլիսի 12-ին արտասանած ճառից). «Հրեաները ամբողջ աշխարհի մեծագույն փոխտվողներն են, որի հետևանքով աշխարհի ազգերը տնքում են ուժից վեր ծանր հարկային համակարգի և ազգային պարտքերի տակ» (ընդգծումը՝ Յ.Ս.) (Г. Климов, Красная кабала, Лекции по высшей социологии, Краснодар, 2000, стр. 388-393):

Փաստորեն 13-19-րդ դարերի որոշ մտավորականների, պետական ու կրոնական գործիչների ընկալմամբ, հրեաներն ազաի ու շահամոլ վաշխառուներ են, ապրում են խաբեբայությամբ, հրա-

Ժարվում են ազնիվ աշխատանքից, վերցնում են օտար ժողովուրդների փողերն ու ունեցվածքը և դառնում նրանց սեփական երկրի տերերը, ամբողջ աշխարհը տառապում է հրեաների վաշխառությունից, իշխանավորները հրեաներին պետք է զրկեն անազնիվ արարքի ծրագիր կազմելու հնարավորությունից, հրեաները պետք է հրաժարվեն իրենց կրոնից ու գործելակերպից և ապրեն ազնիվ աշխատանքով:

Մի պահ ընդունենք, թե իբր, հրեաների (եբրայեցիների) մասին ոչ հրեաների կարծիքները կողմնակալ են: Այս առումով տեսնենք, թե հրեաների վաշխառության, հրեականության և, ընդհանրապես, հրեաների հոգեկերտվածքի ու էության մասին ինչ կարծիք է ունեցել, օրինակ, ազգությամբ հրեա, երկկողմանի՝ ռաբբինների թոռ, աշխարհահռչակ Կարլ Մարքսը (Մորդեհայ Լևի): Նա իր «Հրեական հարցի շուրջ» աշխատության մեջ, վերլուծելով Բրունո Բաուերի «Հրեական հարցը» գիրքը, գրում է. **«Ո՞րն է հրեականության աշխարհիկ հիմքը՝ դա գործնական պահանջն ու շահախնդրությունն է: Ո՞րն է հրեայի աշխարհիկ պաշտամունքը՝ դա չարչիությունն է: Ո՞րն է նրա աշխարհիկ աստվածը՝ դա փողն է: Հասարակության այնպիսի կազմակերպումը, որ կվերացներ չարչիության նախադրյալները, հետևաբար և չարչիության հնարավորությունը, անհնար կդարձներ հրեայի գոյությունը:** Նրա կրոնական գիտակցությունը հասարակության իրական, կենսատու օղում կցնդեր ինչպես տրտում մառախուղ: **Հրեաների ազատագրումն (իր կրոնից) վերջնական իմաստով մարդկության ազատագրումն է հրեականությունից:**

Դժվար է ասել՝ դիտավորյալ չեն պատասխանել պարզաբանման ենթակա հարցին, թե՞ չեն հասկացել գրվածը կամ անկարող են հաշվարկներ կատարել: Մյուս կողմից, բնակչությանը արդեն չի զարմացնում իշխանավորների կողմից դիմում-բողոքներին չպատասխանելը կամ զավեշտական պատասխան տալը: Այդ գործելակերպը, հավանաբար, նույնպես մաս է կազմում դրսից թելադրվող այն հրահանգների, որոնցով ղեկավարվում են ՀՀ իշխանավորները: Այստեղ առավել կարևորն այն է, որ բնագավառի պետական լիազորված անձը հավաստում է, որ *2040 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքը կգրոյանա*: Միայն պարզ չէ, թե պարտքը վերադարձնելու ի՞նչ միջոցներ կան, երբ 2001 թվականին նույնիսկ վարկային տոկոսները վճարելու համար ՀՀ կառավարությունը նոր վարկեր էր վերցնում:

2009 թվականին Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքն արդեն կազմում էր 2,97 մլրդ ԱՄՆ դոլար, երբ 2008 թվականին այն 1,57 մլրդ դոլար էր: Ինչպես տեսնում ենք, մեկ տարվա ընթացքում համարյա կրկնապատկվել է ՀՀ վարկային բեռը: 2010 թվականին ՀՀ արտաքին պարտքը արդեն կազմում էր մոտ 4 մլրդ ԱՄՆ դոլար: Այժմ՝ 2011 թ. արդեն խոսվում է միայն մեկ կազմակերպությունից՝ «Եվրասիա» հիմնադրամից 2,2 մլրդ դոլար վարկ վերցնելու մասին, ինչն իր հերթին, անտարակույս, պաշտոնյաների անձնական ունեցվածքը կմեծացնի, իսկ վարկատուն առավել կմոտենա իր նպատակին, սակայն հայ ժողովրդին առավել վատթար վիճակի կհասցնի: Նաև ասվում է, որ այս տարի՝ 2011 թվականին, միայն վերցրած վարկերի սպասարկման ծախսերը փակելու նպատակով ՀՀ կառավարությունը 119 մլն դոլարի վարկ է վերցնելու:

Այս ի՞նչ խաղ է մի ամբողջ ժողովրդի հետ: Ժողովրդի անունից ու նրա հաշվին ասում ու անում են այն, ինչ ցանկանում են: ՀՀ իշխանության առաջին ղեմքերը Միջազգային կոչված կազմակերպությունների կողմից հատկացված դրամաշնորհների ու վարկերի միջոցներով ուռձացրել են բանկային համակարգը և այնպիսի կարգ են սահմանել, որ բանկիր կոչված առանձին անհատներ՝ միմյանց փող փոխանցելով, հարստանում են, իսկ երկրի «շնչառությունն» աստիճանաբար հարմարեցվում է վերցրած ու վերցվելիք վարկե-

րի հետ: Արդյո՞ք ՀՀ իշխանավորները չեն նկատում, որ այժմ ՀՀ յուրաքանչյուր նորածին, լույս աշխարհ գալով, արդեն հայտնվում է ավելի քան 1000 ԱՄՆ դոլար պարտքի տակ, տոկոսները չհաշված:

Միայն պետական կոչված վարկերը չէ, որ հայ ժողովրդի համար պատուհաս են դարձել: Բանկային մորեխների երամը (Հայաստանի Հանրապետությունում այժմ գործում է 21 բանկ և 34 վարկային կազմակերպություն և սրանց բազում մասնաճյուղեր) արդեն մտել է ՀՀ քաղաքացիների, գլխավորապես՝ գյուղացիների տները և, դժբախտաբար, նրանց այստեղից դուրս շարտող չկա, հակառակը՝ բանկերն ու վարկային կազմակերպություններն են նրանց իրենց սեփական տնից ու հայրենիքից զրկում:

Վարկ վերցնելու պատճառով՝ տան գույքը, տունը, հողը կորցնելը և Հայրենիքից հեռանալը կարծես սովորական է դառնում: Այս առումով բերեն «Հետք» շաբաթաթերթում (թիվ 42 (56), 2010 թ.) տպված հոդվածներից որոշ քաղվածքներ: «Վարկառուները խուսափում են ներկայանալ դատական նիստերին» հոդվածում ասվում է. «Հայտնի է, որ վարկային կազմակերպությունները հիմնականում համագործակցում են վարկատուների խմբի հետ, որտեղ ոչ միայն երաշխավորում են մեկը մյուսին, այլև պատասխանատվություն են կրում մեկը մյուսի համար: Եթե որևէ մեկը չի կարողանում մարել իր վարկային պարտավորությունը, դա պետք է անեն խմբի մյուս անդամները, այլապես **դատական գործ հարուցելիս արգելանք է դրվում խմբի բոլոր անդամների գույքի և դրամական միջոցների վրա...** Վարկառուների հիմնական մասն այդպես էլ ոչ մի անգամ մանրակրկիտ չի ուսումնասիրում սեփական ձեռքով ստորագրած վարկային պայմանագրի բոլոր կետերը (ընդգծումը՝ Հ.Ս.): Իսկ այդ կետերից մեկի համաձայն՝ ժամկետանց պարտավորության առաջացման պահից մինչև ժամկետանց գումարների մարումը, ուշացման յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տուժանք՝ ժամկետանց գումարի 0,1 տոկոսի չափով»: Այս քաղվածքը համարյա ընդհանրական է վարկատու-վարկառու հարաբերություններում: Այս հոդվածում նկարագրվում է Գյումրի քաղաքի բնակիչ, երկրաշարժից տուժած, թիվ 204/065 տնակ հասցեում գրանցված, երկու երեխաների մայր Նարինե Ունույանի անելանելի վիճակի մասին: Նա և չորս անձ «Ակբա-կրեդիտ ագրիկոլ

բանկ» ՓԲԸ Ծիրակի մասնաձյուղից 1600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի վարկ են վերցրել՝ 589 օր մարման ժամկետով, տարեկան 20 տոկոս տոկոսադրույքով: Այդ գումարի մարման ամբողջ պատասխանատվությունը կրում է Ն. Ունուայանը, որը հող ու անասուն է գրավ դրել և պատկերացում չունի, թե որքան գումար է կազմելու պայմանագրով առաջացած տուժանքը: 2010 թ. նոյեմբերի 20-ին Ծիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննելով բանկի հայցը, վճիռ է կայացրել՝ Ն. Ունուայանից և մյուս չորս անձանցից 1385 դոլարին (1120 դոլարը՝ որպես վարկի մայր գումար, 110 դոլարը՝ կուտակված տոկոսագումար, 155 դոլարը՝ վարկային պայմանագրով նախատեսված տույժի գումար) համարժեք դրամ բռնագանձելու մասին: Նարինեն դատական նիստերին չի մասնակցել՝ մտածելով, թե այդպիսով ժամանակ է շահում»:

«Հետք»-ի նույն համարում տպված «Բանկը դիմում է դատարան...» հոդվածում կարդում ենք. «Նոր Արմավիր գյուղի 90 տոկոսը վարկերի տակ է... Վարկային սարդոստայնում հայտնված գյուղացիների մի մասը, չկարողանալով մարել վարկային գումարները, հայտնվել է դատարանում, նրանց դեմ վճիռներ են կայացվել: Եվ հիմա ցանկացած պահի աճուրդով կարող են վաճառել գյուղացիներին՝ արգելանքի տակ գտնվող գույքն ու հողերը... Տղամարդիկ լքում են գյուղը և մեկնում արտագնա աշխատանքի: Ծատերը գյուղից դուրս են գալիս հենց վարկերի պատճառով՝ հուսալով, որ վաստակած գումարով կկարողանան կատարել բանկային պարտավորությունները: ...Արայիկ Սերոբյանը մեկն է այն վարկառուներից, որ վարկի գումարը մարելու համար արտագնա աշխատանքի է մեկնել Ռուսաստան: «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ»-ից 2008 թ. աշնանը վերցրել է 1 մլն դրամ (այդ ժամանակ՝ 3000 դոլար), որպեսզի զբաղվի գյուղատնտեսությամբ: Վարկի գումարը պետք է փակեին 2 տարվա ընթացքում, սակայն Սերոբյանները 2009 թ. սահմանվածից քիչ են կատարել բանկային պարտավորությունները և «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ»-ը դիմել է դատարան... Թեև դատարանն արդեն վճիռ է կայացրել հօգուտ բանկի՝ բռնագրավելով 2773 դոլարին համարժեք դրամ, սակայն վճիռի հրապարակումից հետո էլ բանկը տոկոսներ է ավելացնում յուրաքանչյուր, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերի համար, 0,1 տոկոսի չափով... 2 տարվա ընթացքում բանկին արդեն վճարել են մոտ 1 մլն 200 հազար դրամ..., սակայն 500 հազար դրամ էլ դեռ պարտք ունեն... Արայիկ Սերոբյանի կինը՝ Էմման, կասկածում է բանկի կողմից տոկոսների հաշվարկման ճշտությանը: Պատմեց, որ մի անգամ վարկի գումարը և տոկոսադրույքները փակելու համար բանկին վճարել է 60 հազար դրամ, սակայն, երբ հաջորդ ամիս գնացել է բանկ, պարզել է, որ իր վճարած գումարը միայն տոկոսադրույքի համար են հաշվել, իսկ մայր գումարը

թողել են անփոփոխ: «Ամեն անգամ տոկոս փակելուց հարցնում են, թե ինչքան է մնացել, աշխատակիցներն ասում են՝ ձեր վարկը դուրս գրված վարկ է, հաշվապահից հարցրեք: Թե ինչ է դուրս գրված վարկը, չեն հասկանում, ինձ էլ չեն բացատրում: Մոտենում են հաշվապահին, նախորդ ամսվա պարտքից ավելի գումար է ասում, այն դեպքում, երբ վճարումներ են արել: Ասում են՝ բա ո՞ր է իմ նախորդ վճարումը, ասում է՝ դրանով տոկոս ենք փակել, հետո նորից տոկոս է եկել, ու նախորդ ամսվա համեմատ գումարն ավելացել է: Բանկը էմմային երբեք չի տրամադրել վարկի գումարի և տոկոսադրույքների քաղվածքը... Նոր Արմավիրի դժվարին դրության մեջ հայտնված վարկառու գյուղացիները վարկի գումարները փակելու համար հաճախ դիմում են դեռևս վարկ չունեցող համագյուղացիների օգնությանը՝ վարկերը վերցնելով նրանց անունով: 2008 թ. աշնանը համագյուղացի Սկրտիչ Սկրտչյանը խնդրել է Գևորգ Մանուկյանին, որ նա վարկ վերցնի և տա իրեն: Նա «Ակբա-կրեդիտ ազրիկոլ բանկ»-ից վերցրել է 1 մլն դրամ և ամբողջությամբ տվել համագյուղացուն: Մ. Սկրտչյանը վարկերի պատճառով կորցրել էր տունը և ամիսներ անց, հոգեկան ապրումների պատճառով, սրտի կաթվածից մահացել: Այժմ ամբողջ վարկը մնացել է Գևորգի վրա... Բանկը գումարի բռնագանձման պահանջով դիմել է դատարան: Այս դեպքում էլ դատարանը բանկի հայցը բավարարել է: Գևորգն ասում է, որ իրենք տեղյակ չեն եղել իրենց դեմ կայացված վճռի մասին: Անակնկալ ձևով իմացել են բանկի ու ԴԱՀԿ-ի աշխատակիցներից: Դատարանից ծանուցագիր չեն ստացել, չունեն նաև իրենց դեմ կայացված վճռի օրինակը: Մոտ մեկ տարի է՝ ԴԱՀԿ-ն արգելանք է դրել ընտանիքի տնամերձի և 5000 քմ սեփականաշնորհված հողի վրա... Կձիռը կայացվել է 3511 դոլարի չափով, բայց դրանից հետո այդ գումարը հասել է 5000 դոլարի: Հիմա բանկը ամսական 90 դոլար տոկոս է հաշվում...»:

«Հետք»-ի նույն համարում տպված՝ «Խումբ կազմիր և ստացիր վարկդ» հոդվածում կարդում ենք. «Գյուղում «Ակբա-կրեդիտ ազրիկոլ բանկ»-ից օգտվող 60 վարկառու ունենք,- ասում է Ծիրակի տարածաշրջանի Գոգհովիտ գյուղի համայնքապետ Արտուշ Մանուկյանը,- ես կասեի, որ էս բանկը եղածների մեջ համեմատաբար նորմալ կառույց է... Բայց «Ֆինքա»-ի դեպքում հենց վերցրած ամսին պիտի տոկոս փակես... Ասենք վերցրել ես 500 դոլար, դու փոխանակ գումարը լիովին դնես շրջանառության մեջ, սկսում ես մտածել տոկոսները փակելու մասին: Էս կազմակերպությունից հեշտ վերցնում ես, բայց շատ դժվար ես պարտքդ փակում, որովհետև որ հաշվարկում ես, տոկոսադրույքը գալիս է 30 տոկոս: Իսկ արդյո՞ք Աշոցքի պես աղքատ տարածաշրջանում գյուղատնտեսությունը 30 տոկոս արդյունավետություն է ապահովում: Իհարկե ոչ...»:

Նույն տեղում՝ «Գյուղացիներն ունեզրկվում են» հոդվածում ասվում է. «Այս տարվա ընթացքում Ալավերդու 5 բանկերի կողմից վարկառուների դեմ բռնագանձման պահանջով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվել է 116 հայց, որից 97-ը՝ «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի կողմից: Այս բանկի բռնագանձման հայցերի արդյունքում դատարանում որպես պատասխանողներ ներգրավված են 485 հոգի, որոնց թվում՝ նաև վարկառուների երաշխավորողները: Վերջիններս պայմանագրով բանկի առաջ ստանձնել են պարտավորություն՝ մարել վարկառուի կողմից չմարված վարկի մնացորդը: Ուստի, նրանք դատարանում կրում են վարկառուին հավասար պատասխանատվություն»:

Յոդվածում նաև նշվում է, որ «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ»-ը գործում է հանրապետության 745 համայնքներում, բանկի Ալավերդու մասնաճյուղի կողմից 4073 վարկառուների տրամադրվել է 1,95 մլրդ դրամ, տոկոսադրույքը՝ 24 տոկոս...

Մեկ այլ՝ «Գյուղի 70 տոկոսն այսօր վարկի տակ է, այդ 70 տոկոսն էլ կործանվում է» հոդվածում Արմավիրի մարզի Գրիբոյեդովի համայնքապետ Սոս Գաբրիելյանը գրում է. «Մեր գյուղացիները վարկ են վերցնում հիմնականում «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ»-ից, «Կամուրջ», «Արեգակ», «Ֆինքա» վարկային կազմակերպություններից: Չնչին գումարներ են տալիս, դրանով ի՞նչ ներդրում պիտի գյուղացին անի... Վարկային կազմակերպություն կա, որ 32 տոկոսով է վարկ տալիս... Շատերը բանկերի տոկոսները փակելու համար գնում մասնավորից են 10 տոկոսով (ամսական, այսինքն՝ տարեկան 120 տոկոս,- Յ.Ս.) գումար վերցնում, որ ժամկետանցի տակ չընկնեն»:

«Յետք» շաբաթաթերթում տպված (թիվ 9, 23-29.12.2010 թ.) «Ամանորի նախաշեմին կարող են անտուն մնալ» հոդվածում ասվում է, որ Արագածավան գյուղի բնակիչ Արմեն Խաչատրյանը 2008 թ. «ՎՏԲ-Յայաստան» բանկից 1 մլն 6 հազար դրամ վերցրած վարկն իր տոկոսներով, տույժ-տուգանքներով 2010 թ. արդեն կազմել է 2 մլն 740 հազար դրամ: Իսկ ոստիկանության Թալինի բաժանմունքի Արագածավանի թաղային տեսուչին ուղղված թղթակցի այն հարցին, թե ինչու է ոստիկանության տեսուչը ԴԱՅԿ-ի աշխատակիցների փոխարեն զբաղվում գյուղացիներին տներից վտարման գործերով, տեսուչ Շանթ Կարապետյանը պատասխանել է, որ այդ կապակցությամբ ԴԱՅԿ-ից և բանկից իրենց գրություններ են ուղարկվում: ««ՎՏԲ-Յայաստան» բանկը գրություն է մեզ ուղարկել, գոյություն ունի Կառավարության որոշում, դրա համար էլ մենք իրավունք ունենք անձին տնից վտարելու», - ասել է տեսուչը:

«Կապիտալ» բիզնես օրաթերթը (17.12.2010 թ.) գրում է, որ 2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին Յայաստանի Յանրապետության արդարադա-

տության նախարարության դատական ակտերի կատարումն ապահովող ծառայությունում առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների օգտին բռնագանձման պահանջով հարուցվել է 15,5 հազար կատարողական վարույթ: Վարույթներում բռնագանձման ենթակա գումարի չափը կազմել է 9,5 մլրդ դրամ:

Վարկատուների չհագեցող ախորժակի առումով, բերենք «Գլաձոր» ունիվերսալ վարկային կազմակերպության վարկային պայմանագրից հետևյալը. «4.1. Պայմանագրով սահմանված մարման վերջնաժամկետում Վարկառուի կողմից Վարկը չմարելու դեպքում, վարկի տարեկան անվանական տոկոսադրույքի հաշվարկումը դադարում է և ժամկետանց վարկի մնացորդի նկատմամբ՝ կետանցի օրվանից մինչև վարկի լրիվ մարման օրը, վարկային կազմակերպությունը սկսում է հաշվարկել տույժ՝ օրական 0,5 %-ի չափով:

4.2. Պայմանագրով սահմանված ժամկետում վարկի գումարի տոկոսները չվճարելու դեպքում, ուշացման յուրաքանչյուր օրվա համար վարկառուն վարկային կազմակերպությանը վճարում է տույժ՝ վարկի չվճարված տոկոսի գումարի օրական 0,5 %-ի չափով:

4.3. Պայմանագրի անբաժան մասը կազմող վարկի մարման ժամանակացույցով նախատեսված վարկային պարտավորությունների խախտման յուրաքանչյուր դեպքի համար վարկառուն վարկային կազմակերպությանը վճարում է տուգանք՝ 30000 ՀՀ դրամի չափով»:

Փաստորեն, ժամկետանց վարկի մնացորդի տարեկան տոկոսադրույքը կազմում է 180 տոկոս, նույնքան էլ՝ չվճարված տոկոսներից առաջացած գումարի համար: 180 տոկոս էլ՝ վարկի գումարի ժամկետանց տոկոսների համար (այսպիսի անպատկառ դաժանության ու մարդատյացության դրսևորման գուցե հնարավոր է հանդիպել միայն անապատում հայտնված մարդկանց, այլ ոչ ինքնիշխան երկրի բնակչության նկատմամբ): Այստեղ պետք է նկատի ունենալ, որ շատ են այն դեպքերը, երբ վարկառուներն ընդհանրապես մոծումներ չեն կատարել և ժամկետանց վարկի մնացորդը վերցրած նույն մայր գումարն է:

Հրապարակումներից և վարկառուների հետ ունեցած զրույցներից հայտնի է դառնում, որ տոկոսադրույքները 24-26, իսկ երբեմն էլ 30-32 տոկոսի են հասնում: Եթե դրան հավելենք ժամկետանց

գումարների համար սահմանված օրական 0,1 տոկոսը, այսինքն՝ տարեկան 36 տոկոսը, տույժերը, դատական ծախսերը և մյուս գանձումները (դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը վարկային պարտավորությունները ժամանակին չկատարած քաղաքացիներից լրացուցիչ գումար է գանձում...), ապա պարզ կդառնա, թե գլխավորապես աղքատ ու չքավոր ընտանիքները վերցրած վարկերը մարելու ինչ հեռանկար ունեն և նրանց ինչ է սպասվում: Դժբախտաբար, գործընթացի կասեցմանն ուղղված որևէ գործողություն և պետական պաշտոնյաների կողմից նույնիսկ անհանգստության դրսևորում չկա՝ ինչից կարելի է գալ այն եզրահանգման, որ ՀՀ իշխանություններն այս խնդրում իրենց համաձայնությունը հաստատել են միջազգային և մյուս վարկատու կազմակերպությունների հետ, գուցե նաև այն պայմանով, որ իրենք էլ իրենց հարազատների ու բարեկամների անուններով մասնավոր բանկեր և վարկային կազմակերպություններ ստեղծեն և մասնակից լինեն սեփական ժողովրդի հարստահարման գործին: Գուցե դա է պատճառը, որ դատական ատյանները, ի հակադրություն մյուս ոլորտներին վերաբերող իրենց կեցվածքի, վարկատուների հայցերը բավարարելու մեծ հաջողություն են գրանցել: Նրանք անգամ դատարանի որոշումը քաղաքացիներին չեն ներկայացնում: Այսպիսի գործելակերպը համընդհանուր երևույթ է դառնում: Դատարանի վճռի մասին քաղաքացիներին տեղյակ չպահելը որոշ դատավորներ մասնավոր գրույցներում «հիմնավորում» են նրանով, որ քաղաքացիները բռնագրավվելիք գույքը չթաքցնեն: Բացի այդ, վարկառուներին ահաբեկում են ոչ միայն հարկադիր կատարման ծառայության աշխատակիցները, այլև տեղի ոստիկանությունն ու գյուղական խորհրդի պաշտոնյաները, ինչպես տեսանք՝ Կառավարության որոշմանը համապատասխան: Բնակչության հարստահարման, նրա ապագայի նկատմամբ ՀՀ կառավարության, մեղմ ասած, անտարբերությունն առավել ցայտուն է դառնում նաև այն փաստով, որ ստեղծել է սեփական բնակչությանը հայրենագրկելուն՝ Ռուսաստան տեղափոխելուն նպաստող ծառայություններ (ըստ հրապարակումների, վերջին 9 տարիների ընթացքում Ռուսաստանի քաղաքացի է դարձել 275 հազար հայ): Գուցե սա էլ վարկային կամ մեկ այլ գործարքի նախապայման է...

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հարստահարումն ու անօգնական վիճակը կարծես շարունակությունն է հարյուրավոր տարիներ առաջ եղած իրավիճակի: Այս առումով Աբաթ Տրիտհամիյ Կյուրքբուրգու վերը բերված այն խոսքը, թե «հրեական վաշխառությունից զզվանքը զարգանում է վերևից ու ներքևից... և արդյո՞ք այդ ժողովուրդը կհամարձակվի անպատիժ ճարպակալել գյուղացու և արհեստավորների քրտինքի հաշվին», կարծում են, ՀՀ այսօրվա իրավիճակը նկատի ունենալով, թերևս ներկայացվի հետևյալ բովանդակությամբ. թե՛ սիոնիզմի կառույցների և տեղական պաշտոնյաների կողմից իրականացվող վաշխառությունից զզվանքը զարգանում է միայն ներքևից, իսկ այդ հանցագործությունը, դժբախտաբար, միայն զզվանքով է սահմանափակվում, քանզի հայ ժողովուրդն այդ ամենը դեռևս խորությամբ չի գիտակցում, որպեսզի կարողանա արժանի հակահարված տա իր հարստահարողներին և հողից ու հայրենիքից զրկողներին:

Նաև՝ արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում տիրող իրավիճակին բնորոշ չէ էրազմ Ռոտերդամցու այն միտքը, թե «աղքատների նկատմամբ հրեաների կողմից իրականացվող այս ինչ կողոպուտ ու կեղեքում է, որը աղքատները այլևս չեն կարող տանել... Աստված ողորմեա նրանց: Հրեական վաշխառուները արագորեն արմատավորվում են նույնիսկ փոքր գյուղերում, և եթե նրանք 5 Ֆլորին պարտք են տալիս, ապա վեց անգամ ավելի գրավ են պահանջում: Նրանք տոկոսներից տոկոսներ են գանձում, այնպես որ աղքատը կորցնում է այն ամենը, ինչ ուներ»: Նկատի ունենանք, որ միայն «Ակրա-կրեդիտ ագրիկոլ բանկ»-ը գործում է Հայաստանի Հանրապետության 745 համայնքներում, երբ ՀՀ-ում կա ընդամենը մոտ 1000 համայնք: Այստեղ նաև պետք է ասվի, որ ՀՀ բնակչությունը, գլխավորապես աղքատ խավը, չունենալով որևէ հենարան, ստիպված է իր հույսը կապել հրեաների աստծո հետ, իսկ դրա հետևանքները բոլորին է հայտնի: Այս խնդրում ՀՀ իշխանություններն անթերի ու ջանասիրաբար օգնում են մարդկանց: Ամեն ինչ անում են, որպեսզի կյանքը տեղափոխվի կրոնի դաշտ, իդեալական պայմաններ են ստեղծում նորանոր եկեղեցիներ կառուցելու և հայ ժողովրդի մեջ՝ անդրշիրիմում ապահով ապրելու հույսն անմար պահելու համար: Այստեղ նպատակահարմար է նորից մեջբերել ապաշնորհի ու կաշառառու

իշխանավորներին վերաբերող Մարտին Լյութերի մոտ 500 տարի առաջ արտահայտած հետևյալ միտքը. «Իշխաններն ու օրենսդիրները նստած են ու խռմփում են իրենց բաց բերաններով և հրեաներին հնարավորություն են տալիս վերցնել, գողանալ, կողոպտել այն, ինչ իրենց պետք է... Նրանք հրեական վաշխառությանը հնարավորություն են տալիս, որպեսզի իրենց ամեն ինչը ներծծեն և պլոկեն իրենց մաշկը: Նրանք իրենց դարձրել են մուրացկան-ուզվոր, իրենց իսկ փողերի համար: Հրեաները վերցնում են մեր փողերն ու ունեցվածքը և դառնում են մեր սեփական երկրի տերերը»:

Ինչպես ականատես ենք, պետական պաշտոնյաներն ինքնակամ՝ առանց ՀՀ քաղաքացիների կարծիքը հարցնելու, իսկ հաճախ էլ արհամարհելով ու անտեսելով իրականացվող վարկային քաղաքականության դեմ արտահայտված տեսակետներն ու կարծիքները, նորանոր վարկեր են վերցնում: Նաև արդեն զանգվածային բնույթ է կրում անհատական վարկ վերցնելը: Տասնյակ բանկեր և նրանց մասնաձյուղեր ֆիզիկական անձանց բազմապիսի վարկեր են հատկացնում: Օրինակ՝ հիպոթեքային վարկ՝ բնակարան գնելու և անշարժ գույք ձեռք բերելու, վերանորոգման և կառուցման վարկ՝ բնակարան կառուցելու և նորոգելու, ավտովարկավորում՝ մեքենաներ գնելու, սպառողական վարկ՝ առանց վարկ վերցնելու պատճառը ներկայացնելու, բիզնեսվարկ, լիզինգ վարկ, ուսման վարկ, ծամփորդության վարկ, արձակուրդային վարկ և այլն: Ամենուրեք վարկային գրավը նույնն է՝ շարժական ու անշարժ ունեցվածք: Գլխավորապես ծայրահեղ աղքատ խավը վարկը վերցնում է առանց հաշվարկներ կատարելու, թե արդյո՞ք հետագայում կկարողանա մարել այդ վարկը: Առանձին զրույցներից հասկացվում է, որ ծայրահեղ աղքատությունը մարդուն բերել է նրան, որ նա պատրաստ է ցանկացած պայմանով պարտքով փող վերցնել՝ միայն թե այդ փողը տվող լինի: Պատահական չէ, որ դատական ատյաններում միմյանց բախվող կողմերը հիմնականում անհամեմատելի են. վարկատուները նրբագույնս տիրապետում են խնդրի էությանը, իսկ վարկառուներից շատերը միայն դատական միստերին չմասնակցելով են «լուծում» իրենց խնդիրը:

Ծատերը կարծում էին, որ ժամանակին գլխավոր բանկիրը դառնալով ՀՀ վարչապետ, կվերականգնի արդյունաբերությունը,

պայմաններ կստեղծի գյուղատնտեսության զարգացման համար, տնտեսությունն ու սոցիալական իրավիճակը կբարելավի, զերծ կմնա պետական նորանոր վարկեր վերցնելուց կամ այդ հարցում չափավորություն կդրսևորի, բնակչությանը՝ գլխավորապես ոլորտից քիչ տեղեկացվածներին, հեռու կպահի վարկ վերցնելուց: Սակայն կյանքը ցույց է տալիս, որ նրա միակ հավատամքը բանկային համակարգն է: Իսկ պետության ու բնակչության նկատմամբ նրա ցուցաբերած «հոգատարությունը» թերևս լավագույնս նկատելի է գլխավորապես այն բանից, որ, օրինակ, պաշտպանության, առողջապահության, գյուղատնտեսության և այլ նախարարություններում քահանայի հաստիք է սահմանել, մեռելոցի օրերը պետականորեն համարել է ոչ աշխատանքային և տարբեր միջոցառումներում, մոռանալով իր աշխարհիկ պաշտոնը, իրեն հոգևորականի կեցվածքով է պահում:

Հայաստանի Հանրապետությունում պետական պաշտոնյաների վերցրած, այսպես կոչված, պետական վարկերը և դրամատների (բանկերի) ու վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ քաղաքացիներին տրվող վարկերի գլխավոր նպատակը նույնն է՝ աղքատացնել պետությանը և անհատներին: Այսինքն՝ նաև պետական պաշտոնյաների գործունեության հետևանքով ունեզրկվում է թե՛ պետությունը, թե՛ ժողովուրդը, ինչն ակնհայտորեն պայմաններ է ստեղծում Հայոց պետականության կորստի և հայ ժողովրդի փոշիացման համար: Ահա թե ինչպիսի դրախտային պայմաններում է իր մահաբեր քաղաքականությունն իրականացնում հազարամյակների ավանդույթ ունեցող վարկային սարդոստայնը:

Այս տխուր առումով, տեղին է բերել հետևյալ զավեշտը:

Ճաշարանում շատ էժան ուտելիք պատվիրած հաճախորդին ասում են, թե այստեղ կարելի է վերցնել ցանկացած ուտելիք ու խմիչք և չվճարել: Ճաշարանից դուրս գալիս՝ թանկարժեք ուտելիքով ու խմիչքով հագեցած հաճախորդին ներկայացնում են մի խոշոր գումարով հաշիվ: Նա զայրացած բողոքում է, թե իրեն ասվել է, որ սպասարկումը ձրի է, և ապա, ներկայացված գումարով կարող են ձաշել հարյուրավոր, նույնիսկ՝ հազարավոր մարդիկ: Նրան պատասխանում են, թե քեզ համար սպասարկումը իրոք ձրի է, քո փոխարեն հաշիվը կփակեն քո թոռներն ու ծոռները, իսկ ներկայացվածը քո պապի քառասուն տարի առաջ մեկ անգամ կերած

ուտելիքի արժեքն է, որի մեծ լինելու վերաբերյալ քո զարմանքից հասկացվում է, որ դու պարտքի տոկոսների, տոկոսների տոկոսների և տույժերի մասին ընդհանրապես պատկերացում չունես:

Ինչպես ցույց են տալիս անցյալի և այսօրվա փորձն ու իրողությունը և դրա զարգացման ուրվագծվող միտումները, եթե հիմնովին չփոխվի վարկային քաղաքականությունը և չվերանան այժմ դեռևս գործող վարկեր տալու դաժան ու սպանիչ նախապայմանները, ինչպես նաև բարձր տոկոսները, տուգանքները, պատժամիջոցները, ապա վերցրած յուրաքանչյուր նոր վարկ մեզ ավելի ու ավելի կհեռացնի մեր ազգային նպատակներից (նույնը կարելի է ասել ցանկացած ազգային պետության առումով): Առայժմ, քանի դեռ վարկային ոլորտում տիրում է կողոպուտը, պետք է ձեռնպահ մնալ վարկեր վերցնելուց՝ լինի դա պետական թե անհատական:

Աշխարհում վարվող վարկային քաղաքականությունը, բարեբախտաբար, ընդհանրական չէ: Այս առումով հուսադրող է իսլամական որոշ բանկերի հատկացրած անտոկոս վարկերը, և գլխավորապես՝ ներպետական, օրինակ, Չինաստանում, Ճապոնիայում վարկեր հատկացնող բանկերի ու կազմակերպությունների գործունեությունը, երբ վարկատուն իր շահը ստանում է վարկառուի տնտեսության զարգացումից առաջացած շահույթից:

Այժմ փորձենք հասկանալ, թե Հայաստանի Հանրապետությանը դրամաշնորհներ ու վարկեր տալու և բարոյական աջակցություն ցուցաբերելու դիմաց ինչ են պահանջում, օրինակ, Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ը, Եվրոմիությունը, Գլոբալ էկոլոգիական ֆոնդը և Միջազգային մյուս հեղինակավոր կազմակերպությունները: Դիտարկումները ցույց են տալիս, որ այս կազմակերպությունների պահանջները նույնն են՝ կենտրոնախույս կառավարման համակարգ, պետական ունեցվածքի ապապետականացում, արդյունաբերության փաստացի մերժում, օտարերկրյա ներդրումների խրախուսում, ապակենտրոնացում՝ գիտության, կրթության, առողջապահության, մշակույթի, տրանսպորտի, արդյունաբերության և մյուս ոլորտներում, ավանդական չափանիշներից հրաժարում, անցնել բարոյաէթիկական նոր չափանիշներ ձևավորող ուսումնա-

կան համակարգի, հայրենասիրության ու ազգային գիտակցության մերժում, խղճի ազատության անվան տակ՝ ազատություն տալ վտանգավոր գաղափարների գործունեությանը, պետության կրոնականացում, ազատ շուկայական հարաբերություններ, անդամակցություն Համաշխարհային շուկային, մահապատժի վերացում, ապրանքների գների, սպասարկման և ծառայությունների սակագների բարձրացում, կոմունալ, առողջապահության, կրթության ոլորտների ինքնաֆինանսավորում, կարիքավորներին հատկացվող դոտացիաների սահմանափակում և վերացում, կառավարության, նախարարների, տնօրենների ծառայողական ֆոնդերի վերացում, որդեգրել Գլոբալացման գործընթացը, կառավարվել «Կայուն զարգացում» հայեցակարգով և այլն:

Բնականորեն հարց է առաջանում, թե այդ ինչպե՞ս է, որ տարբեր առաքելությամբ ստեղծված Միջազգային կազմակերպությունները միևնույն նպատակն են հետապնդում և նրանց գործունեությունը փոխկապակցված մի շղթա է հիշեցնում:

Պարզից էլ պարզ է, որ գործում է՝ **ծրագիր-մեթոդ-ֆինանս-հրահանգ-կատարող** շղթան: Անշուշտ, կատարողներն ակամա մենք ենք՝ մեր իշխանավորների գլխավորությամբ: Իսկ այդ շղթայի մյուս հանգույցներում իշխում են հազարամյակների փորձը, ինչպես նաև հզոր գիտահետազոտական ինստիտուտներում և այլևայլ կենտրոններում մշակված, փորձարարական փուլ անցած, տվյալ ազգի առանձնահատկությունները ներառող՝ ավերման կատարելագործված մեթոդները: Ինչպես ժառանգական արհեստավարժության հասած կենդանասպանը, նույնիսկ նկատելի վերք չառաջացնելով, կարողանում է աննշան թվացող մեկ հարվածով ամենահզոր կենդանուն անդամալույծ դարձնել ու տապալել, այդպես էլ մեր երկրի մշակույթի, տնտեսության, կառավարման և այլ ոլորտներն ավերվում են «բարեփոխումների» առաջարկված, իսկ հետո նաև՝ պարտադրված, առաջին հայացքից մեղմ, անվնաս, նույնիսկ օգտակար թվացող մեթոդներով:

Երկրագնդի բնակչության մեծամասնությունն արդեն հեծում է վարկային ավերիչ քաղաքականության պատճառով: Այդ քաղաքականությունն է, որ աստիճանաբար թուլացնում է վարկառու երկր-

ների կառավարման, գիտական, տնտեսական, մշակութային և այլ հզորությունները, հետևաբար, վարկառու երկրներին նաև զրկում է վարկը մարելու հնարավորություններից: Եվ այս ամենը կատարվել ու կատարվում է բացահայտորեն: Չարմանալի է, որ առ այսօր գործընթացը կասեցնող դիմադրության ճակատ դեռ չի ստեղծվել:

Դրամաշնորհների ու վարկերի միջոցով իրականացվող քաղաքականությունն իր հետևանքներով հիշեցնում է լամեխուզա կոչված միջատի «առաքելությունը»: Մտնելով մրջնանոց, լամեխուզան թույլ է տալիս, որպեսզի մրջյունները ճաշակեն իր գեղձերի արտադրած, մահաբեր տոքսին պարունակող քաղցրահամ նյութը: Ուսումնասիրողների վկայությամբ, մրջյունները սիրով են հյուրընկալում այդ միջատին և մեծ բավականությամբ ճաշակում նրա արտադրանքը, ինչը կարծես թե խրախճանքի է վերածվում: Մրջյուններն օրեր անց աննկատելիորեն տկարանում, հյուծվում ու մահանում են «դավին անտեղյակ»: Մրջնանոցը մարելուց հետո, լամեխուզան ուտում է մրջյունների դրած ձվերի մի մասը, իսկ մյուս մասն օգտագործում որպես պարարտ միջավայր՝ արդեն սեփական սերունդն աճեցնելու համար: Այնուհետև լամեխուզան անցնում է հաջորդ մրջնանոց...

Ուրիշ ազգերին կողոպտելու և նրանց տիրելու, ոչնչացնելու գաղափարախոսության վրա խարսխված վարկային ինստիտուտն այժմ այնպիսի ահռելի ծավալների է գերաճել, որ արդեն ուղղորդում է աշխարհի բազում երկրների տնտեսությունը, նրանց ներքին և արտաքին քաղաքականությունը և, ընդհանրապես, քամում-կլանում է համաշխարհային եկամտի զգալի զանգվածը: Կարծես իրականանում է հրեաներին ուղղված իրենց Եհովա աստծո՝ «ազգերուն կաթը պիտի ծծես» պատգամ-կարգադրությունը, կամ՝ նույն աստծո հետևյալ կանխատեսումը. «Ու բոլոր շրջակայ ազգերուն ստացուածքը ոսկի ու արծաթ ու հանդերձներ հոն (Երուսաղեմում՝ Յ.Ս.) պիտի հաւաքուին» (Չաքարիայ 14:14):

Աստվածաշունչը գրող հրեա հեղինակները նաև լավագույնս հասկացել են, որ ուրիշ ժողովուրդների ունեցվածքին տիրանալով և նրանց պարտքերի տակ պահելով՝ հեշտությամբ կարելի է տիրանալ այդ ժողովուրդների նաև իշխանական լծակներին, և

ի վերջո՝ նրանց երկրների տերը դառնալ: Սիոնիզմի կնքահայր, առասպելական դաժան ու չարամիտ հերոս, հրեաների և քրիստոնյաների աստված, Յիսուս Քրիստոսի հայր Եհովան հրեաներին հորդորում է, իմա՝ պարտադրում է. **«Եւ դուն շատ ազգերու փոխ պիտի տաս, բայց դուն փոխ մի առներ, քանզի դուն շատ ազգերու վրայ պիտի տիրես»** (Բ Օրինաց 15:6): Մեծ դժբախտություն է, որ պետական և անհատական վարկ վերցնողները, կամ այս դոգմայի և գործնականում իրականացվող կողոպուտի ու ավերածությունների մասին պատկերացում չունեն կամ էլ այն ընդունում են որպես ծիծաղելի, անիրականանալի մի զավեշտական անհեթեթություն: Սակայն իրականությունը ցույց է տալիս, որ այն արդեն մոտենում է իր ավարտին՝ իր նպատակների կատարմանը: Ինչպես տեսնում ենք, Յայաստանի Յանրապետությունում վերջին քսան տարիներին իրականացված վարկային քաղաքականությունը բերեց նրան, որ աղքատացավ թե՛ պետությունը, թե՛ ժողովուրդը և, դրա հետ մեկտեղ, երկուսն էլ տնքում են վարկային պարտքերի տակ: Վերը նկարագրվեց, որ հայ ժողովրդին ունեզրկելու գործում, վաշխառու և արյան ծարավ բանկային ոհմակիմ (ուր համախմբված են նույն նպատակ հետապնդող բանկերը, այսինքն՝ այստեղ տիրում է նույն կարգը, ինչը համաշխարհային շուկայում է, երբ արյունակից արտոնյալներն են վարում իրականացվող և իրականացվելիք քաղաքականությունը) աջակցում է մեր իշխանությունը: Ստեղծված օրենքներին համապատասխան՝ նաև մահակներով զինված հայ ոստիկան-զինվորները պարտավորությունները չկատարած վարկառուներից վերցնում են նրանց գույքը, տունը, հողը և հանձնում վարկատուներին և ամենևին հաշվի չի առնվում անգամ այն, որ վարկառուն չի կարողացել մարել վարկը, օրինակ, բացարձակ անբարենպաստ կլիմայական պայմանների պատճառով: Այսօրվա կատարվածը թերևս կարելի է համարել մեզ սպասվող մանրակերտն այն իրավիճակի, երբ Յամաշխարհային կառավարության բանակն ու ոստիկանությունը վարկերը չմարած պետությունների բնակիչներին կպարտադրի հեռանալ իրենց երկրներից կամ որպես ստրուկներ ծառայել նրանց, ովքեր արտոնյալ են համարվում:

Չամաշխարհային բանկի և սրա արյունակից մյուս բանկերի ու կազմակերպությունների կողմից հատկացվող դրամաշնորհի ու վարկի միասնությունը բուրումնալի նեկտարով օծված կերպասի մեջ քողարկված երկսայր սուր է: Վա՛յ այն երկրին ու ընտանիքին, որ կընդունի այդ սրի դանդաղորեն տանջամահ անող հարվածը:

«ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ»

«Կայուն զարգացում» հայեցակարգը, որպես մարդկության առաջընթացի հուսալի ուղի, ընդունվել է ՄԱԿ-ի անդամ երկրների 1992 թվականին Ռիո դե Ժանեյրոյում կայացած Համաժողովում: Այս Հայեցակարգը հայտնի է նաև «21-րդ դարի օրակարգ», «Օրակարգ 21», «Կայուն մարդկային զարգացում», «Էկոլոգիական կայուն զարգացում», «Հասարակության կայուն զարգացում», «Մարդկության կայուն զարգացում», «Մարդկային ներուժի կայուն զարգացում», «Քաղաքակրթության կայուն զարգացում» և այլ անուններով:

Այս հայեցակարգի ստեղծումը վերագրվում է տիկին Գրո Բրունթլանդին, ով 1983-87 թվականներին նախագահել է ՄԱԿ-ի Ծրջակա միջավայրի և Զարգացման համաշխարհային Հանձնաժողովը: Այս տիկնոջ բնորոշմամբ՝ զարգացումը համարվում է կայուն, եթե այն թույլատրում է բավարարել ներկայիս պահանջներն ու կարիքները՝ չվտանգելով ապագա սերունդների սեփական կարիքները հոգալու կարողությունները: «Կայուն զարգացում» հայեցակարգի գաղափարախոսությանը ծանոթ յուրաքանչյուր անհատ, բացառությամբ հատուկ նպատակ հետապնդողների և մոլորվածների, կհամոզվի, որ ակնհայտ շինծու է մեկ անհատին վերագրել բարդ ու բաղադրամաս մի ծրագրի ստեղծումը, այն էլ այնպիսի մի ծրագրի, որն իր մեջ ներառում է Գլոբալացման մյուս ոլորտները և ընդհանրապես աշխարհի միակենտրոն կառավարումը, այսինքն՝ ճիշտ և ճիշտ այն, ինչն ամրագրված է սիոնիզմի ծրագրում: Այս հայեցակարգի-գաղափարախոսության-ծրագրի հղկվածությունը, կասկածելի ու անիրականանալի գաղափարների հնարավորին և նրբագույնս քողարկվածությունը, հայտնի ծրագրի հետ նրա հարազատությունը ցույց են տալիս, որ այս հայեցակարգը ստեղծվել է հզոր կառույցներ ունեցող մի կազմակերպության երկարամյա ու համակարգված աշխատանքի արդյունքում: Իսկ Հայեցակարգի հիմնադրումը ՄԱԿ-ի Հանձնաժողովը նախագահած տիկնոջը վերագրելով, հավանաբար ցանկացել են տպավորություն ստեղծել, որ այս հայեցակարգի-ծրագրի սաղմնավորումը, ծնունդը, շրջանառության մեջ դնելը ամբողջովին ՄԱԿ-ի գործն է:

Ըստ «Կայուն զարգացում» հայեցակարգի սահմանումների՝ մարդկանց միջև բնական պաշարները բաշխվելու են արդար ու հավասար, արմատախիլ են արվելու աղքատությունն ու սովը, վերացվելու է աղքատների և հարուստների, ինչպես նաև՝ աղքատ ու հարուստ երկրների միջև գոյություն ունեցող կյանքի որակի տարբերությունը: Նաև՝ պետք է արագորեն բավարարվեն այնպիսի պահանջումներ, ինչպիսիք են՝ մաքուր ջուրը, համապատասխան կացարանը, էներգիան, առողջության պահպանումը, սննդի անվտանգությունը, կենսաբանական բազմազանության պահպանումը և այլն: Ինչպես նաև՝ համայն մարդկության համար պետք է ապահովվի արդար ու բարեկեցիկ կյանք և համաշխարհային տնտեսության այնպիսի անընդհատ աճ, որը չի խախտելու մինչև այժմ պահպանված բնական համակարգերը, իսկ քայքայված ու ավերված տարածքները պետք է վերականգնվեն: Եվ երազելի այլ հավաստումներ: Այստեղ նաև նշենք, որ 27 սկզբունքներից բաղկացած Ռիոյի Հռչակագրի առաջին սկզբունքը վերաբերում է մարդու իրավունքներին. «Կայուն զարգացման հայեցակարգի կենտրոն հանդիսացող մարդը իրավունք ունի բնության հետ ներդաշնակ, առողջ և բեղմնավոր կյանքի»:

Ահա այսպիսի վառ ու շլացուցիչ շեշտադրմամբ է ասպարեզ հանվել «Կայուն զարգացում» հայեցակարգը:

Այս հայեցակարգի կնքահայրը, լինի դա խմբավորում թե կազմակերպություն, փաստորեն մի հարվածով, այսպես ասած, լուծում է հազարամյակներ շարունակ մարդկության առջև ծառայած անլուծելի խնդիրը՝ խոստանում է ցանկալին ու երևակայականը դարձնել իրականություն: Ուրեմն, դյուրահավատ պետական այրերին մնում է միայն սեփական երկրի սահմանադրությունը, օրենքները, պետական կառավարման համակարգը, գիտությունը, կրթությունը, առողջապահությունը, մշակույթը և, ընդհանրապես, երկրի տնտեսությունը, կարգն ու կանոնը ենթարկել քարոզվող հայեցակարգին և ... սպասել երևակայական երջանիկ ապագային:

Եվ հենց այդպես էլ եղավ:

«Կայուն զարգացում» հայեցակարգը մարդկությանը մատուցելու առաջին քայլը շռնդալից էր: Եթե ՄԱԿ-ի անդամ երկրների 1992

թվականին Ռիո դե Ժանեյրոյի համաժողովում «Կայուն զարգացում» հայեցակարգի Յճակագիրն անվերապահորեն ընդունեցին 179 երկրներ, ապա դրանից տասը տարի անց՝ Յոհաննեսբուրգի համաժողովում աշխարհի երկրների խանդավառությունն էլ ավելի մեծ էր: Այստեղ արդեն 193 երկրներ (22 հազար պատվիրակներ), նույն անվերապահությամբ վերահաստատեցին իրենց հավատարմությունը «Կայուն զարգացում» հայեցակարգին (գործընթացին միացան մի շարք երկրներ, որոնք Ռիո դե Ժանեյրոյում տեղի ունեցած հիմնադիր համաժողովի աշխատանքներին չէին մասնակցել և չէին որդեգրել այս հայեցակարգով կառավարվելու պարտավորությունը):

«Կայուն զարգացում» հայեցակարգի դրույթների շուրջ խորհելը բնականաբար առկախում է հետևյալ հարցերը: Օրինակ, արդյո՞ք վերը թվարկված գայթակղիչ խոստումներն ու հավաստումներն ապահովված են քաղաքական, նյութատեխնիկական, ֆինանսատնտեսական, տեխնոլոգիական, մշակութային և այլ անհրաժեշտ հիմքերով: Նաև՝ իրո՞ք գաղափարախոսության կնքահայրերը մտահոգված են համայն մարդկության բարեկեցության, անվտանգության և ապագայի խնդիրներով, թե՞ նրանք այլ նպատակ են հետապնդում: Եվ, թերևս, ամենագլխավորը՝ թե այս ի՞նչ հնարքով է, որ աշխարհի երկրների մեծամասնությունը միանգամից զմայլվեց ու ընդունեց այս Յայեցակարգը, երբ պետությունների միջև այսպիսի համերաշխություն և նույն խնդրի նկատմամբ այսպիսի բևեռվածություն մարդկության պատմությանն անծանոթ է: Նման իրավիճակի կարելի է ականատես լինել, օրինակ, համերգասրահներում, երբ լուսավոր, պայծառ ու մոգական մեղեդին ամբողջովին կլանում և իր ետևից է տանում ներկաներին կամ երկաթի խարտվածքը՝ մագնիսական դաշտում: Եվ արդյո՞ք աշխարհն այսքան հեշտ կառավարելի է դարձել:

Յայտարարված իդեալների ու դրանց հասնելու իրական հնարավորությունների առումով, նախ, վերցնենք «Կայուն զարգացում» հայեցակարգի դրույթներից, օրինակ, համաշխարհային արտադրանքի անընդհատ աճը և բնական համակարգերի պահպանութ-

յունն ու քայքայված-ավերվածների վերականգնումը և փորձենք հասկանալ, թե որքանով է հնարավոր ապահովել համաշխարհային արտադրանքի անընդհատ աճը և միաժամանակ պահպանել գոյություն ունեցող անաղարտ բնական համակարգերը և վերականգնել վնասվածներն ու ավերվածները, երբ ըստ այդ հայեցակարգի, աղքատության վերացման և համայն մարդկությանը բարեկեցիկ կյանք ապահովելու համար կպահանջվի 8-10 անգամ մեծացնել համաշխարհային արտադրանքը:

Յենց իրենց՝ հեղինակավոր Միջազգային կազմակերպությունների տվյալներով, Երկրագնդի ցամաքի տարածքը, չհաշված սառցակալած և մերկացածները, կազմում է 13494471 քառ.կմ, որի միայն 27 տոկոսն է չվնասված, իսկ մասնակի և ամբողջովին խախտված տարածքները կազմում են համապատասխանաբար 36,7 և 36,3 տոկոս (2000 թվականի տվյալներով): Նույնիսկ արտադրանքի 2000 թվականի ծավալների պայմաններում, երբ Երկրագնդի յուրաքանչյուր շնչի հաշվով տարեկան վերամշակվում էր 53-55 տոննա հումք (6,5 մլրդ բնակչության հաշվով՝ 350 մլրդ տոննա, ջուրը չհաշված), աստիճանաբար ընդլայնվում է անապատացումը, նվազում են մշակովի բարեբեր հողերը և խմելու ու ոռոգման ջրի պաշարները, դեպի սպառում են գնում չվերականգնվող բնական պաշարները, աղքատանում է բուսականդանական աշխարհը: Միայն պետք է երևակայել, թե ինչ կործանարար ու անդառնալի հետևանքների կբերի համաշխարհային արտադրանքը մինչև 10 անգամ մեծացնելը: Այդ պարագայում՝ յուրաքանչյուր շնչի հաշվով տարեկան վերամշակվող հումքը կկազմի մոտ 540 տոննա, իսկ 6,5 մլրդ բնակչի հաշվով, տարեկան՝ 3,5 տրիլիոն տոննա: Դժվար է պատկերացնել, թե բնօգտագործման առաջարկվող ծավալների պայմաններում ինչ տեսք կունենա Երկրագունդը, անգամ տասնյակ տարիներ հետո: Այսուհանդերձ, «Կայուն զարգացում» հայեցակարգի կնքահայրերը հավաստում են, թե պահպանվելու են Երկրագնդի չմիջամտված տարածքները, իսկ քայքայված-ավերվածներն էլ վերականգնվելու են:

Ընդունենք, որ քննարկվող հայեցակարգի նկատմամբ անվստահությունը հիմնավորված չէ և փորձենք ճշտել-հասկանալ, թե

«Կայուն զարգացում» հայեցակարգն ընդունելու առաջին տասը տարիներին ինչքանով է բարձրացել կյանքի բարեկեցությունն ու հուսալիությունը և ի՞նչ առաջընթաց կա բնական համակարգերի պահպանման ասպարեզում:

Ցավոք, հակառակ խոստումներին, այդ տարիներին թե՛ կյանքի որակի բարելավման, թե՛ բնական համակարգերի պահպանության ոլորտներում ոչ միայն առաջընթաց չկա, այլև լուրջ հետընթաց է գրանցվել: Օրինակ, ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ աղքատների թիվն ամբողջ աշխարհում, գլխավորապես զարգացող երկրներում պահպանում է իր հարաձուլությունը: Եթե 1985 թվականին աղքատների թիվը կազմում էր 1 մլրդ 51 մլն, իսկ 1990 թվականին՝ 1 մլրդ 133 մլն, ապա 1996 թվականին դա արդեն հասել էր 1 մլրդ 300 մլն մարդու: 1999 թվականին աղքատների թիվը 1992-ի համեմատությամբ աճել է ավելի քան 400 միլիոնով: Ըստ նույն աղբյուրի, զարգացած երկրներում նույնպես աճում է աղքատների թիվը: Այդ երկրներում բնակչության 19-40 տոկոսի համար տարեցտարի բարեկեցությունն անկում է ապրում: 1970-2000 թվականների միջև ընկած ժամանակահատվածում ծայրահեղ աղքատ երկրների թիվը 30-ից հասել է 50-ի:

«Գեո-2000»-ի տվյալներով, 1990-ական թվականներին առավել ակտիվացել են բնական համակարգերի քայքայման գործընթացները, ինչն ավելի է խորացնում աղքատ ու հարուստ բնակչության եկամուտների միջև եղած խզումը: Կանխատեսվում է, որ այդ խզումը գալիք մի քանի տասնամյակներում կշարունակի մեծանալ: Եթե 1975 թվականին աշխարհում մեկ շնչին հասնող մշակովի հողատարածքը կազմում էր 0,38, 1990-ին՝ 0,28, ապա 1995-ին՝ 0,24 հա: 1990-1995 թվականներին աղքատ երկրներում ոչնչացվել է 65 մլն հա անտառ (հարուստ երկրներում, այդ նույն տարիներին, անտառածածկ տարածքն ավելացել է 9 մլն հեկտարով): Ակտիվորեն մեծանում է բնական և մարդածին աղետների թիվը: Օրինակ, 1990-1996 թվականներին եղանակային երևույթների հետ կապված տնտեսական վնասը կազմել է ավելի քան 200 մլրդ դոլար, որը չորս անգամ գերազանցում է նախորդ մի քանի տասնամյակների վնասներին:

Այժմ փորձենք տեսնել, թե այդ տարիներին ինչպիսի «կայուն զարգացում» ապրեց նորանկախ Հայաստանի Հանրապետությունը: Ինչպես հետագայում ավելի պարզ ու հասկանալի դարձավ, անկախության հենց առաջին տարիներից երկիրը սկսել է կառավարվել «Կայուն զարգացում» հայեցակարգի դրույթներով: 1992 թվականին Հայաստանի Հանրապետությունը, դրամաշնորհներ ու վարկեր ստանալու և մեզ համար հայտնի ու անհայտ այլ նպատակներով, վավերացրեց նաև Համաշխարհային բանկի և նրան կից այլ կազմակերպությունների կողմից ստեղծված, «Կայուն զարգացում» հայեցակարգի սահմանումները կյանքի կոչող «Վաշինգտոնյան կոնսենսուսը» (համաձայնագիրը): Այդ Համաձայնագիրն առաջարկում է շոկային թերապիայի միջոցով «առողջացնել» թույլ և նորանկախ երկրների տնտեսությունները, հետևաբար և, այդ Համաձայնագիրը վավերացրած պետությունները պետք է ղեկավարվեն Համաշխարհային առևտրի «բարեփոխման» 10 հանձնարարականներով-պատվիրաններով: Ահա այդ քայքայում ու մահ սփռող պատվիրաններից մի քանիսը. **պետք է նվազեցնել ձեռնարկություններին հատկացվելիք հավելվածարները (դոտացիաները), պետք է ընդունվի օտարերկրյա ներդրմանը խթանող քաղաքականություն, ամեն կերպ պետք է խրախուսվի սեփականաշնորհումը, պետք է նվազեցնել պետական կարգավորումը՝ արդյունաբերության պետական կարգավորմանը պետք է վերջ տրվի** (М. Г. Делягин, Мировой кризис, общая теория глобализации, Москва, 2003, стр. 260-261):

Եվ այսպես, երկրում վարվող քաղաքականությունը և, ընդհանրապես, Սահմանադրությունը, օրենքները, տնտեսավարման կարգը, մոտակա և հեռավոր ծրագրերը հարմարեցվել են գլխավորապես դրամաշնորհային և վարկային քաղաքականությանը: Պատահական չէ, որ առ այսօր Հայաստանի Հանրապետության կառավարությունը չի համարձակվում, օրինակ, տնտեսական գործունեությամբ զբաղվել, քանզի այդ իրավունքից զրկված է:

Այս ամենից անտեղյակ էր ոչ միայն ՀՀ բնակչությունը, այլև օրենսդիր և գործադիր իշխանություններում պաշտոն զբաղեցրած

այն անձինք, որոնք ընդգրկված չէին իշխանության կուսակցության շարքերում (նաև չի կարելի պնդել, որ երկրի քաղաքականությունն իրականացնող իշխանավորները լիովին հասկանում ու ըմբռնում էին այդ անձանոթ ու բարդ բնագավառը և երկիրը հոժարական տանում էին դեպի քայքայում: Իրականում, կատարված հեղափոխությունից հետո ստեղծված իրավիճակում քչերին էր տրված ձիշտ վճիռ կայացնելը, օրինակ, նմանվել Բելառուսի առաջնորդին):

Անկախության առաջին տարիներին, երբ դեռևս գործում էին խորհրդային Միության օրենքները, մատնացույց արված օրինախախտումներին իշխող վարչակարգի պարագլուխներն ու որոշ պաշտոնյաներ պատասխանում էին, թե սովետական բռնապետության օրենքներն օրենք չեն, շուտով կընդունենք մեր սեփական օրենքները և կարգ ու կանոն կհաստատենք: Նոր օրենքներ ընդունելուց հետո նրանք արդեն ասում էին՝ լավ ենք անում, մենք ենք հաղթել և մեր ուզած ձևով էլ կդեկավարենք: ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, իշխող կուսակցության (ՀՀԾ) ակտիվ գործիչ, բնապահպանի մեծ հռչակ վայելող Խաչիկ Ստամբուլյանն առաջարկում էր պառլամենտական ճանապարհով բացել բոլոր բանտերի դռները, այն հիմնավորմամբ, որ «անկախացած Հայաստանում չպետք է կալանավորներ լինեն», նույն կուսակցությունից պատգամավոր Դավիթ Վարդանյանը գտնում էր, որ պետք է ցրել Գիտությունների ակադեմիան, իսկ եթե դրանով իրավիճակը վատանա, այդ դեպքում՝ նորը կստեղծենք: Վարչապետ Վազգեն Սանուկյանը հայտարարում էր, որ երկրում պետք է այնպիսի պայմաններ ստեղծվի, որպեսզի բնակչության մոտ 3%-ը հարստանա, որը և պետք է ապահովի 97%-ի ապրուստը: Հերթական վարչապետ Հրանտ Բազրատյանը հայտարարում էր, թե Հայաստանը գիտությամբ չպետք է զբաղվի, իսկ ուսում կարող են ստանալ միայն ունևորների զավակները: Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը համոզում էր, թե պարտադիր չէ, որ մեր երկիրը Սահմանադրություն ունենա, իսկ մեր պաշտպանվածությունն էլ մեր անպաշտպանվածության մեջ է: Նաև պետք է ասվի, որ այս նախագահի իշխանավարության օրոք էր, որ Հայաստանի Հանրապետությունն ընդունեց «Կայուն զարգացում» հայեցակարգով դեկավարվելը և վավերացրեց, մասնագետների բնորոշմամբ՝

Գլոբալացման առջև երկրի դարպասները բացող, երկիրը կազմա-
քանդող Վաշինգտոնյան համաձայնագիրը:

Ճիշտ է, կալանավայրերը չվերացվեցին, սակայն քրեական
աշխարհին անարգել գործելու ճանապարհ տրվեց: Միաժամա-
նակ, բարեփոխումների անվան տակ վերացվեցին հսկողության
ու վերահսկման գլխավոր հանգույցները, խորացվեցին ու ծավալ-
վեցին անօրինականություններն ու անպատժելիությունը: Կազմա-
կերպվեց այնպես, որ բնակչության մեջ իր իսկ գլխավոր հենասյու-
ների՝ Սահմանադրության և բոլոր մակարդակներում կատարվող
ընտրությունների նկատմամբ անտարբերություն ու զզվանք սեր-
մանվի: Ուռձացվեց պետական կառավարման համակարգը, իսկ
իշխանավորները գրեթե լիովին մեկուսացան ժողովրդից և բացա-
հայտ անտարբերություն ու արհամարհանք ցուցաբերեցին նրա
նկատմամբ, ինչը դարձել է շարունակական: Անկախության հենց
առաջին շրջանում աշխատավարձը դարձավ զուտ ձևական և դրա
հետ մեկտեղ ազատ արձակվեցին հացի և այլ ապրանքների գնե-
րը, կտրուկ բարձրացվեցին ծառայությունների արժեքները, առա-
վել ծավալվեց կաշառակերությունը: Ամեն ինչ արվեց բնակչության
միջին խավը վերացնելու համար, գործընթացը շարունակվում է:
Յոդի սեփականաշնորհմանը զուգահեռ՝ ավերվեցին գյուղատնտե-
սական տեխնիկայի, սերմնային ու խնամքի և կենսական կարևոր
այլ բազաները, դրա հետ մեկտեղ ներկրվեցին գյուղատնտեսական
բույսերի կասկածելի սերմեր, միաժամանակ սահմանափակվեցին
հողի աշխատավորին ոռոգելու ջրից օգտվելու իր բնական-բնա-
տուր իրավունքը (այժմ ջուրը օրենսդրորեն ապրանք է համարվում
հենց բնության գրկում): Ակադեմիական, բուհական և ճյուղային
ինստիտուտների գիտական խորհուրդների ֆունկցիան փաստո-
րեն հաճնվեց փոխվարչապետ Արմենակ Ղազարյանի գլխավորած
եռյակին (երեք երիտասարդ գիտաշխատողներ): Ավելին՝ կտրուկ
նվազեցրին Գիտությունների ակադեմիայի նախագահությանը և
ակադեմիական 42 գիտահետազոտական ինստիտուտներին և
կից մյուս գիտական հաստատություններին հատկացվող գումար-
ները: Արդյունքն ակնառու է՝ կարճ ժամանակահատվածում անդա-
մալույժ դարձավ մեծ հռչակ ունեցող գիտության ոլորտը: Սեփակա-
նաշնորհման անվան տակ կողոպտվեց ու փոշիացավ ազգային ու-

նեցվածքը: Հայոց լեզվի նկատմամբ ոչ հարգալից վերաբերմունք ձևավորվեց անգամ պետական մակարդակով: Դպրոցի «բարեփոխիչի» (Աշոտ Բլեյան) ջանքերով. «այլընտրանքային ուսուցում» անվան տակ դպրոց ներխուժեցին բուն մանկավարժությանը և մեր ավանդույթներին օտար ու խիստ վտանգավոր գաղափարներ և մեթոդներ: Այսօր դպրոցը անհամեմատ ավելի վատ վիճակում է, քան նշված տարիներին էր. այժմ դպրոցը կրոնականացվել է, օտարալեզու դպրոցներ են բացվել, անորակ ու շփոթ առաջացնող դասագրքերով են դասավանդում, անընդհատ փոփոխություններով փորձում են իմաստագրել դպրոցն ու ուսումը: Ռադիո-հեռուստատեսությունն ու մամուլը հիմնականում դարձել են մարդկանց մեջ կենսական շատ խնդիրների նկատմամբ անորոշություն, հուսահատություն, անտարբերություն, ինչպես նաև կայուն սթրեսային վիճակ սերմանելու, ազգից, ազգային բարքերից և սեփական բնաշխարհից օտարելու գործոններ: Ծխախոտի և ալկոհոլային խմիչքների օրենսդրորեն «հիմնավորված» գովազդների և այլ գործոնների «շնորհիվ», ծխում են համարյա բոլորը (նաև՝ անչափահասներն ու կանայք): Արդեն սովորական է դառնում դպրոցներում, ուսումնական հաստատություններում, հիվանդանոցներում, հանրային տրանսպորտում (վարորդները) և արգելված այլ վայրերում ծխելը: Չնայած այն բանին, որ Հայաստանի Հանրապետությունից արտագաղթ է կատարվել, իսկ բնակչության բնական աճն էլ նվազել է, այդուհանդերձ, ծնունդը փաստորեն չի խրախուսվում: Օրինակ, եթե 1000 բնակչի հաշվով 1915 թ. բնակչության բնական աճը կազմել է 22,4, 1926 թ.՝ 39, 1955 թ.՝ 30, 1985 թ.՝ 18,2 մարդ, ապա 2000 թ. բնակչության բնական աճը կազմել է ընդամենը 2,7 մարդ: Նույն տարիներին, դարձյալ 1000 բնակչի հաշվով, ծնելիությունը կազմել է, համապատասխանաբար՝ 46,3, 56, 38, 24 և 9,3 մարդ: Փաստորեն, 2000 թվականին 1915-ի համեմատությամբ բնակչության բնական աճը նվազել է 8,3, իսկ ծնելիությունը՝ 4 անգամ: Նույնիսկ բնական աճի և ծնելիության այսպիսի կտրուկ ու աղետալի անկման պարագայում հանրապետությունում իրականացվում էր ընտանիքի պլանավորում, այսինքն՝ գրոյական աճի քաղաքականություն: Բնակչության աճի կանխմանն ուղղված քայլ կարելի է համարել ՀՀ նախագահի հաստատած՝ Կառավարության

2001 թ. մարտի 30-ի թիվ 255 որոշումը, որտեղ ասվում է. «2001 թ. համավճարի սկզբունքով հիվանդանոցային մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնություններում իրականացվող ծննդաբերության բժշկական օգնության և սպասարկման համար բնակչության կողմից վճարվող գումարը՝ 33 մարզերում 10 հազար, Երևանում՝ 15 հազար դրամ»: Ճիշտ է, այդ որոշումը հետագայում անվավեր ճանաչվեց գլխավորապես «Անահիտ» մայրության հիմնադրամ հասարակական կազմակերպության ջանքերով, սակայն կարևորն այն է, թե մեր իշխանավորներն ինչ վերաբերմունք ունեն հայ ժողովրդի ու նրա ապագայի նկատմամբ:

Թվարկած քայքայիչ գործողությունները շատերի կողմից ընկալվում են իբրև միայն մեր մեղքով ստեղծված անկառավարելի իրավիճակի արդյունք: Սակայն պետք է հասկանանք, որ արիեստականորեն ստեղծված այդ քաոսը միայն մեզ համար է քաոս, իսկ դավադիր ուժի համար այն կառավարելի և նպատակին հասնելու միջոց է: Մի՞թե քաոսային պայմաններում բարդագույն և բազմաբաղադրամաս համակարգում (բնական համակարգեր, մշակույթ, սոցիալ-տնտեսական և կյանքի մյուս բոլոր ոլորտներ) տեղի ունեցող գործընթացները կարող են ունենալ խիստ ընտրողական ուղղվածություն, այն էլ՝ միայն դեպի քայքայումն ու կորուստը:

Դավադիր ուժը, իհարկե, մեր իսկ մասնակցությամբ, փորձում է կանխել հայ ժողովրդի բնական աճը, նրան դարձնել կամազուրկ, մոդելավորված՝ կանխատեսելի վարքագծով, ընտանիքում և ներազգային խնդիրներում գժտված ու պառակտված, ծամպրուկային տրամադրությամբ տարանցիկ մարդազանգված, այսինքն՝ սեփական նպատակներից զուրկ, ապագային և անառողջ հասարակություն կամ «Կայուն զարգացում» հայեցակարգով կանխատեսվող *աշխարհի քաղաքացի*:

Հայաստանի Հանրապետությունում և Արցախում ծավալուն քայքայիչ աշխատանք են կատարում կրոնական և աշխարհիկ կազմակերպությունները: Իրողությունը ցույց է տալիս, որ հայ ժողովրդի հիմքերի քայքայումն իր դաժանությամբ զգալիորեն տարբերվում է մեր տարածաշրջանի ընդհանուր ֆոնայինից: Ասածը հիմնավորող որոշ քաղվածքներ. «Հայաստանում փաստորեն յուրաքանչյուր 306-րդը «Եհովայի վկա» աղանդի հետևորդ է: Էլ

ավելի աղետալի է պատկերը Արցախում, որտեղ աղանդավոր է յուրաքանչյուր... 40-րդը: Համեմատության համար բավական է ասել, որ օրինակ, Ադրբեջանում ընդամենը 870 «Եհովայի վկա» կա, կամ այդ աղանդի հետևորդ է յուրաքանչյուր 10000-րդը» («Հայոց աշխարհ», 09.11.2010 թ.): «Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված է 64 աղանդ և գործում են ավելի քան 100 ոչ պաշտոնական կրոնական կազմակերպություններ: Այսօրվա դրությամբ աղանդների անդամ են 350 հազար մարդ, նրանցից 100 հազարը՝ ապակառուցողական աղանդների: Ռուս պրոֆեսոր Ալեքսանդր Դվորկինը նշել է, որ Ռուսաստանում մոտ 600-800 հազար մարդ աղանդավոր է, պաշտոնական գրանցված աղանդների թիվը 80 է» («Հայաստան». էլեկտրոնային լրագիր, թիվ 702, 15.11.2010 թ.):

Ավերածություն կյանքի բոլոր ոլորտներում: Այս խնդրում տեղական իշխանավորների հանդուրժողականությունը պայմանավորված է ոչ միայն Միջազգային պայմանագրերի վավերացմամբ, այլ նաև, հավանաբար նրանով, որ մշտապես հոսող դրամաշնորհները, արտագաղթի հետ մեկտեղ, զսպում են հավանական սոցիալական պայթյունները, այսինքն՝ կանխում են, օրինակ, իշխանափոխությունը:

Եվ այս մթնոլորտում տիրում է «Կայուն զարգացում» հայեցակարգին բնորոշ՝ բնակչության հյու-հնազանդությունը և պետության ու ժողովրդի նկատմամբ իշխանավորների անտարբերությունն ու քար լռությունը: Այստեղ, հավանաբար, նպատակահարմար է վերհիշել դավադիր ուժի հանգուցային նկրտումներից մեկը՝ «Օտարներու որդիները քու պարիսպներդ պիտի շինեն: Ու անոնց թագավորները քեզի ծառայութիւն պիտի ընեն», ինչպես նաև այդ նույն Աստվածաշնչից կատարել հետևյալ մեջբերումը. «Եգիպտացիները պիտի գրգռեն եգիպտացիներուն դէմ: Ամէն մէկը իր եղբօրը հետ եւ ամէն մէկը իր ընկերին հետ, քաղաք քաղաքի հետ ու թագաւորութիւն թագաւորութեան հետ պատերազմ պիտի ընէ: Եգիպտոսի ոգին իր ներսիդին պիտի նուաղի եւ ես անոր խորհուրդը պիտի ցրուեմ: Անոնք կուռքերու, կախարդներու, վիուկներու ու նշանագէտներու պիտի հարցնեն» (Եսայեայ. 19:2-3):

Լուսավոր ներկա ու ապագա խոստացող «Կայուն զարգացում» հայեցակարգին չվստահելուն լուրջ հիմք է տալիս նաև այն ակնհայտ փաստը-իրողությունը, որ, օրինակ, այս հայեցակարգի դրույթներին համապատասխան ստեղծված մոդելային օրենքներն արդեն շուրջ քսան տարի է պարտադրված են, օրինակ, Նորանկախ երկրներին: Բացի այն, որ այս օրենքները նշված երկրներում ձանապարհ են հարթել կոռուպցիայի, ժողովրդի ու պետության ունեցվածքը մի քանի ընտանիքների բաժին դարձնելու, այլև բնական պաշարների արագ սպառման և բնական համակարգերի լայնածավալ ավերման ու ոչնչացման համար: Այն դեպքում, երբ Ռիո դե Ժանեյրոյի Հռչակագրի ամենագլխավոր դրույթներից մեկը բնական պաշարների խնայողաբար օգտագործումն ու բնական համակարգերի պահպանությունն է:

«Կայուն զարգացում» հայեցակարգը Նորանկախ երկրներում

Ռիո դե Ժանեյրոյի Հռչակագիրը ներկայացնելիս խոստանում էին, որ դրա մեջ ամրագրված դրույթների իրականացման մեխանիզմները հասարակությանը կներկայացվեն մոտ ապագայում: Սակայն Հռչակագրի ընդունումից 10 տարի հետո շրջանառության մեջ դրված, օրինակ, Նորանկախ երկրներում «Կայուն զարգացում» հայեցակարգն արմատավորելուն վերաբերող փաստաթուղթը (Предложения по переходу к Устойчивому Развитию стран охваченных деятельностью региональных экологических центров, 2002) նույնպես հիմնականում մնում է որպես հայտարարությունների ժողովածու: Այս փաստաթղթից քաղվածքներ բերելով փորձենք հասկանալ, թե արդյո՞ք այդտեղ առաջարկվող մեխանիզմներով հնարավոր է իրականություն դարձնել «Կայուն զարգացում» հայեցակարգի սահմանումները և հասնել խոստացած երջանիկ ներկային ու ապագային:

Փաստաթղթի «Առաջնորդող սկզբունքներ» բաժնում գրված է. **«Յետևելով միջազգային պայմանագրերի ոգուն և տառին, Առաջարկությունների սույն փաստաթղթում, Կայուն զարգա-**

ցումը հասկացվում է հասարակության գործունեության այնպիսի մոդել, որը նպատակաուղղված է՝ անդառնալի վնաս չպատճառելով կենսոլորտին՝ ներկա և ապագա սերունդների կյանքի հիմնական պահանջների բավարարում: Առանձնակի նշանակություն է տրվում **հասարակայնության և բնության հավասարակշռությանը: Կայուն զարգացման անցումը նախատեսում է մի ամբողջ շարք սկզբունքների գործնական իրականացում.**

- ի հակադրություն սպառողական մոդելի վարվելաձևի, ներառյալ բնական բարիքների ու պաշարների վատնող շահագործման, որդեգրել մարդասիրական հոգևոր արժեքների առաջնություն,

- սոցիալական համագործակցություն և բնակչությանը էկոլոգիական կարևոր և այլ որոշումներ ընդունելուն ներգրավում, **ապակենտրոն տեղեկատվության հասարակայնություն ստեղծող հասարակական կառույցների ուժեղացում,**

- կանխիչ և նախազգուշական միջոցներ ձեռնարկելու նպատակաուղղված՝ **ստրատեգիական կառավարում կանխատեսող** Կայուն զարգացման ինստիտուտների կայացում,

- հավասար և արդար մասնակցություն. բնական պաշարներին, ֆինանսական կապիտալի շուկային, ժամանակակից տեխնոլոգիաներին, գիտելիքներին,

- կյանք ապահովող և **բնակչության տարածքային կառավարման համակարգերի հարմարեցումը բնական կառուցվածքներին,**

Նորանկախ երկրներում էկոհամակարգերի վերականգնման և մարդկանց կյանքը լուրջ բարելավելուն տանող Կայուն զարգացման մոդելին անցնելը կրելու է երկարաժամկետ բնույթ: Կայուն զարգացումը պահանջում է կառավարման համակարգի վերակառուցում բոլոր մակարդակներում. սկսած տեղականից մինչև պետականը և միջպետականը:

Լարված և նպատակասլաց աշխատանքի շնորհիվ արդեն 2015 թ. կիսաշրջվի **էկոլոգիական կրթության ու դաստիարակության մեջ ընդգրկել բոլոր նպատակային խմբերը,** իսկ զանգվածային լրատվամիջոցներին ընդգրկել «Կայուն զարգացում» հայեցակարգին վերաբերող տեղեկությունների քարոզման մեջ,

տարածել էթիկական նոր չափանիշներ, ամրապնդել ոչ կառավարական և ոչ պետական (ընդգծումները՝ Յ.Ս.) բնապահպանական կազմակերպությունները» (էջ 3-4):

Նախ, միջազգային պայմանագրերի ոգուն և տառին հետևելը պետք է հասկացվի՝ չխոչընդոտել աշխարհը մեկ կենտրոնից կառավարելու համար համապատասխան կառույց ստեղծելուն: Կարծում եմ, այդպես պետք է հասկանալ, քանզի ականատես ենք, որ Միջազգային պայմանագրերի տառը և ոգին արդեն տասնամյակներ շարունակ հետևողականորեն հարմարեցվում են աշխարհի միակենտրոն կառավարում ստեղծելուն: Այդ նույն Միջազգային կոչված պայմանագրերի պարտադրանքով ու ձնշմամբ՝ փաստորեն սիրնիզմի ծրագրի *տառին* ու *ոգուն* են համապատասխանեցվում ազգային պետությունների սահմանադրություններն ու օրենքները, իսկ այժմ էլ, զարգացումներից պարզորոշ հասկացվում է, որ մեծ հավանականությամբ ստեղծվելու են մայրցամաքների և ապա՝ համաշխարհային սահմանադրություն ու օրենքներ: Նաև հարց է առաջանում, թե հասարակության գործունեության առաջարկվող մանրակերտում (մոդելում), ինչո՞ւ է առանձնակի նշանակություն տրվում ապակենտրոն տեղեկատվության հասարակություն ստեղծող հասարակական կառույցներին և ոչ կառավարական ու ոչ պետական կազմակերպությունների ուժեղացմանը, ինչպես նաև տարածքային կառավարման համակարգերը բնական կառուցվածքներին հարմարեցնելուն: Այստեղ վստահորեն կարելի է ասել, որ պլանավորված ու կանխատեսվող գործողությունների գլխավոր նպատակը՝ պետական կենտրոնաձիգ կառավարումը կենտրոնախույս և պետության դերը երկրորդական դարձնելն է, պետությունը փոշիացնելն է, և ի վերջո՝ ազգային պետությունն ասածը վերացնելն է: Իսկ էկոլոգիական կրթության տարածման և էթիկական նոր չափանիշների ձևավորման պատրվակով՝ ավանդական կրթության քայքայումն ու այլասերումն է:

Անհրաժեշտ է նշել, որ երբ էկոլոգիական կրթություն հասկացությունը նոր էր դրվել շրջանառության մեջ, մարդիկ սիրով էին ընդունում այդ գաղափարը, քանզի դրա տակ որևէ ծածուկ կամ վտանգավոր բան չէին փնտրում և, բնականաբար, կարծում էին, որ ու-

սումնական հաստատություններում լրացուցիչ դասավանդվելու են նաև յուրաքանչյուր առարկային առնչվող էկոլոգիական խնդիրները: Սակայն գործընթացը ցույց է տալիս, որ «Կայուն զարգացում» հայեցակարգը շրջանառության մեջ դնելուց հետո էկոլոգիական կրթություն ասելով արդեն հասկացվում է մի այնպիսի կրթություն, որը պետք է մարդկանց համոզի, որ «Կայուն զարգացում» հայեցակարգով կառավարվելը պարտադիր է համայն մարդկության համար, այն պատրվակով, որ իբր այս Հայեցակարգն ապահովելու է բաղձալի ու երջանիկ կյանք և անփոխարինելի է ու այլընտրանք չունի: Հետևաբար, այսօրվա չափանիշներով՝ էկոլոգիական կրթություն ասելով պետք է հասկացվի ժողովուրդներին անդեն, հորինված գաղափարներով կառավարվող՝ «աշխարհի քաղաքացի» դարձնող կրթություն: Այս գարշելի վիրուսն արդեն սկսել է գործել: Օրինակ, 2010 թվականին հրապարակվեց Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների ցանկը, որոնք իրենց «աշխարհի քաղաքացի» են համարում, փաստորեն հրաժարվել են հայ լինելուց: Պատահական չէ, որ քննարկվող փաստաթղթում հաճախ է շեշտվում այն միտքը, թե Կայուն զարգացման գաղափարների իրականացումը կախված է գլխավորապես բնակչության շրջանում էկոլոգիական գիտելիքների տարածման հաջողություններից: Հայեցակարգի պատասխանատու Կենտրոնն այս խնդրում գործնական լուրջ քայլեր է կատարել: Ծուրջ երկու տասնամյակ է, ստեղծվել է «Կրթություն Կայուն զարգացման համար» կառույցը (Ռիո դե Ժանեյրոյի Գազաթնաժողովի փաստաթղթերում այն կոչվում էր «էկոլոգիական կրթություն»), որը ՄԱԿ-ի հովանու ներքո եղած համարյա բոլոր երկրներում կազմավորած համապատասխան հասարակական կազմակերպությունների միջոցով իրականացնում է այս գաղափարախոսության քարոզչությունը:

Այն, որ «Կայուն զարգացում» հայեցակարգի շրջանակներում քարոզվող «կրթությունը» իրականում կտրականորեն տարբերվում է ավանդական կրթություն ասած հասկացությունից, գլխավորապես արտացոլվում են խնդրին վերաբերող կոնֆերանսներում՝ պաշտոնյաների և ակտիվիստների բանավոր խոսքում և առանձին հրապարակումներում: Այս առումով ուշագրավ է այս Հայեցակարգի ակտիվիստներից մեկի (Ռ. Ալեսկերով)՝ «Կայուն զարգացման

գիտական հիմքերը և գործնական իրականացման ուղիները» հող-վաճը, որը 2003 թվականին Կիևում կայացած Համաեվրոպական երկրների Էկոֆորումի պաշտոնական փաստաթղթերի հետ բաժանվեց մասնակիցներին: Հողվաճում մասնավորապես ասվում է. «Կայուն զարգացման խնդիրների իրականացման գլխավոր դժվարություններից են վերակառուցումը և **ժողովուրդների մեջ աշխարհի քաղաքացու կամ էկոլոգիական էթիկայի մտածելակերպի ձևավորումը**: Հրապարակման նպատակն է՝ բացահայտել էկոլոգիական էթիկայի որոշ առանձնահատկությունները՝ աշխարհի քաղաքացու մտածելակերպի ձևավորման ենթատեքստով: Այսօր կարծիքների մեծամասնությունը բերում է այն համոզման, որ **նեղ մասնագիտացումը մարդուն զրկում է բնության գործընթացների ընդհանրական հասկացումից, խոչընդոտում է մարդու ներդաշնակ ու բազմակողմանի զարգանալուն, ինչը առանձնակի կարևոր է գլոբալացման այժմյան գործընթացում** (ընդգծումները՝ Հ.Ս.):»:

Հակաբնական ու հակամարդկային այսպիսի գաղափարներ արտահայտողները ոչ միայն Հայեցակարգի սահմանումներին անկեղծորեն հավատացողներն են, այլ նաև կարող են լինել պատվեր կատարողներ: Արդյո՞ք պատահական էր, որ այս հող-վաճը պաշտոնապես բաժանվեց Էկոֆորումի մասնակիցներին, երբ կտրականապես արգելվեց նույնպես քննարկման արժանի մի շարք նյութերի տարածումը:

Հասկանալի է, որ նեղ մասնագիտացումը ոչ թե ընդհանրապես է մերժվելու, այլ, հավանաբար, շահագրգիռ ուժը ձգտելու է այն դարձնել որպես արտոնյալների մենաշնորհ: Այսօր արդեն աշխարհում կան բարձրագույն ուսումնական հաստատություններ, որտեղ ուսման վարձը տարեկան տասնյակ հազարավոր ԱՄՆ դոլար է կազմում:

Մենք արդեն ականատես ենք, որ Միջազգային կազմակերպությունների միջամտությամբ, օրինակ, Հայաստանի Հանրապետությունում այնպիսի օրենքներ ու ենթաօրենսդրական ակտեր են ընդունվում և այնպիսի պայմաններ են ստեղծվում, որ աղքատ և չբավոր խավերն աստիճանաբար զրկվում են նաև նեղ մասնագի-

տական կրթություն ստանալու հնարավորությունից, ինչը փաստորեն համահունչ է «Կայուն զարգացում» հայեցակարգում առկա այն դրույթին, որ բնական բոլոր պաշարների համար պետք է սահմանվի բնօգտագործման վճարներ, հարկերն ու վարձերը, ինչպես նաև բոլոր ապրանքների գները պետք է շատ բարձր լինեն և աշխարհի բոլոր երկրներում դրանք պետք է հավասարվեն (Երևանի մետրոպոլիտենին 18 մլն ԱՄՆ դոլար վարկ տալու Համաշխարհային բանկի նախապայմաններից մեկը սակագնի կրկնակի բարձրացումն էր, որը և իրականություն դարձավ): Սակայն չի ասվում, որ այդ դեպքում աշխարհի բոլոր երկրներում աշխատավարձերն ու նպաստները նույնպես պետք է հավասար լինեն: Պետք է նկատի ունենալ, որ այժմ համաշխարհային կապիտալը հիմնականում կուտակվում է սահմանափակ թվով ընտանիքների մոտ: Եթե այս արատավոր գործընթացը չկասեցվի, ապա մոտ ապագայում աղքատ և չքավոր ընտանիքների զավակներն, ինչպես արդեն ասվել է, ընդհանրապես կզրկվեն կրթություն, մանավանդ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից:

Նորանկախ երկրներին վերաբերող քննարկվող փաստաթղթից ստորև մեջբերումը ցույց է տալիս, որ «Կայուն զարգացում» հայեցակարգի նետը առաջին հերթին ուղղված է պետական կենտրոնաձիգ կառավարման դեմ. *«Նորանկախ պետությունների **անկայուն զարգացման** բազմաթիվ արտացոլումները մատնացույց են անում կառավարման ձգնաժամային վիճակը, քանզի պետական կառավարման ինստիտուտները հասարակական գործընթացների վրա թույլ նպատակաուղղված ազդեցություն են գործում: Ուրեմն, անհրաժեշտ է բոլոր մակարդակներում կտրուկ ակտիվացնել ինքնակազմավորումը: Ինքնակազմավորման գլխավոր գործոնը **երջանիկ ապագայի կերպարի** ստեղծումն է: **Ի տարբերություն կենտրոնացած կառավարման, ինքնակազմավորման կառավարումը կձևավորի երջանիկ ապագա:** Այդ դեպքում, որոշումներ կայացնելու պատասխանատվության մի մասը փոխանցվելու է ծայրամասերին (ընդգծումները՝ Յ.Ս.): Այդպիսի կառավարմանն աջակցելու համար անհրաժեշտ է ստեղծել բավարար լիազորություն-*

ներով օժտված միջսեկտորային համակարգող հատուկ կառույցներ: Սկզբնական շրջանում նրանց իրավասությունները կարող է սահմանափակվել տեղեկատվությամբ, կանխագուշակմամբ և պլանավորմամբ» (էջ 12):

Ընդհանրապես, այս քաղվածքում բերված դրույթները կարելի է համարել ուսնձգություն պետությունների դեմ կամ որպես պետություններում հեղաշրջում կատարելու ծրագիր: Ինչպես տեսնում ենք, գլխավոր նպատակն է՝ քանդել պետական կառավարման համակարգի առկա կառույցները և իրենց նպատակներին համապատասխան՝ նոր կառույցներ ստեղծել: Օրինակ, բոլոր մակարդակներում ինքնակազմավորումը կտրուկ ակտիվացնելը պարզորոշ նշանակում է բոլկոտել առկա պետական կառավարման համակարգի բոլոր կառույցները: Իսկ առաջարկվող ինքնակազմավորումն էլ, ակնհայտ է, որ իրականացվելու է հիպոսի ու խաբեության միջոցով՝ այսպես կոչված, երջանիկ ապագայի և այլ խոստումներով: Բացարձակորեն հիմնավորված չէ այն, թե ի տարբերություն կենտրոնացած կառավարման, ինքնակազմավորման կառավարումը կձևավորի երջանիկ ապագա: Յակառակը, կարելի է ասել, որ այդ դեպքում քառսի առաջացումը շատ ավելի հավանական է, քան քարոզվող լավատեսական հավաստումը: Ինչպես այս, այնպես էլ «Կայուն զարգացում» հայեցակարգին վերաբերող մյուս փաստաթղթերում հիմնավորված վերլուծությունների փոխարեն միայն վերամբարձ հայտարարությունների ենք հանդիպում: Փաստորեն, համարձակվել են շրջանառության մեջ դնել մի փաստաթուղթ-հայեցակարգ, որը ավելի շուտ կրոնական դոգմա է հիշեցնում, քան մարդկության առաջընթացի հուսալի ուղի՝ սահմանադրություն, ինչպես ներկայացվում է:

Չարմանալի է, որ ազգային պետությունների պետական այրերը հեշտությամբ են հավատում, որ ստեղծվելիք կառավարման համակարգն իբր վերացնելու է այսօրվա բոլոր թերությունները և երջանիկ ներկայի ու երջանիկ ապագայի համար ստեղծելու է անշրջելի պայմաններ: Յարկավ, հեռվից, առանց այդ փակ ոլորտում շփումներ ունենալու, հենվելով միայն առանձին հրապարակումների վրա, շատ դժվար է հստակ եզրահանգումներ անել, սակայն մի

հարցում կարելի է համարձակություն ցուցաբերել ու եզրակացնել, որ «Կայուն զարգացում» հայեցակարգը մշակելուց ու շրջանառության մեջ դնելուց առաջ այդ գաղափարախոսության պատասխանատու անձինք հավանաբար վստահ են եղել, որ իրենց ծրագիրը կընդունվի աշխարհի շատ և շատ պետությունների կողմից: Գուցե նկատի ունենալով այն հանգամանքը, որ դավադիր ուժի՝ սիոնիզմի, այսպես ասած, ծածուկ «զավակներից» ոմանք շատ երկրների պետական համակարգերում պաշտոն են զբաղեցնում: Նաև կարելի է ենթադրել, որ սիոնիզմի կարևոր կառույցներից, օրինակ, մասոնական օթյակները կամ իրենց կադրերն են խցկում պետությունների կառավարման համակարգում, կամ այլևայլ եղանակներով այդտեղ եղածների վրա ազդեցության լծակների են տիրապետում: «Կայուն զարգացում» հայեցակարգը կազմողներին ու շրջանառության մեջ դնողներին հավանաբար ոգևորել է նաև այն պատմական իրողությունը, որ ավելի քան 2000 տարի առաջ հրեականության-հուդայականության-սիոնիզմի կազմած և ժողովուրդներին պարտադրած կրոնի միջոցով կարողացել են և առ այսօր կարողանում են մարդկության մի մեծ զանգվածի շարունակաբար ծառայեցնել սիոնիզմի ծրագրի իրականացման գործին:

Փաստաթղթի «Կայուն զարգացման» հայեցակարգի գերակայությունները բաժնում ասվում է. *«Կայուն զարգացմանն անցնելը պահանջում է որոշակի գերակայություններ: Նորանկախ երկրների խնդիրների անալիզը թույլ է տալիս դեպի Կայուն զարգացմանն անցնելու գործընթացում առանձնացնել մի շարք գերակայություններ.*

- Հասարակության և բնության միջև հաշվեկշիռ հաստատելու, բարձր կարգի կյանքի որակ, խախտված էկոհամակարգերը վերականգնելու և պահպանելու համար ստեղծել սոցիալ-քաղաքական, տնտեսական և տեղեկատվական պայմաններ:

- Մշակութային ավանդույթների պահպանություն և հարստացում:

- Բնակչության առողջության ապահովում, ներառյալ՝ նրա ունեցած բնական պաշարներին համապատասխան վերարտադրություն:

- Շրջակա բնական միջավայրի պահպանություն, ներառյալ հողի բերրիության պահպանում, կենդանի բնության պաշարների չափավոր օգտագործում, կենսաբանական տարատեսակների պահպանություն:

-Կանխարգելել շրջակա միջավայրի անդառնալի փոփոխությունները: Այս գերակայություններին հասնելը կարելի է գործնականում իրականացնել հետևյալ ձևերով՝ **էկոլոգիական մշակույթի ձևավորում** (ընդգծումները՝ Յ.Ս.), հասարակության ինստիտուտի ամրապնդում, տնտեսավարման կարգի կատարելագործում, արդյունաբերության էկոլոգացում, գյուղատնտեսության էկոլոգացում, կյանքի որակի լավացում, բնական համակարգերի վերականգնում» (էջ 10-11):

Ուղղակի հրաշալի է՝ բարձր կարգի կյանքի որակ, բնակչության առողջության ապահովում, շրջակա բնական միջավայրի, հողի բերրիության, կենսաբանական տարատեսակների, մշակութային ավանդույթների պահպանություն, բնության պաշարների չափավոր օգտագործում, խախտված էկոհամակարգերի վերականգնում, շրջակա միջավայրի անդառնալի փոփոխությունների կանխարգելում: Սա այն է, ինչ երազում են բոլոր ազգերը: Սակայն «Կայուն զարգացում» հայեցակարգի նպատակների և դրանց հասնելու մեխանիզմների համադրումից հասկացվում է, որ, նախ, այս գայթակղիչ գերակայություններն անհասանելի են և, ապա, այդ Հայեցակարգը ստեղծել են ոչ թե բնության պահպանության և համայն մարդկության համար հուսալի ու բարեկեցիկ կյանք ապահովելու, այլ մարդկանց գեղեցիկ խոստումներով մոլորեցնելով և թակարդը գցելով իրենց ուզածին հասնելու նպատակով: Այս խնդիրների մասին խորհելիս, ականա մտաբերում եմ այն զավեշտը, երբ ընտրողների հետ հանդիպած քաղաքապետի թեկնածուն խոստանում է ընտրվելուց հետո քաղաքը հատող գետի վրա կամուրջ կառուցել: Դահլիճից հնչած այն առարկությանը, թե քաղաքում գետ չկա, ճարպիկ թեկնածուն պատասխանում է, որ նախ քաղաքի միջով գետ կանցկացնի: Թողնենք զավեշտը և հակիրճ խոսք ասենք քաղվածքում նշված գերակայություններից մի քանիսի մասին:

Քննարկվող փաստաթուղթը կազմողներին կարծես ամենևին չի հետաքրքրում այն, որ նույն էջում զետեղել են միմյանց հակասող գաղափարներ: Օրինակ, ինչո՞ւ է գերակա համարվում ժողովուրդների մշակութային ավանդույթների պահպանությունն ու հարստացումը, երբ դրան հասնելն իրականացվելու է, այսպես ասած, *էկոլոգիական մշակույթի ձևավորմամբ*, ինչը ըստ «Կայուն զարգացում» հայեցակարգի, նշանակում է, այդ նույն Հայեցակարգի դրույթներին համապատասխան՝ նոր մտածողության նկարագիր ունեցող և նոր մշակույթ կրող մարդու ստեղծում: Այսինքն՝ գոյություն ունեցող մշակութային ավանդույթների վերացում և մեկ կառույցի ձաշակով՝ նորի ստեղծում: Եթե նպատակն այդ է, ապա ի՞նչ իմաստ ունի ժողովուրդների մշակութային ավանդույթների պահպանության, առավել ևս՝ հարստացման մասին խոսելը: Գուցե այստեղ մշակույթների պահպանություն ասելով հասկացվում է աշխարհի հազարավոր ժողովուրդների մշակույթներին վերաբերող նյութերն ավերիչ ուժի արխիվում պահելը, որպեսզի, ասենք, սինոստների ժառանգորդները հետագայում ուսումնասիրեն և հպարտանան-հրճվեն, թե տեսեք, ինչ ժողովուրդներ ու մշակույթներ են ոչնչացրել, այն էլ՝ հենց այդ նույն մշակույթները ստեղծող-կրողների համաձայնությամբ ու ձեռքով:

Փաստաթղթում ներկայացված հասարակության և բնության միջև հաշվեկշիռ հաստատելը և ունեցած բնական պաշարներին համապատասխան վերարտադրություն թույլատրելը շատ խնդիրներ է պարզաբանում: Մինչ այս, տարակուսանք էր առաջացնում Ռիո դե Ժանեյրոյի Հռչակագրում առկա՝ բնական պաշարների պահպանությունը, վնասված և ավերված բնական համակարգերի վերականգնումը, միաժամանակ՝ աղքատության վերացումը և ընդհանրապես, համայն մարդկության համար բարեկեցիկ կյանք ապահովելը: Այժմ արդեն կարծես հասկանալի է դառնում, որ բնական պաշարները հավանաբար կպահպանվեն, բայց՝ բազում ժողովուրդների ոչնչացման միջոցով, իսկ դրան հասնելու ձանապարհը, դժբախտաբար, արդեն հարթված է և իրականացվում է, օրինակ, աղքատությունը ծավալելու, խորացնելու և անշրջելի դարձնելու, սահմանափակ (լոկալ, տեղային) պատերազմների, վտանգավոր սննդամթերքի ու դեղամիջոցների, ծնելիության

կանխման, հոգեբանական ու գեոֆիզիկական պատերազմների և այլ միջոցներով:

Ինչ վերաբերում է բնակչության առողջության պահպանությանը՝ ունեցած բնական պաշարներին համապատասխանող վերարտադրությանը և հասարակայնության ու բնության հավասարակշռությանը, ապա սրանց պատասխան-պարզաբանումը մասնակիորեն տալիս է քննարկվող փաստաթղթի «Կյանքի որակի բարելավումը» բաժնից բերված հետևյալ մեջբերումը. «Մի խումբ երկրներ, որոնց բնակչության թվաքանակը գերազանցելով առաջ է անցնում պարենի արտադրության և առաջին անհրաժեշտության ապրանքների աճից, պետք է ակտիվացնեն ժողովրդագրական քաղաքականությունը՝ **հաշվի առնելով Կայուն զարգացման չափանիշները**: Ինչպես ցույց է տալիս համամարդկային փորձը, **բնակչության աճի նվազեցումը** (ընդգծումները՝ Ղ.Ս.) բերում է նրա առողջության բարելավման» (էջ 21):

Այստեղ արդեն պարզ է դառնում, որ ըստ «Կայուն զարգացում» հայեցակարգի՝ «բնակչության առողջական վիճակի բարելավում» ասածը պետք է հասկացվի՝ բնակչության թվաքանակի նվազեցում: Եվ ահա պարզ է դառնում, թե Հայեցակարգում ինչն է բնակչության առողջական վիճակի բարելավումը գերակա համարվում: Այս Հայեցակարգին վերաբերող փաստաթղթերից մեկում նաև ասվում է, որ *ծնելիության նվազումը առողջության և կյանքի որակի բարելավման երաշխիք է*: Բնակչության թվաքանակի կրճատում և ծնելիության նվազում, ահա թե ինչպես պետք է հասկացվի քաղվածքում արտացոլված գերակայություններից մեկը՝ բարձր կարգի կյանքի որակի ապահովումը: Այս առումով խիստ ուշագրավ է «Աղքատության դեմ պայքարի ևս մեկ եղանակ» հրապարակումից բերված հետևյալ քաղվածքը. «Մարդու իրավունքների հանձնաժողովի տվյալներով, 1995-2000 թթ., **որպես աղքատության դեմ պայքարի միջոցներից մեկը Պերուի աղքատ շրջաններում իրականացվել է բնակչության զանգվածային ստերիլիզացում**: Ալբերտո Ֆուխիմորիի (այդ ժամանակ Պերուի նախագահ) թույլտվությամբ իրականացված «կամավոր հակաբեղմնավորման վիրահատություն» ծրագրին ստիպված մասնակցել են 320 հազար գյուղական կանայք: Ստերիլիզացիայի առավելություններ

րը գովազդվում էին թռուցիկների, պլակատների և ռադիոհայտարարությունների միջոցով, որոնցով պերուացի կանանց խոստանում էին «երջանկություն և բարեկեցություն»: ... Հանձնաժողովը գտնում է, որ զանգվածային ստերիլիզացիայի քաղաքականությունը առանձին շրջաններում ժողովրդագրական ձգնաժամ է առաջացրել՝ իր հետ բերելով տնտեսական անկում» («Գոլոս Արմենիի», 30.10.2003 թ.):

Պերուի նախագահը, սույն ստոր քայլը կատարելով, հավանաբար ապահովել է իր անձնական կյանքի անվտանգությունը, գուցե ստրկաբար նկատի ունենալով նաև այն, որ դրանից տարիներ առաջ Իտալիայի վարչապետը հրաժարվեց իր երկրում «ընտանիքի պլանավորում», իմա՝ «գրոյական աճի» ծրագիր իրականացնելուց, որի համար և՛ դաժանորեն սպանվեց: Ահա թե այդ մասին ինչ է գրում Ջոն Կոլեմանը. «Իտալիայի հանգուցյալ վարչապետ Ալդո Մորոն այն առաջնորդներից էր, ով հանդես եկավ «գրոյական աճի» քաղաքականության և իր երկրում բնակչության կրճատման դեմ, ինչով նա առաջացրեց «Հռոմի ակումբի» զայրույթը, որին «Օլիմպիականները» հանձնարարել էին իրականացնել այդ քաղաքականությունը: 1982 թվականի նոյեմբերի 10-ին Մորոյի մոտ ընկերը դատարանում վկայություն տվեց, որ նախկին վարչապետին սպառնացել է արտաքին գործոց թագավորական ինստիտուտի (RIIA) գործակալը, որը նաև հանդիսացել է 300-ի կոմիտեի անդամ, միաժամանակ լինելով ԱՄՆ-ի պետքարտուղար: Վկայի ասած մարդը Հենրի Քիսինջերն էր: 1978 թվականին «Կարմիրների բրիգադի» տեռորիստներն առևանգեցին վարչապետ Մորոյին և գազանաբար սպանեցին: Դատավարության ընթացքում «Կարմիրների բրիգադի» մի քանի անդամներ վկայություն տվեցին, որ իրենք իմացել են, որ Մորոյի սպանության նպատակով կազմված դավադրությանը մասնակցել են ԱՄՆ-ի պաշտոնատար անձինք: Հասկանալի է, որ Քիսինջերը Մորոյին սպառնալով ոչ թե ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն է իրականացրել, այլ, ավելի շուտ, գործել է 300-ի կոմիտեի արտաքին քաղաքականության ստորաբաժանում «Հռոմի ակումբի» հրահանգով» (Джон Колеман, Комитет 300, Тайны мирового правительства, Москва, 2000, с. 13-14): Կոլեմանը նույն գրքում գրում է, որ Մորոյի սպա-

նությանը ցանկանում էին Իտալիային զրկել արդյունաբերությունից և զգալիորեն կրճատել նրա բնակչությունը: Ազգային պետությունների ղեկավարների վրա արտաքին ուժի ազդեցության առումով, տեղին է հետևյալ մեջբերումը. «ԱՄՆ նախագահ Ջոն Բենդին, սպանությունից տասն օր առաջ Կոլումբիայի համալսարանում ելույթ ունենալով, ասել է. **«Նախագահական պաշտոնն առ այսօր օգտագործվել և օգտագործվում է ամերիկյան ժողովրդի նկատմամբ դավադրություն կազմակերպելու նպատակով** (ընդգծումը՝ Յ.Ս.), և մինչ այդ պաշտոնից հեռանալը ես պարտավոր եմ տեղեկացնել քաղաքացիներին իրենց իրական վիճակի մասին», այդպես էլ չհասցնելով որևէ բան տեղեկացնել կամ բացահայտել: Թողնելով ԱՄՆ սպանված նախագահի կողմից ակնարկված դավադրության մեխանիզմի պարզաբանումն առանձին ուսումնասիրողներին, արձանագրենք միայն, որ աշխարհի գերիզոր և ժողովրդավարության օրրաններից համարվող երկրի լեգիտիմ նախագահն այս ելույթով հավաստել է իշխանության վերահսկման աներևույթ մեխանիզմի առկայությունը» (Ազգ, 14.05.2008 թ.):

Մարդկությունն անհիշելի ժամանակներից ինչ-որ կերպ կարգավորել է ծնելիությունը. յուրաքանչյուր ընտանիք այս հարցը լուծել է ելնելով ավանդական փորձից և իր հնարավորություններից: Սակայն այսօր այդ խնդրի հանձնակատար է ներկայանում մի ուժ, որը ելնելով իր կրոնական դոգմաներից, Երկրագնդի բնական պաշարներն իր սեփականությունն է համարում և աշխարհի տիրակալ դառնալու հիվանդագին նկրտումներ ունի:

Նորից անդրադառնալով «ընտանիքի պլանավորում» ծրագրին, ցավով նշենք, որ «գրոյական աճի» այդ ծրագիրը, դրամաշնորհների ուղեկցությամբ առանց որևէ խոչընդոտի, նույնիսկ գովազդների ուղեկցությամբ, իրականացվեց Հայաստանի Հանրապետությունում՝ առողջապահության նախարարության համակարգում: «Ընտանիքի պլանավորման» հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետությունում իրականացվեց նաև արդյունաբերության կասեցման ծրագիրը: Այս երկու ծրագրերը մերժելու համար զոհվեց Հայրենիքի նկատմամբ պարտքի գիտակցման տեր Իտալիա-

յի երջանկահիշատակ վարչապետը: Այս խնդրում տրամագծորեն հակառակ մոտեցման արդյունքում մեր երկրի պաշտոնյաներն ավերիչ ուժի խոսնակ հանդիսացող կամ ինչ-ինչ պատճառներով նրա պատվերը կատարող Միջազգային կազմակերպությունների կողմից մեղալների ու գովեստների են արժանանում:

Նորանկախ երկրներին վերաբերող նույն փաստաթղթի մեջ կարդում ենք. «Կայուն զարգացման համար նյութական բազա ստեղծելու համար, հանուն բնական բարիքների ու պաշարների չարաշահումների դեմ պայքարի և հասարակության տարբեր շերտերին ազգային ունեցվածքից օգտվելու հնարավորություն ստեղծելու համար երաշխավորվում է սահմանել բնական պաշարների օգտագործման վարձ, հաշվի առնելով նրանց իրական արժեքները (ռենտավճարներ): Ռենտավճարները կնպաստեն բնության բարիքների տնօրինման հարցում արդարություն հաստատել, ինչը նպաստավոր կլինի աղքատության վերացման և սոցիալական տարբերությունները մեղմելու գործում: Բոլոր բևօգտագործողների վրա պետք է իրականացված լինի ռենտային վճարների աստիճանական տարածումը: Դրա հետ մեկտեղ, սկսելու է գործել Կայուն զարգացման բնագավառում միջոցառումները խթանող համակարգը» (էջ 15-17): Այստեղ նաև ասվում է, որ յուրաքանչյուր երկրում պետք է ռենտային վճարումների մասին օրենքներ ընդունվեն:

Չերթական չհիմնավորված հայտարարություն է այն դրույթը, թե իբր բնական պաշարների չարաշահումների դեմ պայքարի և հասարակության տարբեր շերտերին ազգային ունեցվածքից օգտվելու հնարավորություն ստեղծելու համար է սահմանվելու բնական պաշարների օգտագործման վարձը: Հակառակը, Հայաստանի Հանրապետությունում գործող կարգից ելնելով, վստահորեն կարելի է ասել, որ ռենտավճարներ սահմանելով, ազգային-պետական ունեցվածքն արդեն բաժին է դառնում հիմնականում անդրազգային որոշ ընկերությունների, իմա՝ ընտանիքների: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում գործող նույն «Կայուն զարգացում» հայեցակարգի պահանջներին համապատասխան ընդունված օրենքների սահմանումներով, առանձին անհատներ կան

ընկերություններ, ստանալով բնական պաշարների օգտագործման-շահագործման թույլտվություն (ջրային օբյեկտ, հանքավայրեր և այլն), մի չնչին գումար են մուծում որպես ռենտավճար և փաստորեն դառնում այդ բնական պաշարների իրական տերերը: Ի վերջո, պետությանը, իմա՝ ժողովրդին, բաժին են հասնում, օրինակ, շահագործած հանքերի խոռոչներն ու թափոնները: Պարզ է, որ այս պայմաններում հնարավոր չէ, որ աղքատությունը մեղմվի կամ վերանա: Հակառակը, բնական պաշարներն անդրազգային ընկերություններին և տեղի զորեղներին հանձնելով, ժողովուրդը փաստորեն կորցնում է իր գլխավոր հենարանը, դրա հետ մեկտեղ, օրինակ, ինտենսիվ հանքարդյունաբերության պայմաններում, ստիպված է ապրել արդեն վտանգավոր նյութերով աղտոտված միջավայրում, ուր աստիճանաբար սահմանափակվելու են երկրագործությամբ զբաղվելու հնարավորությունները:

Բնական պաշարների համար ռենտավճար սահմանելը միայն նշվածով չի սահմանափակվում: Քաղվածքում եղած այն սահմանումը, որ *բոլոր բնօգտագործողների վրա պետք է իրականացված լինի ռենտային վճարների աստիճանական տարածումը*, արդեն ցույց է տալիս, որ գործընթացի ծավալումները դառնալու են ծայր աստիճան վտանգավոր: Օրինակ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1993 թվականին ինքնաթիռներից օգտվելու համար օդի վարձ սահմանեց (յուրաքանչյուր թռիչքին՝ 10 հազար դրամ), որը կոչվում էր «օդի հարկ», սակայն երբ դժգոհություններ եղան, այդ գումարը հավելվեց տոմսի արժեքին: Պարզ է, որ դա մարդու շնչած կամ նրա համար օգտագործած օդի վարձավճարն է, որը սկզբնական փուլում այլ կերպ է ձևակերպվում, մինչև մարդիկ դրա հետ կհարմարվեն, ինչպես նաև՝ մինչև իրականանա յուրաքանչյուր երկրում ռենտային վճարումների մասին օրենքների ընդունումը, որից հետո արդեն կգործադրվի օրենքի ուժը՝ պարտադրանքը: Այստեղ նպատակահարմար է նորից մեջբերել Թոմաս Սյունցերի այն վրդովմունքը, որ *բոլոր արարածները՝ ձուկը ջրում, թռչունը երկնքում, սեփականություն են դարձել*: Սակայն Սյունցերը դժվար թե կարողանար երևակայել, որ իրենից շուրջ մեկուկես դար հետո, նույն շահադիտական և առավել զազրելի նպատակներով. ջուրը բնության գրկում արդեն ապրանք է համարվելու, և փորձելու

են յուրաքանչյուր անհատին պարտադրել, որպեսզի իր շնչած օդի համար էլ հարկ վճարի:

Ինչ վերաբերում է քաղվածքում նշված՝ Կայուն զարգացման համար նյութական բազա ստեղծելուն, ապա այդ նյութական բազան, այդ թվում՝ համաշխարհային բնական պաշարները, փորձում են բաժին դարձնել միայն մի էթնոսի: Այս առումով՝ հրեականություն-հուդայականություն-սիոնիզմը արդեն մի քանի հազարամյակ է, ինչ պատերազմ է հայտարարել հանուր մարդկությանը: Եվ դժվար չէ գուշակել, որ «Կայուն զարգացում» հայեցակարգի պահանջներին համապատասխան ստեղծվելիք կառավարման համակարգն այնպիսին է լինելու, ինչպիսին արդեն վաղուց գոյություն ունեցող սովետրային համաշխարհային կառավարությունն է, որը ձգտում է հասնել նրան, որպեսզի կարողանա աշխարհը կառավարել մեկ կենտրոնից: Այժմ, փաստորեն, մնում է ինչ-որ մի պատրվակով այդ ծածուկ կառավարությունն անդրկուլիսից հանել, օրինականացնել և հստակեցնել, թե որ ընտանիքին կամ ընտանիքներին է վերապահվում ղեկավարել այդ կառավարությունը: Եվ եթե վերջինս իրականություն դառնա, այսինքն՝ համաշխարհային հեղաշրջում կատարվի, ապա «Կայուն զարգացում» հայեցակարգն իր հիմնական գործը կատարած կլինի: Գուցեև դրանից հետո շրջանառության մեջ դրվի, ասենք, «կայուն հանդուրժողականության ու կայուն համբերության» հայեցակարգ հերթական պարտադրանքը:

Ժամանակին սիոնիստները փորձել են այս նպատակին հասնել նույնիսկ մեկ անհատի միջոցով: Յետևողական գովազդի և այլ միջոցներով համաշխարհային ծանաչում ստացած սիոնիստֆիզիկոս Ալբերտ Էյնշտեյնը համաշխարհային կառավարություն ստեղծելը համարել է փրկարար՝ իբր համայն մարդկության համար: Այս առումով նա գրել է. **«Օրինական հիմքով ստեղծված համաշխարհային կառավարությունը պետք է իր վրա վերցնի աշխարհի բոլոր ժողովուրդների ձակատագրերի պատասխանատվությունը: Նրա հստակ ձևավորած սահմանադրությունը պետք է հոժարակամ ընդունեն բոլոր ազգային կառավարությունները: Համաշխարհային կառավարությունը պետք է կարողանա կարգավորել ժողովուրդների միջև եղած բախումները: Ահա թե ինչու, նա ուժի**

կարիք ունի, քանզի նույնիսկ լավագույն դատարանը կորցնում է իր ամեն կարգի նշանակությունը, **եթե չունի պատիժ կայացնելու հնարավորություն**: Բարոյական հեղինակությունն արդեն չի կարող խաղաղության երաշխիք լինել: **Ուժը, որի մասին խոսվում է, դա ռազմական ուժն է, որը պետք է շարժուն գործի և արագ միջամտությամբ կանխի որևէ երկրի պատերազմի մեջ մտնելը**: Եվ հանուն դրա, մասնակից պետությունները պետք է պատրաստ լինեն վճարելու որոշ գին՝ **իրենց զինված ուժերը պետք է ենթարկեն վերազգային կառավարությանը**» (В. Бояринцев, Еврейские и русские ученые, мифы и реальность, Москва, 2001, с. 47-48):

Նորանկախ երկրներում «Կայուն զարգացում» հայեցակարգին անցնելու գործողությունների ծրագրում էյնշտեյնի հուդայական երազանքը մարմնավորվել, կերպարանավորվել է հետևյալ ձևակերպման մեջ՝ **«Կայուն զարգացման մոդելին հասնելու իրական առաջընթացը հասանելի կլինի միայն համաշխարհային ամբողջ հանրույթի լավ համակարգված ու պլանավորված գործունեությամբ»**: Այս փաստաթղթում նաև պահանջվում է, որ բոլոր երկրները պետք է ընդունեն «Կայուն զարգացմանը խթանող միջոցառումների համակարգի մասին» օրենք և որդեգրեն Կայուն զարգացման մոդելին համապատասխան՝ **գլոբալացման գործելակերպ**, ինչպես նաև դրամական նվիրատվություններ (դոտացիաներ) պահանջող ոլորտների համար մշակեն ինքնաֆինանսավորման անցնելու քաղաքականություն:

Փաստաթուղթն ամփոփվում է հետևյալ հորդոր-խաբկանքով. **«Նորանկախ երկրների հասարակությունը և կառավարական շրջանակները ինչքան շուտ ընտրություն կատարեն Կայուն զարգացման ուղին ընտրելու օգտին, այդքան քիչ կլինեն համակարգված ձգնաժամերի, մարդածին աղետների առաջացման ռիսկի և բնական միջավայրի անդառնալի քայքայիչ գործընթացների զարգացման հավանականությունը»**:

Նորից նույն երգն է երգվում՝ հիմնավորումից զուրկ խոստումներ, միաժամանակ՝ շահագրգռություն ու սպառնալիք, ինչը համե-

մատելի է այն բանի հետ, երբ անդրշիրիմում փրկվելու և այնտեղ հավերժորեն բարեկեցիկ կյանք ունենալու խոստումով ու սպառնալիքով պարտադրում են հավատալ քարոզվող, այսպես ասած, գերբնական ուժին: Սակայն «Կայուն զարգացում» հայեցակարգով արդեն իրական` ֆիզիկական աշխարհում են երաշխավորում կորստից փրկվելը և բարեկեցիկ ու հուսալի կյանքով ապրելը: Փաստորեն, Նորանկախ երկրներից պահանջում են միայն ենթարկվել այս Հայեցակարգի դրույթներին, որից հետո այդ երկրները իբր համարյա ապահովագրված կլինեն ճգնաժամներից և կորստաբեր այլ երևույթներից: Այսպիսի խոստում-հավաստումները տեղին են միայն կախարդական հեքիաթներում և զավեշտներում, երբ կախարդական ձողիկով կամ ուղղակի ցանկությամբ, օրինակ, մոծակը փիղ է դառնում և, ընդհանրապես, ամեն ինչ իրականանալի է:

Բացահայտ ուտոպիան-խաբկանքը մատուցվում է որպես իրականանալի` կյանքի կոչվելիք բարիք, այն էլ` աշխարհի բոլոր երկրների համար սահմանադրության կարգավիճակով: Եվ ինչպես «Կայուն զարգացում» հայեցակարգի մյուս փաստաթղթերում, այստեղ նույնպես երևակայական երջանկություն քարոզելով համոզում են, որ աշխարհի փրկությունը իբր կարող է երաշխավորվել միայն աշխարհի միակենտրոն կառավարման համակարգի ստեղծմամբ:

Այսօր, երբ գլխավորապես աղքատ երկրներում «Կայուն զարգացում» հայեցակարգը սահմանադրության դեր է կատարում, առավել պարտադրական է դառնում ըմբռնել-հասկանալ դրա նպատակը: Այս Հայեցակարգի մեջ արտացոլված գաղափարների բուն նպատակը բացահայտելուն կարող է մեծապես նպաստել այն, որ սրա դրույթները ուսումնասիրելիս, զուգահեռաբար ուսումնասիրվեն նաև սիոնիզմի գաղափարախոսության-ծրագրի դրույթները: Եվ եթե ուսումնասիրողները համոզվեն, որ այդ երկու գաղափարախոսությունների նպատակները նույնն են, ապա արդեն նրանց համար պարզ կդառնա, որ «Կայուն զարգացում» հայեցակարգը սիոնիզմի ծրագրի վերամշակված-մոդեռնացված, ժամանակակից շունչ ու ոգի տված արտացոլումն է: Այս պարագայում կարելի է ասել, որ մեր օրերում սիոնիզմի ծրագիրը քողարկված է «Կայուն զարգացում» անվան տակ:

Աշխարհի պետությունների կողմից այս Հայեցակարգի հապճեպ ընդունումն առայժմ դժվար բացատրելի է: Այստեղ գուցե որոշակի դեր է կատարում այն, որ թագավորական համակարգերը կտրուկ նվազել են, իսկ գործող թագավորների դերն էլ լիարժեք չէ: Ակնհայտ է, որ ժողովրդի-երկրի-պետության նկատմամբ ընտրությամբ (հաճախ՝ ընտրության արդյունքը կեղծելով) երկրի առաջին դեմք դարձածի վերաբերմունքն արմատապես տարբեր է, քան այդ խնդրում թագավորի վերաբերմունքն է: Ժառանգաբար փոխանցվող կարգով իշխանության հասած գահակալն իրեն այդ երկրի տերն է համարում և ամեն կարգի ջանք է թափում երկիրն իր ժառանգորդին հնարավորինս բարվոք վիճակում հանձնելու, ինչպես նաև մտահոգ է նախկինում թագավորած իր հայրերի համբավն ու հիշատակը չարատավորելու համար: Հիմնականում այսպիսի միջավայրում էլ կրթվում ու դաստիարակվում է ապագա թագավորը (ցավոք, այժմ թագավորները արդեն չունեն այն դերը, ինչպես դա եղել է դասական թագավորությունների ժամանակ): Թագավորագլուխ՝ նախագահական պետության առաջին դեմքը հոգեբանորեն մեկ այլ վիճակում է: Պետություն կառավարելու նպատակով չէ, որ կարգավորված է եղել նրա ստացած կրթությունն ու դաստիարակությունը: Կարելի է ասել, որ հիմնականում նախագահ ընտրվելուց հետո միայն նա ստիպված է լինում ծանոթանալ պետություն կառավարելու կարգ ու կանոնին: Սակայն այս խնդիրը խորությամբ ուսումնասիրելու-հասկանալու ճանապարհը նրա համար համարյա փակ է, այն պարզ պատճառով, որ հրատապ լուծում պահանջող ամենօրյա մանր ու մեծ բազմաբնույթ հոգսերը, ինչպես նաև անձնապես տնտեսական գործունեությամբ՝ ձեռներեցությամբ զբաղվելը խլում են նրա ամբողջ ժամանակը: Եվ միայն իրեն բաժին հասած ժամանակահատվածի ավարտման փուլում, երբ նա արդեն սկսում է պետության կառավարման որոշ հարցերում կողմնորոշվել, իշխանական դեկն արդեն հանձնում է նորընտիր նախագահին: Հետաքրքիր է իմանալ, թե ինչպե՞ս և ինչո՞ւ արժեզրկվեց մարդկության ամենամեծ նվաճումներից մեկը՝ թագավորական համակարգը (այն աստիճանաբար դեպի վերացումն է գնում), որի առկայության պայմաններում թերևս անհնար կլինեին համայն մարդկության ձակատագրի հետ այժմ իրականաց-

վող կործանարար խաղերը: Գուցե թագավորության վերացումն էլ կանխավ ծրագրված է եղել: Եթե այս վարկածն ընդունենք, ապա կարելի է ասել, որ դավադիր ուժը ընտրել է համայն մարդկությանը տիրելու ամենահուսալի ճանապարհը: Չէ՞ որ ոչխարի հոտերին տիրանալու և նրանց հետ ըստ ցանկության վարվելու համար նախ պետք է վերացնել հովիվներին:

Վստահորեն կարելի է ասել, որ, օրինակ, թույլ և նորանկախ երկրների տնտեսությունները շոկային թերապիայի միջոցով առողջացնելու, իրականում այդ տնտեսությունները կազմալուծելու նպատակով ստեղծված, վերը հիշատակված «Վաշինգտոնյան կոնսենսուսը» դասական թագավորությունների առկայության պայմաններում նույնպես կմնար որպես մեռելածին մի նկրտում: Այդ ո՞ր թագավորը կհամաձայներ «Կայուն զարգացում» հայեցակարգի շրջանակներում կազմված Համաշխարհային առևտրի «բարեփոխման» հանձնարարականներով-պատվիրաններով ղեկավարվել, այսինքն՝ կանխավ համաձայն լիներ իր իսկ պետության կազմաքանդմանը:

«Կայուն զարգացում» հայեցակարգը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1102-Ա որոշմամբ ստեղծեց Հայաստանի Հանրապետության Կայուն զարգացման ազգային խորհուրդ: Նույն որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարին հանձնարարվել է այս խորհրդի աշխատանքները կազմակերպելու նպատակով ձևավորել Կայուն զարգացման քաղաքականություն: Կառավարության այս որոշման համար հիմք է հանդիսացել «Կայուն մարդկային զարգացում» հասարակական կազմակերպության (ղեկավար՝ Կարինե Դանիելյան) կողմից կազմած «Ռիո+10 Ազգային գնահատման զեկույցը» (Երևան, 2002 թ.): Այս փաստաթղթում արտացոլված են «Կայուն զարգացում» հայեցակարգի դրույթներն ու դրանց հասնելու մեխանիզմները, ինչպես նաև Հայաստանի

Հանրապետությունում այդ հայեցակարգի պահանջներին համապատասխան կատարված և կատարվելիք «բարեփոխումները»:

Ձեկույցը սկսվում է գայթակղիչ՝ ակտրժակ գրգռող հավաստունով. «Կայուն զարգացման քաղաքականության ընդունումը կօգնի զարգացող երկրներին՝ խուսափելու շրջակա միջավայրի խնդիրների ապահովման և հետագա վերականգնման անհրաժեշտ ծախսեր կատարելուց, միջոցներ խնայելով ապագա զարգացման համար» (էջ 5):

Քաղվածքից պարզ հասկացվում է, որ զարգացող (թույլ, աղքատ) երկրների շրջակա միջավայրի ոլորտում պահանջվող ծախսերն իբր իր վրա է վերցնելու ինչ-որ մի կառույց, որպեսզի նրանք այստեղ տնտեսած գումարներն ուղղեն իրենց երկրների այլ խնդիրների լուծմանը: Փաստորեն դրախտային պայմաններ են խոստացվում: Կարիքի մեջ գտնվող կամ, ընդհանրապես, այդ ո՞ր պետությունը կիրառարվի այսպիսի գանձից: Սակայն պարզ երևում է և դժվար չէ ապացուցել, որ դա միայն խոստում է և ուրիշ ոչինչ: Այստեղ, բնականաբար, հարց է առաջանում, թե պահանջվող գումարներն ի՞նչ աղբյուրներից են հոսելու, ի՞նչ ծավալների են հասնելու, դրանք այդ ո՞ր կազմակերպությունն է հատկացնելու և այդ ի՞նչ անասելի հարստության տեր է այդ կազմակերպություն-կառույցը: Օրինակ, շատ փոքր տարածք ունեցող Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի խնդիրներին պատշաճ լուծում տալու համար տարեկան կպահանջվի տասնյակ միլիարդավոր դոլարի ներդրումներ, երբ «Կայուն զարգացում» հայեցակարգը որդեգրած զարգացող երկրների թիվը գերազանցում է 170-ը: Միայն պետք է հաշվել, թե այդ երկրները յուրաքանչյուր տարի քանի՞ տրիլիոն դոլարի ներդրումներ են պահանջելու իրենց շրջակա միջավայրի խնդիրները լուծելու համար: Նպատակը պարզ ու ակնառու է: Շահագրգիռ ուժը ցանկանում է գայթակղիչ, սակայն գործնականում անիրականանալի խոստումներով երկրներին մոլորեցնել և ներքաշել այս Հայեցակարգի ոլորտը, որից հետո արդեն խոստումները չկատարելը մշտապես արդարացնել, օրինակ, «ժամանակավոր դժվարություններ», «անցումային փուլ» և նման այլ հորինվածքներով: Հարմանալի է, որ այս ակնհայտ խաբկանքն իր արժանի գնահատականը չի ստանում: Անգամ

վերը բերված քաղվածքի մանրագնին ու բազմակողմանի վերլուծությունն արդեն իսկ բավարար է, որպեսզի բացահայտվի «Կայուն զարգացում» հայեցակարգի անիրականանալի, շինծու և կեղծ լինելը: Հայաստանի Հանրապետության (ինչպես և յուրաքանչյուր երկրի) ղեկավարը պետք է քաղաքական կամք դրսևորի և պարտադրվող դրույթները չընդունի որպես կրոնական անքննելի դոգմաներ և կանխի այդ վտանգավոր գաղափարախոսության ծավալումը:

Քննարկվող Ձեկույցում Հայաստանի Հանրապետությունը գովաբանվում է որպես «Կայուն զարգացում» հայեցակարգի սահմանումները բարեխիղճ կատարողի. *«Ապահովվել են որոշակի հաջողություններ ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման ասպարեզում, ինչը կոչված է նպաստել ներդրումների խրախուսմանը: ՀՀ մեծ առաջընթաց է գրանցվել առևտրային ռեժիմի ազատականացման գործում: Այժմ Հայաստանի Հանրապետության առևտրային ռեժիմը հանդիսանում է ԱՊՀ երկրների մեջ ամենաազատականներից մեկը»* (էջ 7):

Այնպես է ներկայացվում, որ իբր Հայաստանի Հանրապետությունում իրականացված ու իրականացվող ներդրումային քաղաքականությունն ու առևտրի ազատականացումը բխում են Հայաստանի Հանրապետության շահերից, երբ այդ երկուսն էլ մեր երկրի համար կործանարար հետևանքներ ունեցան ու շարունակում են ունենալ (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված վաշինգտոնյան համաձայնագրի պահանջներից մեկն այն է, որ պետք է ընդունվի օտարերկրյա ներդրմանը խթանող քաղաքականություն: Հիշենք, որ ժամանակին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը հաճախ էր սպառնում, որ օտարերկրյա ներդրումներին խոչընդոտողները կպատժվեն): Օրինակ, ներդրումային քաղաքականության պարտադրանքով էր, որ ժողովրդի-պետության ունեցվածքը, համարյա ձրի հայտնվեց փոքրաթիվ մարդկանց ձեռքում: Հայաստանի Հանրապետության բնակչությունը, անձանոթ լինելով այս խնդրին և հավատալով ու վստահելով պետական քարոզչությանը, հույս էր փայփայում, որ այդ քաղաքականության շնորհիվ դեպի երկրի տնտեսություն կհոսի օտարերկրյա կապիտալը, որը և կզարգացնի

մեր երկիրը: Մարդիկ չգիտեին ու չէին կարող պատկերացնել, որ այդ նույն ներդրումային քաղաքականությամբ պետք է կողոպտվի հայ ժողովրդի ունեցվածքը: Օրինակ, ՀՀ կառավարության կողմից շահագործվող ու շահութաբեր Հանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանը վաճառվեց 132 մլն դոլարով (ՀՀ կառավարության թիվ 583-Ա որոշում, 09.12.2004 թ.), երբ պաշտոնական վիճակագրության տվյալներով, հենց առաջին տարվա (2005) ընթացքում այդ գործարանի արտադրանքը կազմել է 87,048 մլրդ դրամ, իսկ մաքուր շահույթը՝ համարյա այնքան, ինչքանով գնվել է գործարանը: 2006 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին գործարանի սեփականատերերի ստացած զուտ շահույթը կազմել է 120 մլն դոլար (Деловой экспресс, 15.12.2006 г., N 47 (704)): Նույն հաշվարկով Քաջարանի պղնձամոլիբդենային գործարանի այդ նույն տարվա մաքուր շահույթը կկազմի 160 մլն դոլար (2006 թվականին գործարանը վերամշակել է 7,5-8 մլն տոննա հանքաքար, այժմ՝ 2011 թ. գործարանում վերամշակվող հանքաքարը կազմում է 15,5-16 մլն տոննա, հետևաբար՝ տարեկան մաքուր շահույթը կկազմի մոտ 320 մլն դոլար, մոտակա տարիներին նախատեսվում է վերամշակվող հանքաքարի տարեկան ծավալը հասցնել նախ՝ 20, ապա՝ 35 մլն տոննայի (Деловой экспресс, 28.04.2007 г., 07.09.2007, N 33 (739)), վերջինի դեպքում, նույն հաշվարկով, տարեկան մաքուր շահույթը, ամեն կարգի հարկերը հանված, կկազմի ավելի քան 700 մլն ԱՄՆ դոլար, սրան պետք է ավելացվի նաև վերջին տարիներին պղնձի և մոլիբդենի գների կտրուկ բարձրացումից առաջացած հավելյալ շահույթը): Նաև պետք է նկատի ունենալ, որ նշված 132 մլն դոլարը սեփականատերը վճարել է գործարանը շահագործելուց մեկ տարի անց, ինչն ամրագրված է ՀՀ կառավարության թիվ 583-Ա որոշման մեջ («3. Սահմանել պայմանագրի գինը՝ 132 մլն ԱՄՆ-ի դոլար... 4. Պայմանագրի գինը գնորդների կողմից պետք է վճարվի հետևյալ ժամկետներում՝ ա) առնվազն 40-45 մլն ԱՄՆ-ի դոլարը՝ մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը. բ) մնացած 87-92 մլն ԱՄՆ-ի դոլարի վճարումներն սկսվում են 2005 թվականի հուլիսի 1-ից՝ փոխհամաձայնեցված ժամանակացույցով: Կճարումների վերջնաժամկետ է սահմանվում 2005 թվականի դեկտեմբերի 31-ը...»): Փաստորեն, միլիարդավոր դոլարի արժեք ունեցող գործարանը գնվել է այդ նույն

գործարանի մեկ տարվա շահույթի 82 տոկոսով, այն էլ վճարվել է հիմնականում գործարանից ստացած այդ տարվա շահույթից: Ահա և Հայաստանի Հանրապետության համար օտարերկրյա ներդրումների «օգտակարությունը»: Եվ սա եզակի օրինակ չէ: Ապապետականացված ոլորտներում և օբյեկտներում այլազան եղանակներով լրիվ չի ներկայացվում ստացած շահույթը, իսկ հաճախ էլ՝ իրականում շահութաբեր ձեռնարկությունները սնանկ են ներկայացվում, որպեսզի սեփականատերերը քիչ հարկ վճարեն կամ ընդհանրապես հարկ չվճարեն, ինչպես նաև՝ օգտվեն այլևայլ արտոնություններից: Սրան պետք է հավելվի նաև այն, որ, օրինակ, հանքարդյունաբերության ոլորտում ներդրումներ կատարողները՝ հանքերին տիրացածները, օրենսդրորեն արտոնված են իրենց արտադրած թափոնների համար հարկեր չվճարել:

Նույն ներդրումային քաղաքականությամբ՝ ջրի, առևտրի, գյուղատնտեսության, կապի, էներգետիկայի, հանքարդյունաբերության, տրանսպորտի, արդյունաբերության և այլ ոլորտներից առաջացած շահույթին արդեն հիմնականում տիրանում են ներդրողները: Այդ գումարներից, հավանաբար, բաժին է հասնում նաև որոշ պաշտոնյաների, հակառակ պարագայում դժվար թե ժողովրդի-պետության ունեցվածքի կողոպուտը շարունակական լիներ ու չկասեցվեր: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրումային քաղաքականություն ասելով պետք է հիմնականում հասկացվի՝ օտարերկրյա «ներդրողների» և տեղական պաշտոնյաների կողմից՝ ժողովրդի ունեցվածքի կողոպուտ օրը ցերեկով, օրենքով սահմանված կարգով: Այս քաղաքականության հետևանքով օրեցօր առավել դատարկվում է պետական գանձարանը և արդեն ակնհայտ է, որ անգամ սահմանադրորեն պետության բացառիկ սեփականություն համարվող ոլորտները, պետական միջոցների սղության պատճառով, աստիճանաբար կսնանկանան, կքայքայվեն և ապա կսեփականաշնորհվեն:

Ինչ վերաբերում է փաստաթղթում գովաբանված *ամենաազատական առևտրային ռեժիմին*, ապա այստեղ իրավիճակի տերերին լիուլի հնարավորություն է ընձեռված ապրանքի գների հարցում իրենց կամքը թելադրել և գերշահույթ ստանալ, իսկ բնակչության մեծամասնությունը, որը նույն ավերիչ ուժի կազմած սցե-

նարով կարճ ժամանակահատվածում հայտնվեց աղքատության ու չքավորության մեջ, աստիճանաբար զրկվում է անգամ կենսական կարիքներն ապահովող ապրանքներ գնելու հնարավորությունից: 2011 թվականի մարտին ՀՀ կառավարությունը հայտարարեց, որ պետք է կասեցվի որոշ ապրանքների գների կտրուկ բարձրացումը: Սրան անմիջապես հաջորդեց Միջազգային արժույթի հիմնադրամի (ՄԱՀ) այն ցուցմունքը, թե պետք է հավատարիմ մնալ գների ազատականացման գաղափարին, իսկ բնակչության համար ապրանքների մատչելիությունը պետք է ապահովվի մեկ այլ ձևաապարիով: Այսպիսի ցուցմունք տվող ՄԱՀ-ի պաշտոնյան, հավանաբար ուզում էր հասկացնել, թե նոր վարկեր վերցրեք, որպեսզի կարողանաք թանկացած ապրանքները գնել: Եվ ընդհանրապես, ի վերջո, ո՞ւմ շահերին է ծառայում արդյունաբերության, առևտրի և մյուս ոլորտների ազատականացումը: Սույն հարցի պատասխան կարելի է համարել այն, որ այս գաղափարի տարածմամբ սկիզբ դրվեց մարդկության մեջ ունեցվածքի կտրուկ ու աղետալի բևեռացմանը: Նաև այս գործելակերպն է, որ, օրինակ, անհագ ու անպատկառ դավադիր ուժին հնարավորություն տվեց քամել ու կլանել բազում երկրների աշխատավորության ստացվածքը (Եհովայի պատգամները Իսրայելին՝ «Քու դռներդ միշտ բաց պիտի ըլլան, ցորեկ ու գիշեր պիտի չգոցուին, որպէսզի քեզի կրեն ազգերուն ստացուածքը» կամ «Ազգերուն կաթը պիտի ծծես, թագաւորներուն ստինքը պիտի ծծես» (Եսայ 60:11, 16)): Պետք է նկատի ունենալ, որ, օրինակ, Հայաստանի Հանրապետությունում ոլորտների և խոշոր օբյեկտների սեփականաշնորհման ընթացքում Միջազգային ֆինանսական կազմակերպությունների, օրինակ, Համաշխարհային բանկի կարծիքը ունեցել է վճռորոշ նշանակություն՝ թե ովքեր պետք է լինեն դրանց սեփականատերերը:

Քննարկվող փաստաթղթում նաև ասվում է, որ *«մեր երկրի տնտեսական, շրջակա միջավայրի և սոցիալական արդարության տարրերի փոխկապակցվածությունը ի հայտ է բերում նոր մտածելակերպի և նոր գործողությունների պահանջ, որը իրականում կստեղծի այնպիսի ապագա, երբ մարդկային հասարակությունը և բնությունը կհամագոյատևեն փոխադարձ շահերով և որտեղ չքա-*

վորության և բնական պաշարների անխնա չարաշահումը կծգտի նվազագույնի»: Այստեղ բառացիորեն կրկնվում է այն խաբկանքը, ինչն առկա է «Կայուն զարգացում» հայեցակարգի հիմնադրույթներում և Նորանկախ երկրներին վերաբերող փաստաթղթերում, միայն այն տարբերությամբ, որ Ռիո դե Ժանեյրոյի Հռչակագրում խոսվում է համայն մարդկության մտածելակերպի փոփոխման, Նորանկախ երկրներին վերաբերող փաստաթղթում՝ այդ երկրների բնակչության մտածելակերպի փոփոխման, իսկ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող փաստաթղթում՝ հայ մարդու մտածելակերպի փոփոխման մասին: Ստացվում է, որ մարդիկ պետք է հրաժարվեն հազարամյակների ընթացքում ձևավորված իրենց մտածելակերպից և հնազանդորեն ենթարկվեն ինչ-որ մի ուժի և դա էլ իբր կլինի, այսպես կոչված, նոր մտածելակերպ ձեռք բերելը, որն էլ իբր *իրականում կստեղծի այնպիսի ապագա, երբ մարդկային հասարակությունը և բնությունը կհամագոյատևեն փոխադարձ շահերով:* Ոչնչով չերաշխավորվող ու չհիմնավորված խոստումներ: Այսպիսի խոստումների կարելի է հանդիպել միայն քննության չենթարկվող կրոնական դոգմաներում: Պետք է ասվի, որ վերը նշված երեք փաստաթղթերում էլ գաղափարներ արտահայտելիս ընդգծված են ծայր աստիճանի համարձակությունն ու անպատասխանատվությունը, մարդկանց նկատմամբ հեզմանքն ու արհամարհանքը, խղճի ու պատկառանքի բացակայությունը:

Զեկույցի 63-րդ էջում կարդում ենք. «*«Ռիո +10» պատմական ժամանակահատվածում Հայաստանում իրականացվել են բարեփոխումներ գրեթե բոլոր բնագավառներում՝ կատարելագործվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ համահունչ դարձնելով Կայուն զարգացման սկզբունքներին»:*

Իրոք, նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում կյանքի բոլոր ոլորտները ենթարկվեցին «Կայուն զարգացում» հայեցակարգի միջամտությանը, և դրանով թելադրված «բարեփոխումների» հետևանքով երկիրը հայտնվեց աղետալի իրավիճակում: Օրինակ, մեր երկրի օրենսդրությունը *Կայուն զարգացման սկզբունքներին* համահունչ դարձնելը բերեց նրան,

որ օրեցօր առավել աղքատանում և իր դերը կորցնում է պետությունը, գիշատչորեն կողոպտվում և երկրից արտանդվում են բնական պաշարները, ավերվում ու կայուն աղտոտվում են հողատարածքները, գերիշխում է սանձարձակ շուկան, ապրանքների և ծառայությունների գները օրեցօր բարձրանում են, առանձին ընտանիքներ, հիմնականում օտարերկրյա, տիրացել են ժողովրդի ունեցվածքին, իսկ բնակչության մեծամասնությունը հայտնվել է աղքատության մեջ և փաստորեն զրկվել պետական աջակցությունից: «Կայուն զարգացում» հայեցակարգի դրույթներին համահունչ ընդունված օրենքներից մի քանիսի մասին կխոսվի դրամաշնորհներին վերաբերող բաժնում: Օրինակ, ջրային նոր օրենսգիրք ընդունելուց հետո աղքատների համար գյուղատնտեսության որոշ ոլորտներ արդեն դարձել են ոչ շահութաբեր...

Նույն փաստաթղթից բերենք մեկ այլ քաղվածք. «Կայուն տնտեսական աճի ապահովման տեսանկյունից, Առևտրի Զամաշխարհային կազմակերպության անդամակցության իրականացումը կնպաստի տնտեսական կանխատեսելի միջավայրի և ներդրումների բարենպաստ դաշտի ձևավորմանը» (էջ 29):

Առևտրի Զամաշխարհային կազմակերպության անդամակցելը Զայաստանի Զանրապետության նման երկրին չէր կարող ապահովել տնտեսական կայուն աճ: Իսկ եթե աճ էլ գրանցվում է, ապա դա ոչ թե գյուղատնտեսության, արդյունաբերության և մյուս ոլորտների զարգացման արդյունք է, այլ վարկերով քողարկված աճ է, այսինքն՝ կեղծ աճ է: Այդ կազմակերպության անդամակցելով, մենք ունեցանք ազգային շուկայի քայքայում, տեղական արտադրանքի անկում, գնագոյացման անվերահսկելիություն և արտադրության ու շուկայի կորստաբեր ազատականացում: Այդ կազմակերպության անդամակցելն էր, որ Անդրազգային (տրանսնացիոնալ) կազմակերպությունների և տեղի կեղեքիչ պաշտոնյաների համար Զայաստանի Զանրապետությունը դարձավ մի յուրահատուկ դրախտ՝ հեշտությամբ գերշահույթ ստանալու աղբյուր:

«Ռիո+10 Ազգային գնահատման զեկույց»-ում նախանշվում է նաև պետական կրթական հաստատությունների կառավարման

համակարգի հետագա ապապետականացում, դպրոցի կառավարման դեմոկրատացում և անցում դպրոցական խորհուրդներով կառավարմանը և կրթական համակարգի կայուն *էվոլյուցիոն* զարգացման և այլն:

«Չանուն կայուն մարդկային զարգացման» հասարակական կազմակերպության և «ՀՀ հասարակական կայուն զարգացման Ազգային խորհրդի» հրատարակած գրքերից մեկում, «Յոգևորման և աշխարհայացքը, կրթությունն ու Կայուն զարգացման ոլորտում գիտական ապահովումը» բաժնում ասվում է. «Կայուն զարգացման Չայեցակարգի այս տեսակետը նախ և առաջ ենթադրում է՝ ... ժողովրդի **Չափավորության մշակույթի և էկոլոգիապես կողմնորոշված** մտածելակերպի ձևավորում, Կայուն զարգացման նպատակով կրթությունը ապահովող լիարժեք համակարգերի ձևավորում, հայեցակարգի որակյալ գիտական ապահովում: Երկրորդ կարևոր քայլը, որ կարող է նպաստել Կայուն զարգացման սկզբունքների արմատավորմանը, դա **գիտական հիմնավորումով հանդուրժողականության ազգային-ավանդական համակարգերի վերականգնումն է...** Այդ գործընթացում հատուկ դեր կարող է խաղալ **հայկական մշակույթի համար հիմք հանդիսացող քրիստոնեության հիմնական դրույթների և Կայուն զարգացման հայեցակարգի սկզբունքների ու աշխարհայացքի միջև կապի հաստատումը: ... Կայուն զարգացման սկզբունքների հետ համահունչ մտածելակարգի ձևավորման մեջ կենտրոնական դերը պատկանում է Կայուն զարգացմանը նպատակաուղղված ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ու դաստիարակության համակարգին...** Չայաստանի Չանրապետությունում այդ իմաստով զգալի գործունեություն է ծավալված: 1994 թվականից Երևանի պետական համալսարանում, ավելի ուշ և այլ **ԲՈՒՅ-երում, ինչպես նաև Կառավարման ակադեմիայում այս կամ այն ծավալով դասավանդվում է «Կայուն զարգացման հայեցակարգ» դասընթացը: UNDP և USAID** օժանդակությամբ հրատարակված են ուսումնական ձեռնարկներ **ԲՈՒՅ-երի համար, Ռիոյում Երկրի Վեհաժողովի մասին տեղեկությունը ընդգրկված**

է նաև որոշ դպրոցական առարկաների և ուսումնական ձեռնարկների մեջ: ... Գործընթացը անհրաժեշտ է տեղափոխել պետական մակարդակ, այսինքն՝ մշակել «Կրթություն Կայուն զարգացման համար» պետական ծրագիր, որտեղ առաջին փուլում կարող է նախատեսվել. **երկրի ԲՈՒՅ-երի բոլոր ֆակուլտետներում «Կայուն զարգացման հայեցակարգ» կուրսի դասավանդում:** «Կրթություն Կայուն զարգացման համար» ծրագրերի հանգուցային տարրն է հանդիսանում էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը... Կայուն զարգացման հայեցակարգում առանձնահատուկ տեղ է գրավում նրա որակյալ գիտական ապահովման հիմնախնդիրը... Պետք է ասել, որ Հայաստանի Հանրապետությունում այդպիսի մոտեցումը, ավելի ծիշտ՝ **գիտական ուղղությունը, զարգանում է բավական հաջողությամբ:** Պաշտպանվել են մի քանի թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, ուսանողները կատարում են համապատասխան դիպլոմային աշխատանքներ (ընդգծումները՝ Յ.Ս.) ...» (Հայաստանի Հանրապետության Կայուն զարգացման հայեցակարգ, Երևան, 2002 թ., էջ 34-38):

Այս քաղվածքից պարզորոշ հասկացվում է, որ ծրագրված է համայն մարդկության կյանքում հիմնովին փոփոխություններ կատարելով ստեղծել իր մտածողությամբ ու գործելակերպով այսօրվա մարդուց կտրուկ տարբերվող նոր մարդկություն՝ նոր մարդ: Քանի որ վերը քաղվածքը բերված է մի գրքից, որի նպատակը «Կայուն զարգացում» հայեցակարգի դրույթները Հայաստանի Հանրապետությունում տեղայնացնելն է, ապա, բնականաբար շատերին կհետաքրքրի իմանալ, թե «Կայուն զարգացում» հայեցակարգի կաղապարով ստեղծվելիք նոր հայ ժողովուրդը՝ նոր հայր ի՞նչ աշխարհայացք, հոգեկերտվածք, ձգտումներ ու նպատակներ է ունենալու կամ գիտակցելու՞ է իր ազգային պատկանելությունը, խոսելու՞ է հայերեն: Ինչպես կհամոզվի յուրաքանչյուր ուսումնասիրող, Հայեցակարգի ոգին մերժում է ազգայինը, հետևաբար և հուսադրող որևէ բան չի երևում, մնում է միայն ամեն կարգի ջանք թափելով կասեցնել այս Հայեցակարգի առաջընթացը և շրջանառությունից հանել: Ընդհանուր առմամբ, կանխատեսվում է աշխար-

հի ժողովուրդների-էթնոսների աշխարհընկալման, մտածողության ու մշակույթի մերձեցում-միաձուլում և աշխարհի բոլոր մարդկանց դաստիարակել նույն աշխարհընկալմամբ և նույն հոգեբանությամբ, հասկանալի է՝ բացի «ընտրյալ» ժողովրդից: Սակայն սրանից ամենևին չի բխում, որ, այսպես կոչված, «Կայուն զարգացման» կրթության ու դաստիարակչական տեխնոլոգիաներում կնե-րառվեն-կօգտագործվեն նաև համայն մարդկության կողմից ձեռք բերված լավագույն նվաճումները: Ընդհակառակը, զարգացում-ները ցույց են տալիս, որ կիրառվելու են կրթության ու դաստիարակության այնպիսի եղանակներ, որ դրանց ենթարկված մարդիկ հլու-հնազանդ ծառայեն «Կայուն զարգացում» հայեցակարգը շրջանառության մեջ դնող ուժին:

Եթե «Կայուն զարգացում» հայեցակարգի պարագլուխ ուժը մտահոգված է ժողովրդի *Չափավորության* մշակույթի ձևավորմամբ, ինչը նաև պետք է վերաբերեր, օրինակ, բնական պաշարների չափավոր շահագործմանը, ապա ինչո՞ւ այդ նույն Հայեցակարգի սահմանումներին համապատասխանեցված Հայաստանի Հանրապետության օրենքներով երկրի բնական պաշարները գիշատչորեն են շահագործվում և արագորեն գնում դեպի սպառում:

Ինչ վերաբերում է այն թեզին, թե գիտական հիմնավորումով հանդուրժողականության ազգային-ավանդական համակարգերի վերականգնումը կարող է նպաստել Կայուն զարգացման սկզբունքների արմատավորմանը, ապա այստեղ եթե «գիտական հիմնավորումով» հանդուրժողականության փոխարեն գրված լինեն «կրոնական հիմնավորումով» հանդուրժողականություն, արդեն այդ պարագայում առարկելու առիթ չէր լինի, քանզի Հայոց ազգային ավանդական համակարգերը արդեն հարյուրամյակներ է, ինչ շարունակաբար ենթակա են սիոնիզմի ծրագրին հարմարեցված կրոնին, և հայ ժողովուրդը չի կարողանում դուրս գալ այդ թակարդից ու առայժմ հնազանդվում է կատարված բռնությանը և, փաստորեն, մասնակից է սիոնիզմի ծրագիրն ի կատար ածելու գործին: Մեծ հավանականությամբ կարելի է եզրակացնել, որ նաև այսպիսի հաջողությունն է վստահություն ներշնչել «Հայաստանի Հանրապետության Կայուն զարգացման հայեցակարգ» գրքի հե-

դինականերին, որ գրել են, թե հայկական մշակույթի համար հիմք հանդիսացող քրիստոնեության հիմնական դրույթների և Կայուն զարգացման հայեցակարգի սկզբունքների ու աշխարհայացքի միջև կապի հաստատումը կարող է նպաստել Կայուն զարգացման սկզբունքների արմատավորմանը: Միայն մնում է հարցնել, թե այդ որո՞նք են հայկական մշակույթի համար հիմք հանդիսացող քրիստոնեության հիմնական դրույթները, երբ հայկական իրական մշակույթի հիմքը Հայկականությունն է, որին բացարձակորեն օտար ու թշնամի է քրիստոնեությունը: Քրիստոնեության հիմնական դրույթները կարող են միայն հիմք հանդիսանալ Ընդհանուր հուդայական մշակույթի համար: Եվ, ընդհանրապես, հայկական մշակույթի համար ինչպե՞ս կարող են հիմք հանդիսանալ նահանջի, կորստի, մահվան, անդրշիրիմին ապավինելու դրույթները, որոնք հատուկ ստեղծվել են սիոնիզմի ծրագրի իրականացման նպատակով: Ահա այդ դրույթներից մի քանիսը՝ աղքատություն, խոնարհում, աշխատանքի մերժում, սեր ու հանդուրժողականություն թշնամու նկատմամբ, անհանդուրժողականություն հարազատ-արյունակիցների նկատմամբ, ցմահ կուսություն, կյանքի երկրորդականացում, ամեն կարգի զրկանք ու տառապանք կրել, որպեսզի մեռնելուց հետո անդրշիրիմում բարեկեցիկ ու երջանիկ կյանք ապահովվի, հնարավորինս շուտ մահանալ, մահվան փառաբանում:

Քաղվածքում առկա այն գովեստը, թե Հայաստանի Հանրապետությունում Կայուն զարգացման գիտական ուղղությունը հաջողությամբ է զարգանում կամ այն, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև Կառավարման սկադեմիայում դասավանդվում է «Կայուն զարգացման հայեցակարգ» դասընթացը, հանդված ենք, որ կարժանանա այն ձակատագրին, ինչին արժանացավ տասնամյակներ շարունակ դասավանդվող «Գիտական կոմունիզմ» առարկան, որի վերաբերյալ նույնպես պաշտպանվել են հազարավոր թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ, միլիոնավոր տպաքանակով գրքեր են հրատարակվել...

Ուշագրավ է նաև հետևյալը. «Հրատարակվել են ավելի քան 10 գիրք և բրոշյուր՝ նվիրված Կայուն զարգացման թեմային (այդ

թվում նաև ուսումնական ձեռնարկ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), մշակվել է Կայուն զարգացման հաշվարկման համաթվի տարբերակ, որը կիրառվում է պաշտոնական վիճակագրությունում: «101 ուղի դեպի Կայուն զարգացում» Համաշխարհային մրցույթի շրջանակներում 2001 թ. ապրիլին կազմակերպված լրագրողների մրցույթը, որը նվիրված էր Կայուն զարգացման թեմատիկային, հաստատեց այն մեծ ակտիվությունը, որը ծավալել են զանգվածային լրատվամիջոցները տվյալ հարցի շուրջ: **Իսկ երեխաների պլակատների մրցույթը, որը նվիրված էր «Օրակարգ 21-ին», կրկին ապացուցեց երիտասարդ սերնդի մեջ մեծ հետաքրքրությունը Կայուն զարգացման գաղափարների և սկզբունքների իրականացման նկատմամբ** (ընդգծումը՝ Յ.Ս.) » (նույն տեղում, էջ 9):

Արդյո՞ք ծիծաղ հարուցելուց զատ այլ կերպ կարող է ընկալվել այն, որ իբր երեխաների *պլակատների մրցույթը կրկին ապացուցել է քննարկվող գաղափարախոսության, իմա՝ «Կայուն զարգացում»* հայեցակարգի նկատմամբ երիտասարդ սերնդի հետաքրքրությունը: Փաստորեն այնպիսի քառասյին և անկառավարելի իրավիճակ է ստեղծվել, որ առանձին կազմակերպություններ համարձակվում են բարդագույն և մարդկության ձակատագիրը կանխորոշող խնդիրը մատուցել ազատ ոճով, առանց հիմնավորման ու պատասխանատվության: «Կայուն զարգացում» հայեցակարգի քարոզիչներին համարձակ ու վստահ գործելու հնարավորություն է ապահովում նաև այն, որ, դժբախտաբար, Հայաստանի Հանրապետությունում օրենսդրությունը վերաձևված է «Կայուն զարգացում» հայեցակարգի վտանգածին՝ քայքայում և ավերում մատնանշող դրույթներին համապատասխան և ամեն ինչ արվում է, որ հայ մարդու համար այս հայեցակարգով գործել- ապրելը դառնա պարտադրված կենսակերպ:

Հայաստանի Հանրապետությունում «Կայուն զարգացում» հայեցակարգի արմատավորումն ու ծավալումն այնպիսի հաջողությունների է հասել, որ ՄԱԿ-ի համապատասխան կայքէջում ՀՀ-ում գործող «Կայուն մարդկային զարգացում» հասարակական կազմակերպության գործունեությունը ներկայացված է որպես օրինակելի: Այս հասարակական կազմակերպության ղեկավար Կարինե

Դանիելյանը և նրա կազմակերպության մեջ ընդգրկվածներից ու նրան աջակցողներից շատերը ուսումնական հաստատություններում դիրք ու գիտական տիտղոսներ ունեն, իհարկե, գլխավորապես «կոռպորատիվ» ակադեմիաների (պետք է զարմանալ, եթե հետագայում պարզվի, որ սրանց այդպիսի կոչումներ շնորհող կառույցների մեջ եղել են նաև, օրինակ, մասոնական օթյակներ): Այս հասարակական կազմակերպության ղեկավարը տիրապետում է մարդկանց հետ աշխատելու արվեստին: Չանգվածային լրատվամիջոցներին տված իր հարցազրույց-ելույթներում նա «Կայուն զարգացում» հայեցակարգի մասին շատ քիչ է խոսում. հիմնական թեման շրջակա միջավայրի պահպանության խնդիրներն են, ինչպես նաև՝ աստվածաբանությունը: Օրինակ, վերջերս հրապարակված հարցազրույցում, պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ զբաղվեցիք բնության պահպանության հարցերով, նա պատասխանել է. «... Բայց մեկ այլ երևույթ տեղի ունեցավ ինձ հետ. վիրահատության ժամանակ կլինիկական մահ ապրեցի և «գնացի ու վերադարձա» **այն աշխարհից: Եվ այդ խնդիրն «այնտեղ» դրեցին իմ առջև:** Դրանից հետո ճանապարհն ասես միանգամից բացվեց»: Այն հարցին, թե գիտությունը չպե՞տք է հակադրել կրոնին, նա պատասխանում է. «Ես համոզված եմ, որ 21-րդ դարում պետք է մերձենան: Որովհետև շատ ու շատ հարցեր, որ գիտությունը ժամանակին մերժել է, այսօր ընդունում է: Երբ խոսում եմ գիտնականների հետ, շատ հաճախ եմ լսել, թե ամոթ է, որ գիտությունների դոկտորը խոսի հավատի մասին: Բայց մեծ գիտնականները հիմնականում հանգել են Աստծո գաղափարին, չէ՞: Որովհետև **եթե բարձրանում ես, ապա ուզես-չուզես տեսնում ես կապը:** Իսկ երբ խոսել եմ կրոնի մարդկանց հետ, ասել են՝ տրված է հավատը, պետք է ընդունես, և՛ վերջ, չպետք է փորձես բացատրել: Սակայն 21-րդ դարի մարդու համար դժվար է չհասկանալով հավատալը: Ուստի անհրաժեշտ է կամուրջը կրոնի և գիտության միջև»: Հակագիտական ու հակաբնական, իրական կյանքից շեղող, մոլորեցնող, «Կայուն զարգացում» հայեցակարգի տառին ու ոգուն համահունչ այս մեկնաբանություններն ավարտենք նրան ուղղված այն հարցի պատասխանով, թե անհատը կարո՞ղ է ինչ-որ բան փրկել. «Կարծում եմ՝ կարող է: Բայց այն դեպքում, երբ կապ ունի **Բարձրյալի** հետ:

երբ ինֆորմացիոն դաշտը նրա համար բաց է և ստանում է էներգետիկ հզոր աջակցություն»,- ասում է կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Միջազգային էկոլոգիական ակադեմիայի ակադեմիկոս, ՄԱԿ-ի փորձագետ, «Հանուն կայուն մարդկային զարգացում» ասոցիացիայի նախագահ, Կայուն զարգացման Ազգային խորհրդի նախագահ, բնապահպան Կարինե Դանիելյանը: Այս հարցազրույցում նա նաև ասում է. «Մեզանում առկա է այն մոտեցումը, որ վատ մարդը լավ էկոլոգ լինելի կարող է թե դու բարություն ես քարոզում կենդանիների, բույսերի նկատմամբ, առավել ևս մարդ-մարդ հարաբերություններում պետք է **բարոյական** (ընդգծումները՝ Յ.Ս.) լինես» («Հայացք», 11.03.2011 թ.):

Նախ, այդ ո՞վ կարող է հաստատել, թե մեծ գիտնականները հիմնականում հանգել են աստծո գաղափարին: Մեծ գիտնականները չեն կարող հանգել աստծո գաղափարին: Աստծո գաղափարը մարդու երևակայության արգասիք է: Այլ հարց է կրոնական պարտադրանքի ուժը: Այս պարագայում նաև գիտնականները ստիպված են առերևույթ ընդունել տվյալ միջավայրում պաշտվող աստծո «գոյությունը», ինչով կորստից փրկում են իրենց կյանքն ու ստեղծագործությունը: Հակառակ պարագայում պաշտպանված չեն թե՛ մեկը և թե՛ մյուսը: Հիշենք, օրինակ, ինկվիզիցիայի խարույկների վրա կիզված գիտնականներին, իսկ Հայոց Աշխարհում Քրիստոսին մերժողներին ու Հայոց ավանդական հավատքի հետևորդներին սպառնում էր ոտքերի ջլերի հատումն ու բորոտանոցում բնակեցնելը: Իսկ մեր օրերում, աստծո՝ իմա ազգությամբ հրեա Քրիստոսի մասին պաշտոնականից շեղված որևէ կարծիք հայտնողն արդեն իսկ դառնում է հասարակության թիրախ: Ոչ միայն գիտնականը, այլև ցանկացած բանական անհատ հնարավոր չէ, որ խնդիրը քննի-վերլուծի և հանգի աստծո գաղափարին: Անհնար է, որ իրական գիտնականը դատարկապաշտ լինի: Իսկ պատվեր կատարող վարձու գիտնականները, որոնք շատ հաճախ գիտական բարձր աստիճանների հասնում են նաև այլևայլ ծանապարհներով, դժբախտաբար, առկա են համարյա բոլոր ոլորտներում և առանց հղձի խայթի և արժանապատվության գիտակցման, ասում

ու անում են այն, ինչ ցանկանում են: Նաև պատասխաններից հասկացվում է, որ ջրբաժան է դրվում մահկանացուներիս և «բարձրացած», աստվածային շնորհ ձեռք բերած օծյալների միջև: Օրինակ, ինչպիսի համարձակություն՝ *«որովհետև եթե բարձրանում ես, ապա ուզես-չուզես տեսնում ես կապը»*: Ահա թե ինչպես են արժեզրկվում գիտական աստիճաններն ու կոչումները:

Ինչ վերաբերում է այն պնդմանը, թե եթե գիտությունը շատ ու շատ հարցեր ժամանակին մերժել է, ապա այսօր ընդունում է, դա ամենևին չի նշանակում, թե գիտությունը հաշտվում է կրոնի հետ: Բոլոր այն հարցերը, որոնք տվյալ պահին հնարավոր չի եղել գիտականորեն հիմնավորել ու ապացուցել՝ մերժվել են, սակայն գիտական սարքավորումների, մեթոդների ու մոտեցումների կատարելագործման արդյունքում, եթե դրանք հիմնավորվել են, ապա ընդունվել են: Կրոնը գիտությունից վեր դասողը թող նշի թեկուզ մի օրինակ, երբ աստվածաբանությունը գիտական որևէ փաստ է ներկայացրել և գիտությունն էլ այն մերժել և ապա հաստատել է: Հայտնի է, որ աստվածաբանությունը կրոնի հիմքն ու հենարանն է, իսկ կրոնը կույր հավատք է, որտեղ տրամաբանությունը պարապ է ու աքսորված, այն դեպքում, երբ գիտությունը բնության մեջ գոյություն ունեցող երևույթների, օրինաչափությունների հայտնաբերման ու ապացուցման և տրամաբանության ոլորտ է, հետևաբար, անիմաստ է կրոնի և գիտության հաշտեցման մասին խոսելը: Դրանք միմյանց մերժող ու միմյանց թշնամի ոլորտներ են: Եվ, ընդհանրապես, արդյո՞ք իմաստ ունի լուրջ ընդունել այն մարդու ասածը և նրա հետ բանավեժի մեջ մտնել, ով հավաստում է, թե իբր գնացել է *այն աշխարհը*՝ իմա անդրշիրիմ և վերադարձել է *այն աշխարհից*, որի անելիքն էլ այն աշխարհում-անդրշիրիմում են կանխորոշել և ապա, ով իբր *կապ ունի*, այսպես ասած, *Բարձրյալի* հետ: Այստեղ ծայր աստիճան կարևոր է հասկանալ-իմանալ-ձշտել, թե այդ ո՞ր բարձրյալի մասին է խոսքը, քանզի յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր Բարձրյալը, այսինքն՝ բարձրյալները հազարավոր են: Օրինակ, եթե Բարձրյալը Հայոց Արարիչ Ար-Արամազդն է եղել, ապա պետք է հասկացվի, որ Կ. Դանիելյանի առջև խնդիր է դրվել մաքուր պահպանել հողը, օդը, ջուրը, սիրել հարազատներին և ատել թշնամիներին, Հայոց ազգն ու Հայրենիքը պահպանել, առաջադեմ

ու բարգավաճ դարձնել: Եթե Կ. Դանիելյանը հանդիպել է հրեաների ազգային աստված Եհովային, ապա նրա առջև դրված խնդիրը պետք է որ հայերիս համար շատ մռայլ ու կործանարար լինի: Որպես հայաստանցու՝ նա պետք է կարգադրություն ստանար, թե աջակցի այդ երկրի քայքայմանը և ապա՝ հայ ժողովրդին պետք է զոհաբերել հանուն Իսրայելի բարգավաճման, ինչպես նաև անել այն ամենը, ինչը մանրագնին շարադրված է Հին ու Նոր կտակարաններում և նպաստել «Կայուն զարգացում» հայեցակարգի հաղթարշավին: Եթե նա հանդիպել է Եհովայի որդի կիսաստված հրեա Քրիստոսին, ապա նրա առջև դրված խնդիրը պետք է ունենա նույն բովանդակությունը, ինչ առաջարկել է Եհովան: Իսկ եթե Քրիստոսը՝ Բարձրյալը, նրան լրացուցիչ կարգադրություններ է արել, ապա այն կարող է մոտավորապես հետևյալ բովանդակությունը ունենալ՝ եթե դու չես սիրում իմ հայր Եհովային, ապա ես էլ քեզ չեմ սիրի, քարոզիր, որ մարդը պետք է ատի բնությունը և, ընդհանրապես, ֆիզիկական-հրական աշխարհը, հրաժարվի աշխատանքից, աղքատ ապրի, լինի հեզ ու խոնարհ, ատի հարազատներին, սիրի թշնամիներին, հնարավորինս շուտ մահանա, որպեսզի մեռնելուց հետո արժանանա իմ և իմ հոր արքայությանը:

Իհարկե, դժվար է գուշակել, թե «Կայուն զարգացում» հայեցակարգը մարդկությանը պարտադրելու գործում տեխնոլոգիաների ու եղանակների առաջնության ինչ գերակայություն կա, սակայն դրանցից մեկը ցայտուն երևում է, որ Հայեցակարգին կրոնական համազգեստ են հագցնելու՝ Հայեցակարգը կրոնականացնելու են և, դրան զուգահեռ, ամեն ջանք ու միջոց չխնայելով, մարդկանց դարձնելու են առավել սնոտիապաշտ: Իհարկե, անհնար է բոլորին սնոտիապաշտ դարձնել, սակայն ընդհանուր մթնոլորտում «անհնազանդներին» կառավարելու են սնոտիապաշտական-կրոնական խարազանի միջոցով (Հայաստանի Հանրապետությունում կրոնականացումը լայնորեն ծավալվում է կյանքի բոլոր ոլորտներում և արդեն այն աստիճանի է հասել, որ նույնիսկ դժվար է կռահել, թե մեր պետությունը կրոնական է, թե՞ աշխարհիկ):

Քաղվածքում առկա այն միտքը, որ մարդը պետք է բարոյական լինի, հարկավ քննության տեղիք չի տալիս, սակայն 2011 թվականի հունիսի 19-ին Կարինե Դանիելյանը հեռուստահարցազրույցում

(«Արմենիա» հեռուստաալիք) ասաց, թե բանական մարդուն պետք է փոխարինի բարոյական մարդը, ինչն անհրաժեշտություն է առաջացնում հարցնել, թե նրա համար ի՞նչն է մարդու բարոյականության հիմքը և արդյո՞ք նա հավատում է, որ բանականությունից հեռու բարոյական մարդ կարող է գոյություն ունենալ: Չէ՞ որ բանականության վրա չհիմնված բարոյականությունը անորոշ, փոփոխվող ու փխրուն և տրամաբանությանը չենթարկվող բարոյականություն է: Հիշենք Բ. Սպինոզայի այն խոսքերը, թե «Ճշմարտության ակունքը բանականությունն է» կամ «Սեծագույն լույս և աստվածային պարզ բանականությունը փորձում են ենթարկել Աստվածաշնչի մեռած տառերին»: Եկեղեցու պարագայում՝ պարզ ու հասկանալի է՝ «աշակերտը պետք է միայն լսի խրատողին և դյուրահավատ լինի», նաև եկեղեցական հայրերի պնդմամբ՝ բանականությունը սատանայի վերջին պոռնիկն է և պետք է կոտրել բանականության վիզը: Եկեղեցին մնում է որպես եկեղեցի և նրանից այլ բան պետք չէ պահանջել, քանզի նա անթաքույց հայտարարում է, որ պետք է հրաժարվել իրական-ֆիզիկական աշխարհից և իրական կյանքում ձգտել մոտալուտ մահվան և այնպիսի վարքագիծ ունենալ, որ ապահովվի անդրժիրիմում տրիլոնավոր տարիներ ուրախ ու բարեկեցիկ կյանք վայելելը: Պարզ չէ՞, որ այսպիսի քարոզչությունը թշնամանք է կյանքի նկատմամբ: Ինչպես տեսնում ենք, եկեղեցուց դուրս էլ համարյա նույն հիվանդագին ու կյանքի հիմքերը քայքայող գաղափարներն են քարոզվում: Այս խնդրում հիմնական մեղավորները ոչ թե վտանգավոր գաղափարների քարոզիչներն են, այլ, առաջին հերթին, իշխանական առաջին դեմքերը, որոնց գործունեության հետևանքով երկրում ստեղծվել է մի իրավիճակ, երբ բնակչությունն անպաշտպան է թե՛ սոցիալական, թե՛ հոգեբանական սպառնալիքներից:

Թվում է, թե շատերի համար ճշտելու կարիք ունի քաղվածքում բերված հետևյալ միտքը՝ *«Գնացի ու վերադարձ»* այն *աշխարհից: Եվ այդ խնդիրն «այնտեղ» դրեցին իմ առջև: Դրանից հետո ճանապարհն ասես միանգամից բացվեց*: Այստեղ գլխավոր անորոշությունը վերաբերում է *«այդ խնդրին»* արտահայտությանը, քանզի հարց է առաջանում, թե այնտեղ նրա առջև դրված խնդիրը եղել է էկոլոգիակա՞նը, թե՞ «Կայուն զարգացում» հայեցակարգը, այն

իմաստով, որ սրանց բուն նպատակները միմյանց հակասում են: Իսկ այն, որ դրանից հետո ծանապարհը բացվել է, թվում է բացատրության կարիք չկա, քանզի պարզ ու հասկանալի է՝ եթե կան շարունակական դրամաշնորհներ, ապա ծանապարհն արդեն բաց է:

Հայաստանի Հանրապետությունում «Կայուն զարգացում» հայեցակարգը մեծ հաջողությամբ տարածող Կարինե Դանիելյանը հաճախ խոսում է ազգի «շահերից», ասածը մշտապես համեմելով հուզական արտահայտություններով: Նա կարողացել է «Կայուն զարգացում» հայեցակարգի գաղափարները Հայաստանի Հանրապետությունում տարածող մի գործուն թիմ ձևավորել: Այդ թիմը առանձնանում է նաև իր անհանդուրժողականությամբ: Օրինակ, խնդրին վերաբերող քննարկումներում երկրորդ կարծիք հայտնելն անհնար է, այն դեպքում, երբ ժողովրդավարությունն այս հայեցակարգի *հայտարարվող* գլխավոր բաղադրիչներից է: Օրինակ, 2004 թվականին Գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպված սեմինարում չթույլատրվեց Կայուն զարգացման վերաբերյալ քննադատական մոտեցում ունեցողի ելույթը: Պատճառաբանությունը հետևյալն էր, թե դու հակառակ կարծիք ունես և քո ելույթով կկազմալուծես մեր միջոցառումը: Թիմի ներկա անդամները (մոտ 60 հոգի) լիովին համերաշխություն ցուցաբերեցին իրենց առաջնորդին:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կազմակերպված «Կայուն զարգացման ինստիտուցիոնալ համակարգի զարգացման»-ը նվիրված «կլոր սեղան» կոչված միջոցառմանը, նշված հայեցակարգի վերաբերյալ միակ քննադատական ելույթը ոչ թե հերքվեց փաստերով, այլ փորձ արվեց ուղղակի վարկաբեկել ելույթ ունեցողին: Այս առումով, մի քաղվածք բերենք «Ազգ» լրագրից. *«Կանաչների միության նախագահը հավատարիմ մնաց Կայուն զարգացման գաղափարաբանության հանդեպ իր մերժողական դիրքորոշմանը՝ «Կայուն զարգացման հայեցակարգը գիտականորեն հիմնավորված չէ և ավելի շուտ ուտոպիա է հիշեցնում, այն համաշխարհային դավադրություն է և ուղղված է պետությունների զարգացման դեմ»:* *Քննարկմանը ներկա էր ոլորտի միջազգային փորձագետ Մարինա Բախնովան, որը Կանաչ-*

ների միության նախագահի ելույթից հետո ասաց. «Ես համաձայն չեմ, որ դա ուտոպիա է, դա հսկայական, արյուն ու ջանք պահանջող աշխատանք է: Հակոբ Սանասարյանը բնապահպանությանն ամբողջությամբ նվիրված մասնագետ է, բայց նա ինձ հիշեցնում է խորհրդային արտգործնախարար Անդրեյ Գրոմիկոյին, որին «միստր Նյետ» էին անվանում, որովհետև բոլոր կարգի առաջարկներին ասում էր ոչ՝ հաստատ մնալով ու պնդելով իր կարծիքը» ...» («Ազգ», 23.11.2006): Այստեղ անհրաժեշտ է նշել, որ միջազգային փորձագետ, ԱՄՆ-ի քաղաքացի Մարինա Բախնովան և Հայաստանի կանաչների միության նախագահը մինչ այդ միմյանց չեն ծանաչել-հանդիպել, հետևաբար կարելի է նաև կարծել, որ շահագրգիռ կողմը նրան հուշել է, թե ինչ պետք է ասի:

Վերը բերված փաստերը ցույց են տալիս, որ «Կայուն զարգացում» հայեցակարգը Հայաստանի Հանրապետությունում տեղայնացնող հասարակական կազմակերպությունը հսկայածավալ աշխատանք է կատարել, սակայն դա ոչ միայն այդ կազմակերպության ղեկավարի անուրանալի տաղանդի շնորհիվ է, այլ այստեղ վճռորոշ դեր է կատարում արտաքին միջամտությունն իր քաղաքական ու ֆինանսական լծակներով: Օրինակ, **ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար Վլադիմիր Պոյախինն** այս առումով գրում է. «**ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը իրականացնում է ծրագրեր Կայուն զարգացման գրեթե բոլոր ուղղություններով** (ընդգծումը՝ Յ.Ս.): Հազարամյակների ընթացքում միմյանց հերթափոխող քաղաքակրթությունների շարքը ... գաղափարախոսությունների փոփոխությունները ոչ մի կերպ չեն ազդել պարզ, սովորական մարդկային արժեքների վրա, որոնք գնահատվել են թե՛ այն ժամանակ, թե՛ տիեզերական տեխնոլոգիաների մեր դարում՝ բարության, կարեկցանքի, միմյանց նկատմամբ հարգանքի, այլ կերպ ասած՝ Կայուն զարգացման բարոյական հիմքի վրա, առանց որի չկա և առհասարակ չի կարող լինել ապագա» (Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան, միջազգային փորձը և ՀՀ խնդիրները, Երևան, 2005 թ., էջ 18):

Համարյա նույնն է հաստատում **Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի մշտա-**

կան ներկայացուցիչ Լիզ Գրանդեն. «Կայուն զարգացումն այսօր աշխարհում ամենակարևոր թեմաներից է և պետք է լինի այդպիսին, քանի որ եթե մենք՝ երկրի ներսում և միջազգային մակարդակում չուրվագծենք, թե ինչպես ապահովել բոլոր մարդկանց բարեկեցությունը առանց քայքայելու շրջակա միջավայրը, ապա մենք կկանգնենք անմխիթար ապագայի առջև... Սա շատ մեծ օրակարգ է, և մի բան, որ ես հպարտ եմ հայտարարել, դա այն է, որ ՄԱԿ-ը ստանձնել է կատարել այս պարտավորությունները ողջ աշխարհում: Այստեղ՝ Հայաստանում, ՄԱԿ-ի գործունեության չորս հիմնական ոլորտներից մեկը բնապահպանությունն է... Մենք աջակցում ենք Կայուն զարգացման ազգային նորաստեղծ խորհրդին, ինչպես նաև այն խորհրդարանական նախաձեռնությանը, որի նպատակն է խթանել Կայուն զարգացման գործընթացը, օգնում ենք երկրի Կայուն զարգացման Ազգային ռազմավարության մշակմանը (ընդգծումները՝ Հ.Ս.)» (Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան, միջազգային փորձը և ՀՀ խնդիրները, Երևան, 2005 թ., էջ 20-21):

Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ, օրինակ, Գլոբալ էկոլոգիական ֆոնդը, որը շատերի համար հասկացվում է որպես առաջնահերթ լուծում պահանջող էկոլոգիական խնդիրներին աջակցող կառույց, սակայն պարզվում է, որ դա ստեղծվել է հենց «Կայուն զարգացում» հայեցակարգին աջակցելու նպատակով: **ՄԱԶԾ/ԳԷՖ «Ազգային հզորությունների ինքնագնահատում գլոբալ կառավարման համար» ծրագրի համակարգող Դիանա Հարությունյանը** ասում է. «1992 թ. Ռիո դե Ժանեյրոյի գագաթնաժողովում, որպես Կայուն զարգացման ապահովման մեխանիզմ, ՄԱԿ-ի անդամ երկրներին, այլ հարցերի շարքում, քննարկման և ստորագրման համար ներկայացվեցին նաև բնապահպանական կոնվենցիաների փաստաթղթերը: ... **Հայաստանը, որպես կոնվենցիաների կողմ երկիր, ունի մի շարք պարտավորություններ, որոնցից ամենակարևորը կոնվենցիաների նպատակների և խնդիրների ինտեգրումն է երկրի զարգացման պլաններում, ապահովելու համար երկրի Կայուն զարգացումը... 2001 թ. Գլոբալ էկոլոգիական ֆոնդը, որը այդ կոնվենցիաների իրականացման համար**

ստեղծված հատուկ ֆինանսական մեխանիզմ է (ընդգծումը՝ Յ.Ս.)» (էջ 75-77):

«Կայուն զարգացում» հայեցակարգի համար Հայաստանի Հանրապետության դարպասները բաց են ոչ միայն այն պատճառով, որ արտաքին թելադրանք կա, այլև այն առումով, որ այս Հայեցակարգի վերաբերյալ իրենց գրավոր հավաստումներն են հայտնել հարյուրավոր մտավորականներ, պետական ու քաղաքական գործիչներ: Բերենք դրանցից մի քանիսի կարծիքները:

Գագիկ Հարությունյան, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, «ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի» տնօրեն. «Միամտություն կլինի կարծել, թե Կայուն զարգացման խնդիրը հենց այսօր է առաջացել, որովհետև մարդկային հանրությունն ի սկզբանե տարաբնույթ ձևով առնչվել է այս խնդրին: Աստվածաշնչյան նկարագրումով, երբ այլևս փրկության այլ դուռ չկար՝ ջրհեղեղ, սողոմ-գոմոր և այլն, մարդկանց ներդաշնակ և Կայուն զարգացման ինչ-որ ճանապարհ ցույց տալու, սթափության կոչ էր արվում» (Կայուն զարգացման սահմանադրական երաշխիքները, Երևան, 2005 թ., էջ 21):

Տիգրան Թորոսյան, ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ. «Կայուն զարգացման խնդիրները, որպես համամարդկային հիմնախնդիր, ամենաուղղակի առնչություն ունի Հայաստանի քաղաքական կյանքի ամենաարդիական գործընթացի՝ Սահմանադրական փոփոխությունների գործընթացի հետ: Ընդ որում, առավել կարևորը ոչ թե այն է, թե «Կայուն զարգացում» տերմինը կարձանագրվի սահմանադրական փոփոխությունների նախագծում, այլ այն, թե փոփոխվող սահմանադրությունը կապահովի իրական սահմանադրական երաշխիքները Կայուն զարգացման համար» (նույն տեղում, էջ 48):

Վազգեն Մանուկյան, ՀՀ ԱԺ պատգամավոր. «Ժամանակակից հասարակությունը հիրավի կարելի է որակել որպես սպառող հասարակություն իր բոլոր դրսևորումներով, հատկապես արժեքա-

յին համակարգով... Չուզահեռ աժում է անհանգստությունը մոլորակում ստեղծված էկոլոգիական իրավիճակի, բնական պաշարների սպառման վերաբերյալ: Յետզհետե ակնառու է դառնում սպառման մոդելների փոփոխման, հասարակության արժեքային համակարգի վերափոխման անհրաժեշտությունը: Քաղաքակրթությունը փորձում է քայլեր կատարել այդ ուղղությամբ: Միաժամանակ, նոր պայմաններում ձևավորվել է մի նոր վերաբերմունք բնական ռեսուրսների նկատմամբ, համաձայն որի յուրաքանչյուր երկրի բնական ռեսուրսները ոչ միայն իրենն են, այլև պատկանում են ողջ մարդկությանը... Այս դեպքում երկրի սուվերենությունը, կարծես, նահանջում է համամարդկային շահերի առջև: Եվ դա լրիվ հասկանալի է, քանի որ մարդկությունը ձգտում է խուսափել էկոլոգիական ծգնաժամից» (Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան, միջազգային փորձը և ՀՀ խնդիրները, Երևան, 2005 թ., էջ 111):

Գագիկ Մխեյան, ՀՀ ԱԺ սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ. «Երկրի կայուն զարգացման հիմնական չափանիշները պետք է ամրագրվեն ինչպես ՀՀ Սահմանադրության մեջ, այնպես էլ տարբեր ոլորտները կարգավորող ՀՀ օրենքներում... Մենք հանդիպել ենք ՄԱԿ-ի մշտական համակարգող տիկին Լիզ Գրանդեի հետ: Հանդիպման հիմնական քննարկվող խնդիրներից մեկը Կայուն զարգացման ուղղությամբ մեր երկրում հետագա աշխատանքներն էին, որին պատրաստ է աջակցել ՄԱԿ-ի Ջարգացման Ծրագիրը: Գիտակցելով այս խնդրի կարևորությունը՝ իր հերթին հանձնաժողովը պատրաստ է լուրջ աշխատանքներ նախաձեռնել մեր հանձնաժողովին առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործման և Կայուն զարգացման սկզբունքների ներառման ու ամրապնդման ուղղությամբ: Այս պահին հանձնաժողովի նախաձեռնությամբ ՀՀ ԱԺ-ում ստեղծվում է միջհանձնաժողովային միջխմբակցային խորհրդարանական խումբ, որը հետագայում կկազմակերպի աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ Կայուն զարգացման սկզբունքների գործնական կիրառման վերաբերյալ» (նույն տեղում, էջ 23):

Մնացական Պետրոսյան, ՀՀ ԱԺ սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ. «Ռիո դե ժանեյրոյում ընդունված... Օրակարգ 21-ի առանձին դրույթները պետք է ներառվեն և օգտագործվեն արդեն իսկ գոյություն ունեցող և հատկապես նոր մշակվող օրենքների նախագծերում... Կարելի է փաստել, որ վերջին տարիներին Հայաստանում ոլորտային քաղաքականությունների ձևավորման և մշակման ընթացքում հաշվի են առնվում Օրակարգ 21-ի սոցիալական, առողջապահության, տնտեսական զարգացման առանձին մոտեցումները... Բնապահպանության և բնական ռեսուրսների կառավարման ոլորտը կարգավորող օրենքներից մի քանիսը հստակ ամրագրում են Օրակարգ 21-ի ու Յոհաննեսբուրգի հռչակագրերի դրույթները: Դրանցից ցանկանում եմ նշել. ՀՀ Ջրային օրենսգիրքը... Թափոնների մասին օրենքը... Անտառային օրենսգրքի նախագիծը...» (նույն տեղում, էջ 65-72):

Հերմինե Նաղդայան, ՀՀ ԱԺ պատգամավոր. «Կայուն տնտեսության և Կայուն զարգացման համար անհրաժեշտ են տնտեսական քաղաքականության կարդինալ բնույթի փոփոխություններ: Դրանց մասին մանրամասն և բարձր պրոֆեսիոնալիզմի մակարդակով ասված է «ՀՀ Կայուն զարգացման հայեցակարգում», որի հեղինակներն են, ըստ իս, մեր հանրապետության ամենահեղինակավոր մասնագետները և որի համար ուզում եմ գոհունակության և խորին շնորհակալության խոսք ասել ինչպես հեղինակներին, այնպես էլ «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիային, և ոչ կառավարական ազգային խորհրդին» (նույն տեղում, էջ 97):

Արամ Գ. Սարգսյան, ՀՀ ԱԺ պատգամավոր. «Համաշխարհային հանրությունը, որպես նոր դոմինանտ՝ աշխարհափոխության գաղափարի ընդունման, գլոբալ հիմնախնդիրների համամոլորակային հանգուցալուծման հայեցակարգի մշակման նախաշեմին է: Կամ մենք կգիտակցենք, որ մեր հողագունդը համընդհանուր կացարան է ու պահանջվում է անհապաղ ձևակերպել և կենսագործել վարքագծի ընդհանուր կանոնները, կամ՝ քաղաքակրթության վերելքի փոխարեն կհայտնվենք քաղաքակրթության մարման

վիճակում... Մի խոսքով, գլոբալ հիմնահարցերի լուծման հայեցակարգի մշակումն այլընտրանք չունի... Շարժման նպատակներից մեկը պետք է լինի համամոլորակային պրոբլեմների մասով բոլոր երկրների օրենսդրությունների նմանականացումը, առանց նրանց ներքին գործերի մեջ ներխուժելու փորձի... Շարժման միասնական սկզբունքը պետք է լինի բոլոր ընտրողներին կոչ՝ կողմ քվեարկել քաղաքական այն գործիչների օգտին, որոնք կպարտավորվեն իրագործել «գլոբալ կոնսենսուսի» դրույթները... Շարժումը կապահովի զանգվածայնություն, ի շնորհիվ հեռուստատեսության և մամուլի համաշխարհային ցանցի: Մենք պետք է կոչ անենք արվեստի, գրականության, մշակույթի մարդկանց՝ ստեղծել գլոբալ համաձայնության գաղափարները քարոզող տաղանդավոր ստեղծագործություններ» (նույն տեղում, էջ 113-118):

Աիդա Իսկոյան, ԵՊՀ-ի Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, Օրիուսի Կոնվենցիայի համակարգողը Հայաստանում. «Միաժամանակ գլոբալիզացիայի գործընթացներն անհատի, հասարակության, մարդկության առջև բացում են անցյալում անհայտ հնարավորություններ, ընձեռում են համատեղ գործողությունների սկզբունքորեն նոր միջոցներ՝ հանուն ընդհանուր արժեքների պաշտպանության և Կայուն զարգացման ապահովման» (Կայուն զարգացման սահմանադրական երաշխիքները, Երևան, 2005 թ., էջ 53):

Նորա Հակոբյան, Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ. «ԿՄԶՀ քարոզչության և լոբբիստական գործունեության համար անհրաժեշտ է միավորել ոչ կառավարական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ջանքերը՝ Հայաստանի Կայուն Ջարգացման Հայեցակարգի և Ծրագրի մշակման, նրա աստիճանական իրականացման նպատակով: Մեր կազմակերպությունը հիմնադիր կոլեկտիվ-անդամի կարգավիճակով մտել է «Հանուն մարդկային հասարակության կայուն զարգացման» Ասոցիացիայի կազմի մեջ՝ գիտակցելով նրա գործունեության ամբողջ կարևորությունն ու այժմեականությունը» (Հայաստանը Կայուն մարդկային զարգացման հայեցա-

կարգի տեսանկյունից, Հասարակական կազմակերպությունների գնահատականը, Երևան, 1999 թ., էջ 14):

Նշված գրքում՝ «Կայուն զարգացում» հայեցակարգի գաղափարների ընդունման և սատարման պատրաստակամություն են հայտնել նաև «Անդրեյ Սախարովի անվան հայկական իրավապաշտպան ֆոնդը», «Հիմնարար գիտությունների հայկական կենտրոնը», «Հայաստանի բուսաբանական ընկերությունը», «Գթություն» Հայ բարեգործական միությունը, «Հայկական աշխարհագրական ընկերությունը», «Ռուսաստանի էկոլոգիական ակադեմիայի հայկական բաժանմունքը», «Հայֆերմեր» ասոցիացիան, «Անահիտ» բարեգործական միությունը, «Զարթոնք-89» բարեգործական միությունը, «Ժողովրդավարական քաղաքագիտական միությունը», «Գերագույն խորհուրդ» պատգամավորական ակումբը, «Խազեր» մշակութային ֆոնդը, «Հայ կանանց դաշինքը», «Կին ընտրողների լիգան», «Հայ կանանց միջազգային կազմակերպությունը», «Երիտասարդական ակադեմիան», «Մայրության հանրապետական ֆոնդը», «Հայաստանի լեհերի ընկերակցությունը», «Հայաստանի վիճակագրական համակարգչային ընկերությունը», «ԵԱՀԿ շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կոնգրեսը», «Ռուսիա» ընկերությունը, «Հայաստանի ժուռնալիստների միությունը», «Ուսանողական գիտական ընկերությունը», «Ընդդեմ իրավական կամայականության ֆոնդը» և բազում այլ կազմակերպություններ:

Այստեղ նշված կազմակերպություններից միայն Մայրության հանրապետական ֆոնդն է, որ նաև որոշ մտահոգություն է դրսևորում. «Կայուն մարդկային զարգացման հայեցակարգը ենթադրում է մանկածնության կարգավորում, նպատակ ունենալով կանխել անվերահսկելի ժողովրդագրական «պայթյունանման» աճը և հասնել ժամանակակից մակարդակում Երկրի բնակչության կայունացմանը: Սակայն, մեր կարծիքով, այդպիսի մոտեցումը չի կարելի բացարձակացնել: Այն արդարացի է բազմաքանակ, կայուն զարգացող ժողովուրդների համար, բայց անընդունելի է անհետացման վտանգի առաջ կանգնած փոքր (փոքրաքանակ) ժողովուրդներին» (նույն տեղում, էջ 69):

Առանձին գրույցներից այն տպավորությունն է ստեղծվում, որ «Կայուն զարգացում» հայեցակարգի մասին իրենց կարծիքը հայտնողների մեծամասնությունը ոչ թե խորանում է Հայեցակարգի բուն բովանդակության մեջ, այլ հիմք է ընդունում «կայուն» և «զարգացում» բառերը և համարում է, որ դրանց նկատմամբ ժխտողական վերաբերմունքը բարոյական չէ: Հարկավ, կան նաև այլևայլ նպատակներ հետապնդողներ:

Իր հիմնազրկությամբ ու վերամբարձ մեծամտությամբ ուշագրավ է Հայաստանի երիտասարդության ուղերձը Յոհաննեսբուրգում կայանալիք Կայուն զարգացման Համաշխարհային Գագաթնաժողովին. **«Մենք՝ 48 երիտասարդներս, 40 տարբեր հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կառույցների, ուսումնական հաստատությունների լիազորված ներկայացուցիչներ... միանում ենք Կայուն զարգացման Համաշխարհային Գագաթնաժողովի նախապատրաստական գործընթացին և սույն ուղերձով հռչակում ենք մեր համաձայնությունը Կայուն զարգացման սկզբունքներին և հայտարարում ենք մեր պատրաստակամությունը Կայուն զարգացման կերտման գործում... Հռչակում ենք, որ յուրաքանչյուր ոք, անկախ իր բնակման վայրից, սոցիալական, սեռական, ազգային, կրոնական պատկանելությունից, իրավունք ունի և պետք է ներգրավվի ու իր տեղը գտնի Կայուն զարգացման կերտման համընդհանուր գործընթացում: Հռչակում ենք մեր պատասխանատվությունն ու պատրաստակամությունը սույն գործում և այդ նպատակով կոնկրետ գործունեություն ծավալում հետևյալ ոլորտներում՝ բնապահպանություն և սոցիալական սկզբունքների հաստատում, քաղաքացիական հասարակության կայացում, մարդու իրավունքների պաշտպանություն, ազգային ինքնատիպության պահպանում...»** («Կայուն զարգացումը և երիտասարդության դերը», Երևան, 2002 թ., էջ 24):

Այստեղ անհիմաստ է որևէ բացատրություն տալ, միայն մնում է գուցե խնդրել սույն ուղերձը կազմողին, որ թույլ տա, գոնե սահմանափակ թվով մարդիկ իրավունք ունենան չներգրավվել և իրենց

տեղը չգտնել *Կայուն զարգացման* կերտման համընդհանուր գործընթացում: Հեզմանքը թողնելով, պետք է ցավ ու ավստասանք հայտնել, որ երիտասարդությանը ներքաշում են նրանց համար քիչ հասկանալի և իրենց շահերին հակասող մի ոլորտ:

Պարզից էլ պարզ է, որ հայ երիտասարդներին վերագրվող ուղերձը, որի տառն ու ոգին համապատասխանում է «Կայուն զարգացում» հայեցակարգի գաղափարախոսությանը, գրել է խնդրին լավատեղյակ մեկը:

Այստեղ նպատակահարմար է մի քաղվածք բերել ՄԱԿ-ի հովանու տակ գտնվող պետությունների՝ Յոհաննեսբուրգում տեղի ունեցած համաշխարհային զագաթնաժողովի (մասնակցում էին 193 երկրների 22 հազար պատվիրակներ) Հռչակագրից, որտեղ մասնավորապես ասվում է. «Մենք, աշխարհի ժողովուրդների ներկայացուցիչներս, որ 2002 թ. սեպտեմբերի 2-ից 4-ը հավաքվել ենք Յոհաննեսբուրգում (Հարավային Աֆրիկա) Կայուն զարգացման շուրջ բարձր մակարդակով համաշխարհային հանդիպմանը, նորից հաստատում ենք մեր նվիրվածությունը Կայուն զարգացմանը: Մենք հայտարարում ենք մարդասիրական, արդար և հոգատար **գլոբալ հասարակություն** կառուցելու մեր նվիրվածության մասին... Բարձր մակարդակով մեր հանդիպման սկզբում **ամբողջ աշխարհի երեխաները պարզ ու հասկանալի բառերով դիմեցին մեզ** այն մասին, որ ապագան պատկանում է իրենց, և այդ պատճառով **մեզ կոչ արեցին** անել այնպես, որ մեր ջանքերի շնորհիվ իրենք ժառանգեն մի աշխարհ, որն ազատ է աղքատությամբ, շրջակա միջավայրի դեգրադացիայով և ոչ կայուն զարգացման մոդելներով պայմանավորված ստորացումներից և խայտառակությունից... Մենք պետք է անմիջապես զբաղվենք նոր, ավելի լուսավոր, մեր հույսերը մարմնավորող ապագայի կառուցմամբ: Ելնելով դրանից, մենք պատասխանատվություն ենք ստանձնում ուժեղացնելու և ամրապնդելու Կայուն զարգացման փոխկապակցված և մեկը մյուսին նեցուկ հանդիսացող հիմքերը՝ տնտեսական զարգացում, սոցիալական զարգացում և շրջակա միջավայրի պահպանություն... **Մենք ողջունում ու աջակցում ենք ավելի ուժեղ տարածաշրջանային խմբավորումների և միությունների ձևավորումը** (ընդգծումները՝ Յ.Ս.)... Մենք

պաշտպանում ենք Միավորված Ազգերի Կազմակերպության առաջատար դերը որպես աշխարհում ամենաունիվերսալ և ներկայացուցչական կազմակերպություն, որը ունի լավագույն հնարավորությունները Կայուն զարգացմանն աջակցելու համար»:

Ահա այսպիսին է ՄԱԿ-ի հովանու ներքո գտնվող շուրջ 200 պետությունների համար սահմանադրության կարգավիճակ ունեցող փաստաթղթի «հիմնավորումը», որը հարիր է միայն մանկապարտեզներում զավեշտալի հեքիաթներ ներկայացնելու պարագայում: Պատկերացնում եք, պետությունների ղեկավարներն ու տասնյակ հազարավոր պետական պաշտոնյաներ, հսկայածավալ ֆինանսներ ծախսելով նման հռչակագրեր են վավերացնում: Այդ, այսպես ասած, *մարդասիրական, արդար և հոգատար գլոբալ հասարակություն* կառուցելուն նվիրվածներին իբր ամբողջ աշխարհի երեխաները *պարզ ու հասկանալի բառերով* դիմել են, թե ապագան պատկանում է իրենց՝ երեխաներին, և այդ նվիրյալներն էլ հասկացել են երեխաների պարզ ու հասկանալի ասածը և որոշել են ստեղծել միակենտրոն կառավարմամբ գլոբալ հասարակություն և ոչ կայուն զարգացման մոդելներով պայմանավորված ստորացումներից և խայտառակությունից զերծ աշխարհ ու հանձնել աշխարհի բոլոր երեխաներին: Մարդկությանն, իբր, խայտառակությունից փրկող այս հիմնագուրկ ու անպատկառ փաստաթուղթն արդեն իսկ խայտառակություն է: Սակայն քաղվածքում բերված բացահայտ սուտն ու կեղծիքն աշխարհի երկրներն ընդունել են անվերապահորեն: Չասկանալի է, այդ ո՞ր պետության առաջնորդը՝ աշխարհի փրկության կեղծ հույսերով խաբված ու այդ փրկությունն արդեն համարյա իրականություն համարող միջավայրում, կհամարձակվեր ասել, օրինակ, թե *ամբողջ աշխարհի երեխաների* անունից այդ ի՞նչ եք հայտարարում, դուք այդ ե՞րբ հասցրիք խոսել ամբողջ աշխարհի երեխաների հետ կամ նրանք ի՞նչ են հասկանում այդ բարդագույն խնդրից, ամոթ է, ձեզ լուրջ պահեք, զսպեք ձեր ախորժակը, ո՞վ է ձեզ իրավունք տվել մարդկանց թյուրիմացության մեջ զգել, մարդկության ճակատագրի հետ խաղ անել:

Պետք է ասվի, որ ՄԱԿ-ի հովանու ներքո նշված Չռչակագրի տարածումն, արդեն իսկ, հեղինակազրկում է այդ կազմակեր-

պայթյանը, և պատահական չէ, որ ՄԱԿ-ի նկատմամբ մարդկանց վստահությունն աստիճանաբար նվազում է: ՄԱԿ-ը ոչ թե շրջանառության մեջ պետք է դնել այս Հայեցակարգը, այլ, ամեն կարգի ջանք թափելով, պետք է շուտափութ կանխեր նրա տարածումը: ՄԱԿ-ի կողմից «Կայուն զարգացում» հայեցակարգի տարածումը վստահություն է տալիս ասելու, որ այժմ ՄԱԿ-ը արդեն հուդայականացվել է: Հիշենք, որ 35 տարի առաջ նույն ՄԱԿ-ը դատապարտեց սիոնիզմը, բնութագրելով այն որպես «ռասիզմի և ռասայական խտրականության ձև»:

«Կայուն զարգացում» հայեցակարգի գաղափարների շինծու լինելն արդեն իսկ պարզ երևում է նրա պաշտոնական, այսպես անվանված, «հիմնարար» փաստաթղթերից: Սակայն դա ամենևին չի խանգարում, որ միմյանց հաջորդող համաշխարհային կոնֆերանսներում ու գագաթնաժողովներում մշտապես նշվի, թե *նորից հաստատում ենք մեր նվիրվածությունը Կայուն զարգացմանը*:

Կիևի կոնֆերանսը

«Կայուն զարգացում» հայեցակարգին նվիրված Եվրոպական երկրների շրջակա միջավայրի պահպանության նախարարների 5-րդ կոնֆերանսը և դրան զուգահեռ Համաեվրոպական Էկոֆորումը տեղի ունեցան 2003 թվականի մայիսին, Կիև քաղաքում:

Կոնֆերանսի 77 դրույթներից բաղկացած Հայտարարությունում մասնավորապես ասվում է. *«Մենք, 51 երկրների շրջակա միջավայրի նախարարներս և պատվիրակությունների ղեկավարներս, ընդգծում ենք «Շրջակա միջավայրը Եվրոպայի համար» գործընթացի կարևորությունը, որը հանդիսանում է շրջակա միջավայրի պահպանությանը և Կայուն զարգացմանը աջակցելու գործիք: ... Մենք ողջունում ենք Կայուն զարգացման վերաբերյալ Համաշխարհային հանդիպման (Յոհաննեսբուրգ, 2002 թ.) ընդունած որոշումը և մեզ վրա պարտավորություն ենք վերցնում այդ որոշումը կատարելու համար: ... Մենք նշում ենք, որ նախարարների*

կոնֆերանսների նախապատրաստելը նպաստել է շրջակա միջավայրի պահպանությանը և Կայուն զարգացմանը աջակցող և իրավաբանորեն պարտավորեցնող մի ամբողջ շարք փաստաթղթերի մշակմանը: ... Կայուն զարգացումը մասնավորապես պետք է խզի տնտեսական աճի և շրջակա միջավայրի քայքայման միջև եղած կապը և պետք է աջակցի թե՛ տնտեսական աճին, թե՛ շրջակա միջավայրի պահպանությանը: ... Մենք ընդունում ենք, որ կրթությունը շրջակա միջավայրի պահպանության և Կայուն զարգացման համար կարևոր գործիքներից մեկն է... Մենք բոլոր երկրներին կոչ ենք անում Կայուն զարգացումը ինտեգրել կրթական համակարգի բոլոր մակարդակներում՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն կրթությունը, ներառյալ ոչ ֆորմալ կրթությունը և ոչ կազմակերպված սեկտորի կրթությունը, այն նպատակով, որ կրթությունը փոփոխությունների համար դառնա ...»:

«Կայուն զարգացում» հայեցակարգի խնդրով միմյանց հաջորդող Համաշխարհային բարձր կարգի հանդիպումները վերահաստատում են նախկինում ընդունված հռչակագրերն ու նոր պարտավորություններ ստանձնում: Ընթացքում ձևավորվում է այս Հայեցակարգի օրենսդրական-իրավական հիմքերը, ինչպես նաև դրան զուգահեռ Միջազգային դաշնագրերում (կոնվենցիաներում) ներարկվում են «Կայուն զարգացում» հայեցակարգի սկզբունքները: Պետք է նկատի ունենալ, որ Միջազգային դաշնագրերը գերակա են Ազգային օրենքների նկատմամբ: Փաստորեն, նույն գաղափարները մարդկությանը թելադրվում-պարտադրվում են, առաջին հայացքից միմյանց հետ կապ չունեցող, սակայն իրականում մեկ ուժի ծրագրին համահունչ երկու ուղիներով (2012 թվականին Բրազիլիայում տեղի է ունենալու «Ռիո +20» ՄԱԿ-ի կոնֆերանսը, որի ընթացքում հիմնականում քննարկվելու են «Կայուն զարգացում» հայեցակարգի ոլորտում ընդունված որոշումների կատարման ընթացքը, էկոնոմիկայի էկոլոգիացում կամ կանաչ էկոնոմիկա խնդիրները: Հուսանք, որ կայանալիք կոնֆերանսում որոշ պետությունների ներկայացուցիչներ բացահայտորեն կխոսեն «Կայուն զարգացում» հայեցակարգում արտացոլված սիոնիստական նկրտումների մասին, և այդ կոնֆերանսը կդառնա շրջադարձա-

յին՝ այս հայեցակարգի ճանապարհը փակելու և այն պատմության աղբավայրը նետելու գործում):

Կիևում անցկացվող Կոնֆերանսում, բացի «Կայուն զարգացում» հայեցակարգին վերաբերող Յճակագրից, նաև վավերացման էին ներկայացված Միջազգային մի շարք համաձայնագրեր: Թե՛ Յճակագրի և թե՛ Յամաձայնագրերի առաջին վավերացնող հինգ երկրներից մեկը Հայաստանի Հանրապետությունն էր (վավերացված փաստաթղթերից է «Անդրսահմանային հոսքաջրերին-կեղտաջրերին» վերաբերող համաձայնագիրը, որը մաս է կազմում «Անդրսահմանային ջրեր» համաձայնագրին: Հայտնի պատճառներով Հայաստանի Հանրապետությունը չի վավերացնում վերջին համաձայնագիրը, սակայն կեղտաջրերի հարցում իր համաձայնությունը տալով, մասնակիորեն ընդունում է մեզ համար ոչ նպաստավոր «Անդրսահմանային ջրերի» համաձայնագիրը): Այս երկրները Կոնֆերանսը կազմակերպողների կողմից գովեստի ու ոսկե մեդալների, ինչպես նաև դրամաշնորհային պարգևների արժանացան (խոսվում էր այն մասին, որ ստորագրելու համար նախօրոք խոստացել էին ֆինանսական և տեխնիկական օժանդակություն): Այն դեպքում, երբ պետական ավանդույթներ ունեցող և ինքնիշխան որոշ երկրներ հայտարարեցին, որ այդ համաձայնագրերը կստորագրեն հետագայում՝ փաստաթղթերը հանգամանալից ուսումնասիրելուց հետո: Օրինակ, Ռուսաստանը պատճառաբանեց, որ վավերացվելիք փաստաթղթերը նախ պետք է թարգմանվեն ռուսերեն, քանզի անգլերեն տարբերակը (օրիգինալը) թեև կատարյալ է, սակայն այն Ռուսաստանի համար չի կարող լինել մեթոդական-նորմատիվային փաստաթուղթ, հետևաբար, նշված փաստաթղթերը թարգմանելուց և բազմակողմանի քննարկելուց հետո միայն հնարավոր կլինի համապատասխան որոշում կայացնել: Բացի սրանից, Ռուսաստանի շրջակա միջավայրի պահպանության նախարարը մինչ այդ արդեն հայտարարել էր, որ «Կայուն զարգացում» հայեցակարգը ծավալուն ոլորտ է, այն ընդգրկում է երկրի իրավունքը, տնտեսությունը, մշակույթը և, ընդհանրապես, երկրի բոլոր ոլորտները, հետևաբար այդ խնդրի քննարկումը և դրա վերաբերյալ որոշում կայացնելը պետք է երկրի իշխանության մեմաշնորհը լինի, այլ ոչ թե շրջակա միջավայրի պահպանության նախարարության:

Սինիստրների Կոնֆերանսին զուգահեռ ընթացող Համաեվրոպական էկոֆորումը գործնականում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար փորձի փոխանակման, հաշվետվություն ներկայացնելու և նոր հանձնարարականներ ստանալու միջոցառում էր: Այդտեղի բազմաթիվ ելույթներից բերենք որոշ քաղվածքներ:

Քննարկվող օրենքում պարտադրվում է լայն իրավունքներով անկախ հանձնաժողովի ստեղծումը, որին հանձնվում է և՛ գիտական, և՛ փորձագիտական հետազոտություններ կատարելը, և՛ դրանց փորձաքննության իրականացումը: Փաստորեն, համազգային նշանակություն ունեցող և հիմնարար լուծումներ պահանջող խնդիրը հանձնվում է հասարակական կազմակերպության տնօրինմանը, երբ ավելի նպատակահարմար է, որ գիտական այդ կազմակերպությունը լճի հետ կապված՝ պետական պատվերներ իրականացնի, ինչպես նախկինում էր: Իսկ Հանձնաժողովի հորջորջվող անկախությունն արդյոք չի՞ նշանակում՝ կախվածություն դրամաշնորհներ և վարկեր հատկացնող Միջազգային կազմակերպություններից...

Դրամաշնորհների ուղեկցությամբ ընդունված օրենքներն ու Միջազգային դաշնագրերն են պատճառն այն բանի, որ առանձին մարդիկ համարձակվում են քննարկման առարկա դարձնել Սևանա լճի նույնիսկ սեփականաշնորհման հարցը: Իշխանական առաջին դեմքերը հավանաբար կվաճառեն ժողովրդի-պետության վերջին ունեցվածքը, եթե Հայաստանի Հանրապետությունը չեղյալ չհամարի իր կողմից վավերացրած Միջազգային որոշ պայմանագրեր, օրինակ, «Վաշինգտոնյան կոնսենսուսը» և չիրաժարվի դրամաշնորհներից ու վարկերից և միջոցներ չձեռնարկի ոլորտների ու ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների ազգայնացման ուղղությամբ:

5. Դրամաշնորհներ ու վարկեր ստանալու համար ծանապարհ բացող, սակայն երկրի տնտեսությունը կազմաքանդող «Կաշիմգ-տոնյան կոնսենսուս» կոչված փաստաթղթի վավերացումն իր հերթին արդեն կատարել է իր սև գործը: Կարելի է ասել, որ մոտ երկու տասնամյակների ընթացքում համարյա կազմալուծված է պետական համակարգը, անհեռանկար իրավիճակում են հայտնվել տնտեսական, մշակութային և մյուս ոլորտները: Ծանր կացության մեջ է հայտնվել նաև **ՀՀ անտառային ոլորտը**: Այստեղ վարվող քաղաքականությունից (կառավարման համակարգի ապակենտրոնացում և ապապետականացում, բյուջետային հատկացումների նվազեցում, օտարերկրյա պետությունների ու Միջազգային կազմակերպությունների կողմից հատկացվելիք դրամաշնորհների հաշվին ապագա ծրագրեր կազմելը և այլն) պարզ հասկացվում է, որ սեփականաշնորհման այլիքը հասնելու է նաև ՀՀ անտառներին: Համաշխարհային բանկի դրամաշնորհների ու վարկերի ուղեկցությամբ «Հայանտառ» պետական ձեռնարկությունը 1998 թ. վերածվեց պետական փակ բաժնետիրական ընկերության, ինչպես նաև մասնավորեցվեցին անտառտնտեսությանը պատկան արտադրական ձեռնարկությունները:

Համաշխարհային բանկը, շարունակական դրամաշնորհներ ու վարկեր հատկացնելով, փաստորեն դարձել է ՀՀ անտառային ոլորտի իրական տերը: Այս բանկի թելադրանքով ընդունվեց **անտառային նոր օրենսգիրք** (2005 թ.), ըստ որի՝ ՀՀ անտառները դարձան նաև արդյունագործական նշանակության, ինչպես նաև պետական անտառները պետք է հանձնվեն համայնքային կազմակերպությունների կառավարմանը: Պետական անտառների կառավարումը համայնքներին հանձնելը, դժբախտաբար, ողջունում է հենց «Հայանտառի» ղեկավարությունը, այն պատճառաբանությամբ, որ այդ պայմաններում Համաշխարհային բանկից և այլ կազմակերպություններից դրամաշնորհներ կստանան: Այժմ «Հայանտառը» անելանելի վիճակում է. աստիճանաբար նվազում են պետական հատկացումները: Օրինակ, 2011 թ. պետբյուջեից ֆինանսավորվել է անտառի պահպանության ծախսերի միայն 72 տոկոսը, իսկ անտառվերականգնման համար ոչինչ չի հատկացվել: Փաստորեն, անտառային ոլորտը մղվում է դեպի ինքնաֆինանսա-

վորում, այսինքն՝ անտառը հատել, որպեսզի անտառը պահպանվի: Ողբերգական իրավիճակ, որին ակնհայտորեն հաջորդելու է վատթարը՝ անտառների սեփականաշնորհումը: Ասվածին պետք է հավելել նաև այն, որ ընդերքի նոր օրենսգրքի նախագծով, որն ընդունվել է առաջին ընթերցմամբ, անտառներում թույլատրվում է հանքարդյունաբերության իրականացումը:

6. Համաշխարհային բանկի դրամաշնորհներով իրականացվեցին «ՀՀ ջրային պաշարների կառավարման համապարփակ ծրագիրը» և այլ նախագծեր, որոնցում նախանշվեց նաև ջրային նոր օրենսգրք ստեղծելու անհրաժեշտությունը:

Համաշխարհային բանկի և USAID կազմակերպության դրամաշնորհներով 2001 թվականին կազմվեց **ՀՀ ջրային նոր օրենսգրքի** նախագիծը, որի հասարակական լուսմների ժամանակ (25.04.2002) USAID կազմակերպության պաշտոնյա Մ. Բոյդը իր ելույթում ասաց, որ **Հայաստանում ընդունվելիք ջրային նոր օրենսգիրքը դառնալու է չափանիշ՝ Հայաստանի Հանրապետության մյուս օրենքները վերամշակելու և նոր օրենքներ ընդունելու համար:** Իսկ նույն կազմակերպության կողմից ՀՀ ջրային նոր օրենսգրքի Նախագծի համակարգող Մ. Ջոնսթեդն իր հերթին ասաց, որ **«Ջրային նոր օրենսգրքի քննարկվող նախագիծը արդյունք է USAID կազմակերպության կողմից ֆինանսավորման: Մենք ցանկանում ենք միջազգային հայեցակարգերը դնել ազգային հայեցակարգերի մեջ, և այս Նախագծում արտացոլված դրույթները բխում են միջազգային կազմակերպությունների սկզբունքներից: Մենք ներդրումների համար պայմաններ ենք ստեղծում: Հայաստանում մենք պետք է կիրառենք աշխարհի լավագույն փորձը: Այս օրենսգիրքը, հույս ունենք, կդառնա մոդելային ինչպես Հայաստանի Հանրապետության օրենքների ձևափոխման, այնպես էլ աշխարհում ընդունվելիք ջրային օրենսգրքերի համար»:**

Ինչպես պարզ ասվում է, օրենսգրքի նախագծում առկա թե՛ գաղափարները, թե՛ անհրաժեշտ ֆինանսները դրսից են «հոսել»: Ջրային համակարգը դեպի ապապետականացում տանող,

ջուրն ապրանք համարող, ջրային ոլորտում շահույթ հետապնդող դրույթներ պարունակող Նախագիծը վավերացվեց Ազգային ժողովի արտահերթ նիստում (04.06.2002 թ.):

Հայաստանի Հանրապետությունում ջրային նոր օրենսգրքի ընդունմամբ, ջուրը արդեն բնության գրկում ապրանք դարձավ և մտավ շրջանառու ապրանքների ցանկ, և որպես հետևանք՝ կտրականապես փոխվեց ջրից օգտվելու մարդու իրավունքի կարգը:

Հայտնի է, որ ջուրը բնության բարիք է և իր նշանակությամբ մարդու համար, թթվածնից հետո, գրավում է երկրորդ տեղը: Զրից օգտվելու իրավունքի սահմանափակման առումով, այս օրենսգիրքը մարդկության պատմության մեջ իր նախադեպը չունի, քանզի առաջին անգամն է, որ փորձում են բնակչության հիմնական զանգվածին օրենսդրորեն գրկել ջրից օգտվելու իր բնատուր իրավունքից, ինչը բացահայտ ոտնձգություն է նաև մարդու ապրելու իրավունքի նկատմամբ:

Զրային նոր օրենսգրքի բացասական հետևանքներն արդեն ակնառու են: Օրինակ, այս օրենսգրքի ընդունման ժամանակ (2002 թ.) Երևան քաղաքում 1 խմ ջրի վարձը-սակագինը կազմում էր 56 դրամ, 2011 թ. այն կազմում է 170 դրամ: Ծահույթ հետապնդող շուկայական հարաբերությունը գործում է նաև ոռոգման ջրի ոլորտում: Արդյունքում՝ հողատարածքները չեն մշակվում, մեծացել են անապատ տարածքները:

ՀՀ ջրային նոր օրենսդրության ընդունմամբ՝ ջրի ոլորտում հեղաշրջում կատարվեց: Ցավալի և ամոթաբեր է, որ պատվիրատուն այս անգամ էլ մեր Հանրապետությունը օգտագործեց որպես փորձարարական բազա: Ինչպես ջրային օրենսգրքի, այնպես էլ վերջին մեկուկես տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում ընդունված օրենքների տառն ու ոգին լիովին հարմարեցված են հրեաների և քրիստոնյաների աստված համարվող Եհովայի ծաշակին: Որպես «ամենակարող»՝ նա հպարտացել է. «*Ես այ այնպիսի օրէնքներ տուի անոնց՝ որ օգտակար չէին ու այնպիսի կարգադրութիւններ՝ որոնցմով չէին կրնար ապրիլ*» (Եզեկիէլ, 20:25):

Դրամաշնորհներն են այն գլխավոր լծակները, որ Հայաստանի Հանրապետությունում մուտք գործեց այլընտրանքային կրթությունը (օրինակ, շտայներից դպրոցներում առաջինից վեցերորդ դասարանների բոլոր առարկաները դասավանդում է նույն ուսուցիչը, իսկ կրթության հիմքը դրված է կրոնի վրա), մեկ անհատի ստեղծած-կազմած, զուցեն դրսից ներմուծված մոդելային դասագիրքը թարգմանած-տեղայնացված դասագրքերով դասավանդումը, հենց առաջին դասարանից երկու-երեք օտար լեզուների և չորրորդ դասարանից կրոնի դասավանդումը, օտարալեզու դպրոցների հիմնումը, ուսումնական համակարգի ապակենտրոնացումը, ուսուցչի դերի նվազեցումը, կրթության բնագավառում շարունակաբար փոփոխություններ կատարելը և այլ անընդունելի կարգ ու կանոնների հաստատումը: Կարելի է ենթադրել, որ գիտականորեն հիմնավորված դասական կրթության փոխարեն նորի կիրառման գլխավոր նպատակներից մեկն էլ այն է, որ դպրոցականների մտքում քառասյին իրավիճակ ստեղծվի, որպեսզի նրանք չկարողանան լիարժեքորեն կառավարել սեփական կյանքը և խորությամբ չգիտակցեն իրենց արածի բուն էությունն ու նպատակը: Նույն դրամաշնորհների միջոցով է, որ կրոնականացվում է առողջապահությունը: Օրինակ, առողջապահության ոլորտում բարեփոխումների նպատակով Համաշխարհային բանկի վարկերին զուգահեռ հատկացված դրամաշնորհներով առողջապահական կենտրոններն ու այլ հաստատություններն անվանվեցին սուրբ Գրիգոր լուսավորչի, կույս Մարիամ աստվածածնի և կրոնական այլ սրբերի անուններով, հիվանդանոցներին կից մատուռներ կառուցվեցին, իսկ բժշկական կնիքի վրա՝ օձին աստիճանաբար փոխարինում է խաչը: Գործընթացը շարունակվում է: Դրամաշնորհների միջոցով է, որ, օրինակ, ազգային մարզական համակարգում այլ երկրներից գնված մարզիկների և մարզիչների առկայությունը կարծես դառնում է սովորական երևույթ, այն դեպքում, երբ այս պարագայում աստիճանաբար արժեզրկվում է ազգային գիտակցումը:

Գործընթացները ցույց են տալիս, որ դրամաշնորհներն այն գլխավոր մեխանիզմներից են, որոնց միջոցով փոփոխության են ենթարկվում ժողովուրդների սովորույթները, բարքերը, պետութ-

յունների ներքին ու արտաքին քաղաքականությունը, կրոնական կարգը և այլն: Փաստորեն, դրամաշնորհային քաղաքականություն ասելով կարելի է հասկանալ՝ աշխարհում միակենտրոն կառավարման հասնելու քաղաքականություն: Օրինակ, վերը արծարծված վարկային քաղաքականության և «Կայուն զարգացում» հայեցակարգի դրույթներն աշխարհով մեկ տարածելու, ազգային պետությունների օրենքները ավերիչ ուժի գաղափարախոսությանը հարմարեցնելու գործում իր առանձնահատուկ և անփոխարինելի դերն է կատարում դրամաշնորհային քաղաքականությունը: Կատախորեն կարելի է ասել, որ եթե չլինեին դրամաշնորհները, ապա չէր լինի վարկերի ահռելի ծավալումը և, գլխավորապես, «Կայուն զարգացում» հայեցակարգի արագընթաց տարածումը:

Միջազգային կազմակերպությունների կողմից, օրինակ, նորանկախ պետություններում իրականացրած դրամաշնորհների հետևանքով ստեղծված իրավիճակը ցույց է տալիս, որ **դրամաշնորհը փաստորեն կաշառք է**, այն էլ այնպիսի կաշառք, որը հնարավորություն է տալիս չնչին գումարներ հատկացնելով՝ տվյալ պետությունից հսկայական հարստություններ կորզել, ինչպես նաև իր թելադրանքին ենթարկել նրա ներքին ու արտաքին քաղաքականությունը, տնտեսության ուղղվածությունը:

Այս բաժնում շատ հակիրճ խոսվեց մեր երկրում միայն մի քանի օրենքների ընդունման հետ կապված դրամաշնորհների մասին, երբ Հայաստանի Հանրապետությունում, օրենքների ձևափոխման և նոր օրենքների ընդունման առումով, դրամաշնորհային հարյուրավոր ծրագրեր են իրականացվել: Եվ այդ օրենքներում կարմիր թելի պես անցնում է ժողովրդի ու պետության շահի երկրորդականացումը, և հաճախ էլ՝ ժողովրդի իրավունքների կոպիտ ոտնահարումը, սակայն առանձին անհատների համար՝ երկիրը կողոպտելու լայն հնարավորությունը: Գործընթացը շարունակվում է: Հարմանալի է, որ այս ավերիչ գործողությունները կատարվում են բացահայտ, իսկ Հայաստանի Հանրապետությունում դեռևս չեն կասեցվում փոփոխություններ կատարելուն և նոր օրենքներ ընդունելուն ուղղված՝ Միջազգային կազմակերպությունների դրամաշնորհները:

**Նրանք հասան անմիտների երկիրը,
որոնք ամեն ինչ վաճառել էին:**

Հայկական հեքիաթից

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ

Շատերն են զարմացած, թե ինչու կոմունիստական գաղափարախոսության հիմքում դրված, քննադատության չդիմացող և անհեթեթ դրույթները՝ «պետության դերի աստիճանաբար թուլացումը» և «պետություն հասկացության վերացումը», այժմ էլ որդեգրել են կոմունիստական հասարակարգի երդվյալ թշնամի համարվող Միջազգային կազմակերպություններն ու հետևողականորեն պարտադրում են նաև Խորհրդային Միության տրոհումից առաջացած նորանկախ երկրներին (այդ նույն գաղափարները պարտադրում են նաև մյուս պետություններին, սակայն նորանկախ երկրների պարագայում դա առավել վտանգավոր է, քանզի նրանք դեռևս չեն կերտել իրենց պետականությունը): Բնականաբար հարց է առաջանում, թե այդ կազմակերպություններն արդյո՞ք մարդկության համար բարեկեցիկ ու հուսալի կյանքի պայմաններ ստեղծելու համար են ջանք թափում, թե՞ նրանք այլ նպատակ են հետապնդում:

Մի պահ ընդունենք, թե աշխարհի բոլոր պետությունները, քարոզվող պարտադրանքին համապատասխան, ապակենտրոնացրել են պետական կառավարման համակարգը և մյուս ոլորտները, սեփականաշնորհել-վաճառել են իրենց խմելու և ոռոգման ջրի համակարգերը, էներգահամակարգը, կապի ու հաղորդակցության միջոցները, անտառները, ընդերքի պաշարներն ու բնական այլ հարստությունները և բոլոր ոլորտները, ֆոնդերն ու օբյեկտները: Այս ենթադրելի իրավիճակը՝ ուժեղ օրենքներ և դրանց կիրարկման համար լիարժեք պայմաններ ունեցող, կաշառակերությունը մերժող երկրների համար եթե սկզբնական շրջանում գուցեև անվտանգ թվա, սակայն աղքատ ու արտաքին ուժի թելադրանքով կառավարվող երկրների համար, օրինակ, պետական ունեցվածքը վաճառելուց հետո, ինչպես արդեն ցույց է տալիս նաև մոտիկ

անցյալի փորձը, արագորեն քայքայվում են այդ պետությունների հիմքերը, և բնակչությունը հիմնականում հայտնվում է աղքատության մեջ և անօգնական վիճակում:

«Համաշխարհային Նոր կարգեր» կերտելու գաղափարախոսությամբ՝ ջանք ու միջոցներ չեն խնայվում համայն մարդկությանը համոզելու, որ իբր միայն ազգային պետությունների աստիճանաբար թուլացմամբ նրանց միջև եղած սահմանների վերացմամբ, և ապա, ընդհանրապես, պետությունների վերացմամբ հնարավոր կլինի ստեղծել բոլոր մարդկանց շահերին համապատասխանող միակենտրոն կառավարման համակարգ, որը իբր արդար ու օպերատիվ կկառավարի աշխարհը, մարդկությանը կձերբագատի միջէթնիկական բախումներից ու պատերազմներից և ամենուրեք կստեղծի հանդուրժողականության մթնոլորտ:

Այժմ բոլորին է հայտնի, որ ներկայացվող գաղափարախոսությամբ անգամ պետության դերի թուլացումը բացահայտ խաբկանք ու որոգայթ է, և եթե աշխարհի պետությունները հավատան դրան ու որդեգրեն այդ քաղաքականություն-գաղափարախոսությունը, ապա ակնհայտորեն կհայտնվեն մահվան թակարդում և կզրկվեն իրենց ժողովուրդների գոյությունն ապահովելու համար անգամ արդար պայքար մղելու հնարավորությունից:

Ինչ վերաբերում է պետական համակարգի դերի աստիճանական թուլացմանը, ապա մեր երկրի օրինակով կարող ենք հաստատել, որ դրսից թելադրվող քաղաքականությամբ ղեկավարվող և կիսադատարկ գանձարանով պետությունը միայն անվամբ է պետություն կոչվում: Այդպիսի երկրներում անհեթեթություն է խոսել բարեկեցիկ կյանքի, մարդու իրավունքների, ժողովրդավարության, ազատ մամուլի, ազգային անվտանգության մասին:

Ներկայումս աշխարհում տնտեսական ու քաղաքական առումով կախյալ երկրները կազմում են ավելի քան 90%-ը: Նրանց՝ պետության կարգավիճակ ունենալը դավադիր ուժին՝ սիոնիզմին, առայժմ շահեկան է՝ հզոր երկրներին քարոզվող գաղափարախոսության լծի տակ լիովին բերելու և ապա վերջնականապես քայքայելու համար: Այսպես, դժվար չէ պատկերացնել, թե վարկերով ու այսպես կոչված, մարդասիրական օգնությամբ գոյատևող երկրները միջազգային բարձր ատյաններում ինչպիսի վերաբերմունք

կղրսևորեն իրենց դոնորների ներկայացրած հարցերի քննարկմանն ու քվեարկմանը: Պարզից էլ պարզ է, որ կերակրողի (դրամաշնորհներ ու վարկեր հատկացնողի) ծաշակով քվեարկության դրված ցանկացած հարց կհաղթի ձայների ճնշող մեծամասնությանը, քանզի, ինչպես արդեն նշվել է, քվեարկության մասնակիցների այդ ճնշող մեծամասնությունը, վարկեր ու դրամաշնորհներ ստանալով հանդերձ, խորհրդաժողովներին և միջազգային կոչված մյուս միջոցառումներին մասնակցում են նույն ուժի դրամական միջոցներով, այսպես ասած ընծաներով: Այսինքն՝ գործողության մեջ է դրված «օրենքով սահմանված կարգով, ձայների պարզ մեծամասնությամբ» կեղծ օրինապաշտությունը:

Ակնառու է, որ պետությունների կառավարման համակարգի ապակենտրոնացումը, պետության-ժողովրդի ունեցվածքի վաճառքը, այսինքն՝ ժողովրդի ու պետության արհեստական աղքատացումը ճանապարհ է հարթում կործանարար բազում գործընթացների զարգացման համար, այդ թվում՝ ազգային լեզվի, ազգային բանակի, ազգային մշակույթի, ազգային սովորույթների քայքայման ու վերացման համար: Այստեղ պետք է հատուկ նշել, որ միայն ազգային լեզվի քայքայմամբ ու վերացմամբ արդեն իսկ ի կատար են ածվելու վերը թվարկած մյուս կործանարար երևույթները: Պատահական չէ, որ Միջազգային կոչված կազմակերպությունների թելադրանքով քայքայվում է հայոց դպրոցի հիմքերը: Բացի Միջազգային կազմակերպություններից, հայոց լեզվի ու դպրոցի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք է նկատվում նաև առանձին խմբավորումների կողմից՝ հենց Հայաստանի Հանրապետությունում: Այսպես, այլևայլ ճանապարհներով հայոց անուն-ազգանուն ձեռք բերած և հայ ժողովրդի նկատմամբ ոչ բարյացակամ տարրը, իբր ազգասիրական-հայրենասիրական, հայապահպան մղումներից դրդված, ամեն առիթով խոչընդոտում է Հայաստանի Հանրապետությունում հայոց լեզվի դիրքերի ամրապնդմանը, հայոց ավանդական ուղղագրության վերականգնմանը, դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում գրաբարի դասավանդմանը, հակառակը՝ ամեն կարգի կեղծ հիմնավորումներ բերելով, նպաստում է Հայաստանի Հանրապետությունում օտարալեզու

դպրոցների հիմնմանը, դպրոցներում կրոնի դասավանդմանը և մանկավարժությանը խորթ այլ մեթոդների կիրառմանը:

Զարգացումները ցույց են տալիս, որ, օրինակ, ազգային բանակների վերացումը դեռ չի նշանակում, թե ընդհանրապես աշխարհում բանակի գաղափարը վերանալու է: Տիրակալի, իմա՝ սիոնիզմի նպատակներին համապատասխան՝ աշխարհում «կարգ» ու «կանոն» հաստատելուն անհրաժեշտ բանակ կլինի, սակայն հավանական բանակը լինելու է միակ բանակն աշխարհում և, չնայած ունենալիք իր պատժիչ, էթնիկական զտման, էթնոսների ոչնչացման ֆունկցիային, հավանաբար կոչվելու է, ասենք, «Արդարության բանակ» կամ «Երկրագնդի փրկության բանակ», որը թերևս ղեկավարի աշխարհի ամենահարուստ (պարզ է, որ այդ ուժի խոսնակ) մարդը՝ ընտանիքը: Եվ եթե այստեղ նկատի ունենանք նաև ինֆորմատիկայի ու գենային ձևափոխման անսահման հնարավորությունները և այն, որ արդեն հայտնի է մարդու գենետիկական քարտեզը և ձգտում են համարակալել Երկրագնդի բոլոր բնակիչներին (փաստորեն հսկողություն է սահմանվելու յուրաքանչյուր անհատի նկատմամբ), ապա հասկանալի կդառնա, թե ինչ աղետալի հետևանքներ կարող է ունենալ համայն մարդկությանը մեկ կենտրոնից ղեկավարելը, այն էլ մի այնպիսի կառույցի կողմից, որի նպատակը մարդկության հիմնական մեծամասնության ոչնչացումն է: Օրինակ, մարդուն համարակալելուց հետո, առկա տեխնիկայի, գլխավորապես ինֆորմատիկայի պայմաններում Երկրագնդի ամեն մի անհատի մասին տեղեկություն ստանալու օպերատիվությունը կարող է հազարավոր անգամ մեծ լինել, քան ասենք, ամեն մի դատապարտյալի մասին կարող էին տեղեկություն ստանալ մոտ 50 տարվա վաղեմության որևէ բանտում կամ համակենտրոնացման ծամբարում: *Ծրագրված* կյանքի առումով պետք է անիծել կենդանաբանական այգու ստեղծման գաղափարը, որտեղ կենդանիների համար կենսական՝ ջրի, ազատության, սննդամթերքի, սերնդատվության և այլ հարցերը ծրագրված են կառավարող-խնամողի կողմից:

Արդեն անցել են այն ժամանակները, երբ ազգային պետական համակարգի քայքայման, ազգային բանակի կազմալուծման, ազգային լեզվի, ազգային մշակույթի, ազգային ինքնագի-

տակցության, ազգային հավատքի և ազգային այլ արժեքների ոչնչացմանն ուղղված գործողությունները կատարվում էին ոչ բացահայտ: Այսօր արդեն հայտնի են այն անձինք ու նրանց ենթակա կազմակերպությունները, որոնց դրամաշնորհային ծրագրերով և վարկային նախապայմաններով քառս է ստեղծվում երկրների-պետությունների օրենսդրություններում, պետական կառավարման համակարգերում, հասարակական կյանքում և վերը թվարկած ոլորտներում, սակայն այնպիսի քառս, որի պայմաններում հնարավոր լինի բնակչությանը ծառայեցնել սիոնիզմի ծրագրի իրականացման գործին և տիրանալ նրանց բնական պաշարներին և ստացվածքին: Չայտնի է նաև այն ուժը, որին ակնհայտորեն ենթակա են նշված կազմակերպությունները: Այսօր հայտնի են նաև ազգային պետությունների այն պաշտոնյաները, որոնք դրամաշնորհներ ու վարկեր ստանալու համար (հարկավ, այստեղ կարող են լինել այլ ազդակներ) գործարքի մեջ են մտել դավադիր ուժի հետ: Սակայն ոչինչ չի փոխվում. անցյալի պաշտոնյաներին գոնե քաղաքական գնահատական չի տրվում, այսօրվա պաշտոնյաները վայելում են իրենց աթոռները: Իսկ ինչ վերաբերում է ժողովուրդներին-մարդկանց, ապա նրանց համար այնպիսի պայմաններ են ստեղծել, որ թերևս նրանք իրենց կյանքի տերը չեն զգում, իսկ եթե առանձին պոռթկումներ են լինում, ապա դրանք հիմնականում կատարվում է արտաքին ուժի դրամաշնորհներով-թելադրանքով:

Այս «ներկայակում», թերևս, կիսալեզալ է մնում միայն վտանգավոր գաղափարներ քարոզող և գործունեություն ծավալող հայտնի կազմակերպություններին, օրինակ՝ Եհովայի վկաներին ֆինանսավորողը, սակայն ձեռագրի նույնությունը հուշում է, որ այդ ուղղությամբ հոսող ֆինանսներն ու նյութական միջոցները բխում են նույն աղբյուրից, որտեղից որ բխում են դրամաշնորհներն ու վարկերը: Այսպիսի կազմակերպություններին ոչ բացահայտ ֆինանսավորելը, թերևս, կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ դավադիր ուժին դեռ լիովին չի հաջողվել Միջազգային կոնվենցիաներում ամրագրել նրանց կողմից քարոզվող դիվային դրույթները՝ օրինակ, հրաժարվել աշխատանքից, զինծառայությունից, սեփական անձի ժխտում և այլն:

Ձևավորվող միջազգային իրավունքի գործընթացում դժվար է չնկատել այն, որ բազմաթիվ չհիմնավորված ու կասկածելի և նույնիսկ բացահայտ վտանգաբեր դրույթներ պարունակող Միջազգային կոնվենցիաները փորձում են դարձնել «համամարդկային օրենսգիրք»: Այդպիսի օրենսգրքի՝ պողպատյա ծիպոտի գերակայության դեպքում կարելի է ենթադրել, որ վտանգավոր զարգացումների արագությունը կտրուկ կմեծանա: Եթե գործընթացը չկասեցվի, ապա հեռու չէ այն օրը, երբ ազգային պետությունների սահմանադրություններն ու օրենսգրքերը միայն ենթաօրենսդրական փաստաթղթերի արժեք կունենան, իսկ հետագայում իրենց դերը ընդհանրապես կկորցնեն՝ իրենց տեղը զիջելով դավադիր ուժի կողմից ստեղծվելիք, այսպես ասած, համաշխարհային սահմանադրությանը և համաշխարհային օրենսգրքին: Դժբախտաբար, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում և բոլոր օրենքներում արդեն ամրագրված է հետևյալ դրույթը. *«Եթե միջազգային պայմանագրերով սահմանված են այլ կանոններ, քան պարունակում է սույն օրենսգիրքը, ապա կիրառվում է միջազգային պայմանագիրը»*: Այսինքն՝ այսօր իսկ Հայաստանի Հանրապետությունում գերակա է միջազգային, իմա՝ սիոնական իրավունքը:

Զարգացումներն արդեն ցույց են տալիս, որ համայն մարդկության համար մեկ ընդհանուր սահմանադրություն և օրենսգիրք (օրենքներ) ստեղծելու ճանապարհին դավադիր ուժը պետությունների սահմանադրություններում և օրենքներում իր շահերից բխող դրույթներ ներարկելուց բացի, նախ կստեղծի, ասենք, մայրցամաքների կամ նմանատիպ անվանումներով սահմանադրություններ և օրենքներ:

Սեփական շահերին հակոտն խնդիրներում ազգային պետությունների ցուցաբերած հլու վերաբերմունքը, թերևս, հասկացվի, եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ որոշ անհատներ ահռելի միջոցների են տիրում: «Գեո-2000» Հաշվետվությունում ասվում է, որ գլոբալ գործընթացների ներքին շուկայական գործառույթներում 1996 թ. մասնավոր ներդրումները կազմել են 350 տրիլիոն դոլար, երբ աշխարհի պետությունների նույն տարվա պետական սեկտորի ներքին համախառն արդյունքը կազմել է ընդամենը մոտ 30 տրիլիոն դոլար: Պարզ չէ՞, որ համամուլորակային գործընթաց-

ներում ու զարգացումներում խաղի կանոնները թելադրելու են ոչ թե պետությունները, այլ՝ փողատեր անհատները (ընտանիքները), առավել ևս, երբ նրանք հիմնականում նույն կազմակերպությունն են ներկայացնում և բռունցք են կազմում: Այդ համախմբված ընտանիքները կուտակած կապիտալի-ֆինանսների միջոցով համարյա տիրացել են աշխարհի բոլոր պետությունների քաղաքական լծակներին և ձգտում են առավել ծավալուն դարձնել իրենց ազդեցությունը: Այժմ արդեն նրանք կանխորոշում են մարդկության ապագան և այդուհանդերձ՝ մնում են աննկատ: Նրանց կատարած ավերիչ գործերը սովորաբար վերագրվում են հզոր երկրներին, մեր օրերում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներին:

Իրենց հիմնական գործառույթը կորցրած պետությունների իշխանական վերնախավերը, դավադիր ուժի՝ սիոնիզմի ձեռքին գործիք ու խաղալիք լինելով հանդերձ, մեխանիկորեն ստանձնում են նաև իրենց իսկ երկրներում աղքատությունը խորացնողի դերը, քանզի տնտեսության քայքայմանը զուգահեռ, օրեցօր ուռձացող պետական ապարատը պահելու և պաշտոնյաների անձնական բարեկեցությունն ապահովելու հիմնական աղբյուրներն են մնում բնակչությանը հարստահարելը և բնական պաշարները գիշատչորեն կողոպտելը, արտաքին վարկերը, ինչպես նաև պետական հարկեր չվճարելը: Փաստորեն, աղքատ երկրների կառավարման համակարգերն ավերիչ ուժի համար դառնում են լրացուցիչ հենարան՝ իր նպատակին հասնելու ձանապարհին, իսկ սեփական ժողովրդի համար՝ պատուհաս: Պատահական չէ, որ միջազգային կազմակերպությունների, այսինքն՝ դավադիր ուժի հաստատած «կարգ» ու «կանոնները» լայն հնարավորություն են ընձեռում, որ իշխանական լծակներին տիրացած որոշ անհատներ մի քանի տարիների ընթացքում միլիարդատեր դառնան և որպես կիսաստվածներ՝ անվրդով ու անհոգի բազմեն իշխանական գահին և տարվեն անձնական, օրինակ, առևտրական գործերով, իսկ իշխանական լծակները կորցնելուց հետո՝ պատասխանատվության չենթարկվեն և թիկնազոր ունենան: Ազգային պետություններում իրավիճակն առավել վատթարանում, ողբերգական է դառնում նաև նրանով, որ օրենսդիր, դատական և գործադիր իշխանական լծակները

րին տիրանում են փողատերերը և անձնական տնտեսական գործունեություն վարողները, որոնք այնպիսի օրենքներ են ընդունում, որ ավելի ծավալուն դառնա իրենց շահույթը: Պարզ է, որ միայն այսպիսի կարգի գոյությունն արդեն իսկ սպառնալիք է պետության գոյությանը:

Նախքան թույլ երկրների վերանալը ավերիչ ուժը սրանց կօգտագործի որպես գործիք նաև հզոր ազգային պետություններին ծնկի բերելու և ոչնչացնելու գործում, այն երկրների, որոնք, իրենց հերթին, շնչահեղձ են անում աղքատ երկրներին: Հավանաբար դա է լինելու այսօրվա թույլ պետությունների վերջին «առաքելությունը»: Այստեղ ականայից հիշում ես ձկնորսության մեջ ավանդույթ դարձած այն եղանակը, երբ ձկնորսները մեծ ձկներ որսալիս օգտագործում են համեմատաբար փոքր կաչող ձկներ, որոնք օրավարտին վերածվում են ձկնապուրի: Ինչպես Աստվածաշնչում է գրված. «Երբ դուն կործանելը լմնցնես, քեզի պիտի կործանեն»:

Անկախության առաջին տարիներին Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգը խոստումնալից էր: Օրինակ, Խորհրդարանը (Գերագույն խորհուրդը) օրենքներ ընդունելով հանդերձ, ուներ նաև վերահսկման ֆունկցիա: Խորհրդարանն էր հաստատում վարչապետին, նրա կողմից ներկայացված կառավարության կազմը: Բարձրաստիճան պաշտոնի հավակնորդը Խորհրդարանի քննարկմանն էր ներկայացնում իր ծրագիրը, նրա աշխատանքից ազատելու հարցը նույնպես հաստատվում էր միայն Խորհրդարանում նրա հաշվետվությունը լսելուց հետո: Դժբախտաբար, կարճ ժամանակ անց, աննկատելիորեն փոխվեց պետական կառավարման համակարգի գործունեության ուղղվածությունը: Այս խնդրում, թերևս, ամենազգալի բացասական ազդեցություն ունեցավ նախագահական համակարգի ստեղծումը: Այն ստեղծվեց Խորհրդարանի, կառավարության, դատական իշխանության և այլ ոլորտների որոշ գործառույթների կրճատման հաշվին: Փաստորեն ստեղծվեց երկրորդ գործադիր իշխանությունը, սակայն բացարձակ ու անսահմանափակ իշխանությամբ, որը գործնականում իրեն է ենթարկել այն բոլոր իշխանական համակարգերը, որոնք, ըստ Սահմանադրության, պետք է որ անկախ լինեն: Ստեղծված իրա-

վիճակում ձևավորվել և օրեցօր ավելի է կարծրանում իշխանական լծակներ ունեցողի մի անսասան կերպար, երբ նրա գործելակերպին հետևողը կհասկանա, որ «նա է պետությունը» և վերջ: Դրա հետ մեկտեղ, նախագահական համակարգի ստեղծումն առավել ուռճացրեց առանց այդ էլ ուռճացած պետական կառավարման համակարգը (1990 թվականի Հայաստանի Հանրապետության բյուջեի ծախսերում պետական ծառայությունների ծախսերը կազմել են 1.4, իսկ 1999 թվականին՝ 8,6 տոկոսը, այսինքն՝ պետական ծառայությունների ծախսերը մեծացել են ավելի քան 6 անգամ: 2009 թվականին պետական ծառայությունների ծախսերը կազմել են արդեն բյուջեի ծախսերի 12,2 տոկոսը: Այսինքն՝ մոտ քսան տարվա ընթացքում պետական ծառայությունների ծախսերը մեծացել են 8 անգամ): Եվ այդ ծանր բեռը դրված է հարկատուների ուսերին, երբ խոշոր ձեռնարկատերերը, ըստ մամուլի հրապարակումների, միշտ էլ, որ հարկեր են վճարում:

Արհեստականորեն քառսային վիճակ է ստեղծվել երկրի օրենսդրական-իրավական ոլորտում: Արդեն սովորական է դարձել արատավոր ու հակապետական-հակաժողովրդական այն գործելակերպը, երբ Հայաստանի Հանրապետությունում ընդունվելիք օրենքների նախագծերը դրսից են ներկրվում, իսկ դրանց հայերեն թարգմանելը, տեղայնացումն ու ընդունումն ուղեկցվում է միջազգային կազմակերպությունների կողմից հատկացվող դրամաշնորհներով: Ահա թե ինչու, ընդունվում են նաև միմյանց հակասող և ժողովրդի ու պետության շահերն անտեսող, սակայն առանձին անհատների շահից բխող, բնական համակարգերի քայքայման-ավերման համար հիմք ծառայող օրենքներ: Օրինակ, ժամանակին, երբ օրենսդրական դաշտում տիրող քաոսը նոր էր թափ առնում և դեռևս ամբողջովին ընկալելի չէր տիրող իրավիճակը, «Հայաստառը» պետական փակ բաժնետիրական ընկերություն դարձնելու առնչությամբ դիմեցինք (1997 թ.) ՀՀ նախագահին՝ օրենքը վերականգնելու ակնկալիքով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ըստ ՀՀ «Անտառային օրենսգրքի» (ընդունվել է 1994 թ.)՝ անտառը պետության բացառիկ սեփականությունն է, հետևաբար և՛ այն չի կարող լինել բաժնետիրական ընկերություն: Սակայն պարզվեց, որ ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքն (ըն-

դունվել է 1996 թ.) այլ բան է սահմանում, այն է՝ պետական բոլոր ձեռնարկություններն ու կազմակերպությունները պետք է վերածվեն բաժնետիրական ընկերությունների:

Պետության դերի թուլացմանն ուղղված մեկ այլ օրինակ կարելի է համարել 2001 թվականին, Միավորված ազգերի կազմակերպության ֆինանսներով կազմված «Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրում» առաջնահերթ խնդիր համարվող հետևյալ պահանջները. «Պետությունը, ստանձնելով միայն համընդհանուր ազգային նշանակության հարցերի լուծման պատասխանատվությունը, ձերբազատվում է զուտ տեղական նշանակության հոգսերից և թողնում դրանք համայնքներին՝ իրենց սեփական պատասխանատվությամբ որոշելու խնդիրների առաջնահերթությունն ու լուծման եղանակները: Սա է ներկայիս կառավարման համակարգի բարեփոխումների և կատարելագործման հիմնական իմաստը... Մարգպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերություններում կրացառվի հիերարխիկ ենթակայությունը, բացառությամբ համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների բնագավառներից»: Այդ ծրագրով նախատեսվում է նաև պետական կառավարման, տնտեսության կարգավորման և հանրային ծառայությունների հետագա ապապետականացում, ինչպես նաև համայնքների խոշորացմամբ և համայնքային փոքր ձեռնարկությունների լուծարմամբ՝ այդ ուղղությամբ կատարվող ծախսերի կրճատում, նույնը՝ կրթության, առողջապահության, մշակույթի և այլ ոլորտներում:

Անգամ այս փոքր մեջբերումից պարզ երևում է, թե ինչ վտանգ է սպառնում Հայոց պետականության և ազգային միասնության հիմքերին: Ակնհայտորեն փորձում են փոշիացնել պետական կառավարման համակարգը և միջհամայնքային, ինչպես նաև համայնքների ու պետության միջև հակասություններ սերմանել:

Միջազգային կազմակերպությունները մեր երկրում այնպիսի արտոնությունների են հասել, որ արդեն չեն նկատում ՀՀ իշխանության գոյությունը: Օրինակ, 2001 թվականին Համաշխարհային բանկի պատասխանատու աշխատակիցներից մեկը ՀՀ հեռուստատեսությամբ հայտարարեց, որ այլևս պետք չէ աշխատել Հա-

յաստանի կաշառառու կառավարության հետ, մի կառավարություն, որն իր նախարարություններին չի հավատում. մենք (այսինքն՝ Յանաշխարհային բանկը) այսուհետև աշխատելու ենք համայնքների հետ: Հասկանալի է, Համաշխարհային բանկը որոշել է անմիջականորեն մտնել հայ ընտանիք, որպեսզի անմիջականորեն-առձեռն մատուցի ազգակործան տոքսին պարունակող քաղցրահամ բլիթը: Եվ սրա արդյունքն արդեն շատերին է հայտնի. ՀՀ բազմաթիվ քաղաքացիներ, չկարողանալով կատարել վարկային պարտավորությունները, արդեն զրկվել են իրենց բնակարաններից ու հողատարածքներից:

Ցավոք, մեր երկրի իշխանավորները, ինչպես ներքին և արտաքին խնդիրներին վերաբերող կենսական հարցերում, այնպես էլ Միջազգային կոնվենցիաների վավերացման գործում պատշաճ լրջություն չեն դրսևորում և խորամուխ չեն լինում դրանց բովանդակության մեջ: Դժվար չէ կռահել, թե ինչի կարող է հանգեցնել այդպիսի վերաբերմունքը, առավել ևս, որ ՀՀ Սահմանադրությունում և օրենքներում ամրագրված է միջազգային պայմանագրերի գերակայությունն ազգային օրենսդրության նկատմամբ: Այս դժբախտությանը պետք է հավելել նաև այն, որ ՀՀ կառավարությունն իր իսկ երկրում զրկված է տնտեսական որևէ գործունեություն իրականացնելու իրավունքից: Հայաստանի Հանրապետությանը այս իրավունքից զրկող փաստաթղթերից է «Վաշինգտոնյան կոնսենսուսը», որը մեր երկիրը վավերացրել է մոտ 17 տարի առաջ: Այս խնդրին վերաբերող փաստաթղթերը դեռևս բացահայտված չեն, սակայն մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ Միջազգային կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության պաշտոնյաների միջև կնքված պայմանագրերում, թերևս իրենց վճռորոշ դերն են կատարել դրամաշնորհներն ու վարկերը: Պարզ է, որ այսպիսի կառավարությունը միայն ձևականորեն է կառավարություն կոչվում, սակայն այն լիովին համապատասխանում է «Կայուն զարգացում» հայեցակարգի պահանջներին. մինչև ազգային կառավարությունների վերացումը նախ նրանց զրկել տնտեսական գործունեությունից: 1991-1998 թվականներին, երբ դեռ լիովին չէին ապապետականացվել-վաճառվել-փոշիացվել ռազմավարական նշանակություն ունեցող

ուրրտները, և Կառավարությունն էլ դեռևս տնտեսական գործունեություն իրականացնելու արտոնություն ուներ, բնակչության գոյատևման համար զգալի պայմաններ ստեղծեց նաև ՀՀ կառավարությունը. օրինակ՝ անապահով խավից միշտ չէ, որ գանձել է հեռախոսի, էլեկտրաէներգիայի, ջրի, բնակարանի և կենցաղային այլ ծառայությունների վարձը:

Ճիշտ է, ծանր բեռ է արատավոր պետական համակարգ (ավելի ճիշտ՝ կաշառակեր-ապագային պաշտոնյաներ) ունենալը, սակայն կործանարար է դրա բացակայությունը: Ամբողջ աշխարհը կառավարելուն ձգտող ուժն այդ հարցում այլ կարծիք ունի: Այսպես, այդ նույն ուժի, կամա թե ակամա, խոսնակ դարձած Միջազգային գորեղ կազմակերպությունները պնդում են, թե ազգային մտածելակերպը քաղցկեղ է մարդու օրգանիզմում, իսկ ազգային պետություններն արգելակում են մարդկության առաջընթացը: Նրանք ջանք ու եռանդ չեն խնայում, որպեսզի, այսպես ասած, «Համաշխարհային Միացյալ պետություն» ստեղծվի, իմա՝ աշխարհի կառավարման ղեկը հանձնվի սիոնիստներին: Իսկ մահաշունչ այդպիսի պետություն ստեղծելու համար քայքայում ու փոշիացնում են ազգային ավանդական պետությունները:

Պետության դերի թուլացման կամ վերացման հարցերի շուրջ խորհելիս, կարծում եմ, օգտակար կլինի երբեմն վերհիշել, թե իր «Այծեր և գայլեր» առակով ինչ է ուսուցանում Վարդան Այգեկցին (XII-XIII դդ.): **«Հավաքվեցին այծերը միասին և պատգամ ուղարկեցին գայլերի ազգին և ասացին, թե ինչու մեր մեջ լինի անհաշտ խռովություն, այլ ոչ թե խաղաղություն: Եվ հավաքվեցին գայլերը և ուրախացան մեծ ուրախությամբ և նամակով պատգամ ուղարկեցին այծերի ազգին, նաև անթիվ ընծաներ: Եվ գրեցին այծերին. «Լսեցինք ձեր բարի խորհուրդը և գոհանամք աստծոյ, որ մեզ համար մեծ խնդություն է և խաղաղություն. նաև իմացնում ենք ձերդ իմաստության, որ հովիվն ու շներն են պատճառ և սկիզբ մեր խռովության և կռվի. և եթե նրանց վերացնենք մեջտեղից, շուտով լինի խաղաղություն»:** Եվ այս լսեցին այծերը, հաստատեցին և ասացին. «Իրավացի են գայլերը, որ մեզ սպանում են, որովհետև շները և հովիվը նրանց հալածում

են մեզնից»: Եվ այծերը վտարեցին շներին և հովվին և երդվեցին, որ հարյուր տարի մնան անխախտելի սիրով: Եվ այծերը ցրվեցին լեռները և դաշտերը և սկսեցին ուրախ լինել և ցնծալ և խաղալ, արածում էին լավ արոտներում, ուտում էին համեղ խոտեր, խմում էին պաղ ջրեր և խնդում էին և վազվզում էին` փառք տալով, որ հասան բարի ժամանակի: Եվ գայլերը համբերեցին հարյուր օր, ապա հավաքվեցին դաս-դաս ընկան այծերի վրա և կերան»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Միմյանց հաստատող ու լրացնող փաստերը ցույց են տալիս, որ գոյություն ունի մի ուժ-կառույց, որը ձգտում է տիրանալ աշխարհին: Այդ կառույցը սիոնիզմն է, որի դժվար խոցելիությունը հիմնականում կայանում է նրանում, որ աշխարհին տիրելու իր ծրագիրը միահյուսել-բաղեղել է դիցաբանության, առասպելների, գրականության, պատմության, իրավունքի ոլորտների հետ և Աստվածաշունչ անվամբ դրել է հուդայական ու քրիստոնեական կրոնների հիմքում: Հուդայականության ուսմունքում ամրագրված է սիոնիզմի ծրագիրը, իսկ քրիստոնեականում՝ այդ ծրագրի իրականացման մեխանիզմներն ու տեխնոլոգիան: Սիոնիստ հրեաները հուդայականությունը ստեղծել են հրեաների, իսկ քրիստոնեությունը՝ օտար ժողովուրդների համար: Հուդայականությունն իր հետևորդներին հորդորում-պարտադրում է՝ կարևորել իրական կյանքը, ապրել լիարժեք կյանքով, օգնել ու սիրել միմյանց, տիրել օտար ժողովուրդներին, նրանց հիմնականում ոչնչացնել, իսկ մնացածին օգտագործել որպես ծառա և սեփականել նրանց հարստությունները: Այդ կրոնը հրեաների մեջ ներարկում է արտոնյալի-տիրողի-ոչնչացնողի հոգեբանություն: Այն դեպքում, երբ քրիստոնեությունն իր հետևորդներին հորդորում-պարտադրում է՝ լինել հեզ ու խոնարհ, ապրել աղքատ ու անուրախ, հրաժարվել աշխատանքից, սիրել ու աջակցել թշնամիներին, մերժել իրական-ֆիզիկական աշխարհը և զրկանքներ ու տառապանքներ կրելով ձգտել անդրշիրիմում բարեկեցիկ ու ուրախ «կյանք» ձեռք բերելուն: Այսինքն՝ քրիստոնեության միջոցով օտար ժողովուրդներին ներարկվում է ստրուկի և իրական կյանքից հրաժարվողի, անդրշիրիմում սփոփանք փնտրողի հոգեբանություն:

Հարյուրամյակներ շարունակ հուդայականության և քրիստոնեության համաձուլվածքը՝ Ընդհանուր հուդայականությունը, ծառայում է ի շահ հրեաների: Այս միասնության երկվորյակն այսօր տեսանելի է դառնում նաև օրենսդրական ոլորտում: Նրանք աշխարհի շատ երկրների, գլխավորապես եվրոպական երկրների և Ամերիկայի օրենքներում կարողացել են ներարկել սիոնիզմի ծրագրի իրականացմանը նպաստող դրույթներ շատ ավելի վաղ,

իսկ Խորհրդային Միության փլուզման արդյունքում անկախություն ձեռք բերած երկրների օրենքներում՝ վերջին քսան տարիներին: Այժմ, փաստորեն, բազում երկրների օրենքները, ինչպես նաև Միջազգային դաշնագրերը փաստորեն դարձել են մի համաձուլվածք, որը նույնպես գործում է ի շահ սիոնիզմի:

Աստվածաշնչում ամրագրված սիոնիզմի ծրագիրը մեր ժամանակներում իր արտացոլումն է գտել «Կայուն զարգացում» հայեցակարգում, որը հայտնի է նաև «21 դար», «Նոր կարգեր» և այլ անուններով: Այդ հայեցակարգը, փաստորեն աստվածաշնչյան «փիլիսոփայությունն» է՝ խճճված իրական և կեղծ գիտական տվյալներով և պարուրված էկոլոգիական անվտանգության «հիմնավորմամբ»: «Կայուն զարգացում» հայեցակարգը ներկայացվում է որպես հուսալի կյանքի երաշխիք և առերևույթ քարոզվում է բարեկեցություն, արդարություն, հավասարություն, պատերազմների վերացում, բնական պաշարների խնայողաբար ու բանական օգտագործում, քայքայված ու կիսաքայքայված բնական համակարգերի վերականգնում, իսկ դեռևս անաղարտների՝ պահպանություն: Սակայն խնդրին վերաբերող նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հայեցակարգը ուտոպիա է և նրբագույնս հյուսված թակարդ: Գաղափարախոսության գլխավոր նպատակն է՝ լուծարել ազգային պետություններն իրենց բանակներով ու մյուս կառույցներով, վերացնել պետությունների միջև գոյություն ունեցող սահմանները և նույն սահմանադրությամբ ու նույն օրենքներով աշխարհը կառավարել մի կենտրոնից: Արդյունքում՝ նպատակայնորեն ծրագրված կրթությամբ մարդկանց դարձնել խոնարհ ու հեշտ կառավարելի, հնարավորինս նվազեցնել բնական պաշարները սպառողների՝ մարդկության քանակը:

Աշխարհին տիրելուն և աշխարհի միակենտրոն կառավարմանը ձգտող ուժը՝ սիոնիզմը, այժմ արդեն մասնակիորեն հասել է դրան և համարյա առանց խոչընդոտի գնում է դեպի իր նպատակի լիակատար իրականացումը: Գործընթացը ոչ միայն կասեցնող չկա (աշխարհի պետությունները, դժբախտաբար, կարծես անտեսում են սպառնացող իրական վտանգը և զբաղված են միմյանց հետ «հաշիվներ մաքրելով»), ինչը դրախտային պայմաններ է ստեղծում դավադիր ուժի համար), այլև աշխարհում տնտեսական ու քաղա-

քական լծակներ ունեցող կազմակերպություններն արդեն անթաքույց աջակցում են այդ ուժին: Օրինակ, Համաշխարհային բանկը և սիոնիզմին ենթակա մյուս դրամատները (բանկերը) բռունցք կազմելով, աշխարհի ժողովուրդներից վաշխառությամբ կորզված ֆինանսներն ուղղում են հենց այդ նույն ժողովուրդների քայքայման ու փոշիացման գործին: Իսկ Միացյալ ազգերի կազմակերպությունը, որը 1975 թվականին սիոնիստական գաղափարախոսությունը և քաղաքականությունը որակեց որպես ծայրահեղ ազգայնամոլություն, ռասիզմ ու շովինիզմ, ապա 1992 թվականին շրջանառության մեջ դրեց «Կայուն զարգացում» հայեցակարգը, որը ոչ այլ ինչ է, քան նույն սիոնիզմի ծրագրի իրականացման գործիք: Միջազգային կազմակերպությունների թելադրանքով ու պարտադրանքով է, որ ազգային պետությունների սահմանադրություններն ու օրենքները հետևողականորեն հարմարեցնում են հուդայականության դրույթներին, այդ օրենքները աստիճանաբար աղքատացնում են ազգային պետություններին և բնակչությանը և ժողովուրդների ու պետությունների ունեցվածքը բաժին են դարձնում ամանձին ընտանիքների: Փաստորեն, մի շարք Միջազգային կազմակերպություններ իրենց դաշնագրերով, դրամաշնորհներով, վարկերով և այլազան լծակներով մարդկությանը թելադրում-պարտադրում են այնպիսի գաղափարներ ու չափանիշներ, որոնք նրան շեղում են կյանքի սովորական ընթացքից և ակնհայտորեն տանում դեպի քայքայում, ինչը ճիշտ և ճիշտ համապատասխանում է Աստվածաշնչում արտացոլված սիոնիզմի ծրագրին:

Խորհրդային Միության փլուզումից առաջացած նորանկախ երկրներում, բացառությամբ Բելառուսից, վերջին 15-20 տարիներին պետության ու ժողովրդի շահերին հակասող բազմաթիվ օրենքներ են ընդունվել, սակայն այդ երկրներից որևէ մեկում օրենքներն այն աստիճանի հակաժողովրդական ու հակապետական չեն, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունում է: Այստեղ պետության ու ժողովրդի շահերին հակասող օրենքների ընդունումը կատարվեց զարմանալիորեն հարթ ու անաղմուկ, կարծես, թե դա բնականոն մի գործընթաց էր և հենց այդպես էլ պետք է լիներ: Անկախությունից հետո, քանի դեռ մարդիկ տարված էին իրենց նպատակներին ու ձգտումներին համահունչ օրենքներ ստեղծե-

լու երազներով, հանկարծ նկատեցին, որ կարծ ժամանակահատվածում հարյուրավոր օրենքներ են ընդունվել, սակայն այնպիսի օրենքներ, որոնք անհնար են դարձնում Հայոց պետականության հետագա գոյությունը և ճանապարհ են հարթում հայ ժողովրդի փոշիացման համար: Նշված մերժելի այդ օրենքներն իրականում ծառայում են առանձին ընտանիքների և այդ օրենքների դիմագիծը, մարմնակազմությունը, տառն ու ոգին սիոնական են, իսկ տարազը՝ հայկական: Սովսեսականության նպատակներից բխող այդ օրենքները նույն կենտրոնում ստեղծված մոդելային օրենքներ են, որոնք գլխավորապես վարկադրամաշնորհային քաղաքականությամբ պարտադրվում են աշխարհի ազգային պետություններին: Փաստորեն, այսօր Միջազգային իրավունք ասելով, ինչ-որ չափով պետք է հասկանալ սիոնիստական իրավունք: Ուսումնասիրողները նշում են, որ հավատացյալ սիոնիստները համոզված են, որ երբ Քրիստոսը գա, կհավաքի աշխարհի ժողովուրդների ոսկին ու արծաթը և կտա հրեաներին: Սակայն գործնական սիոնիստները շատ լավ գիտեն, որ երազելուն զուգահեռ պետք է նաև գործնական քայլեր կատարել: Եվ նրանց փաստորեն հաջողվել է կատարել աներևակայելին. նրանց միջամտությամբ աշխարհի ժողովուրդներին իրականում այնպիսի օրենքներ են մատուցվել, որ մինչ Մեսիայի «գալը», նշված օրենքների միջոցով, արդեն սիոնիստների մոտ են լինելու իրենց երազած աշխարհի ժողովուրդների ոսկին ու արծաթը: Հարկավ, դժվար է ասել, որ այդ օրենքները գրել են հենց սիոնիստները, սակայն փաստ է, որ դրանք հույսալականացված են: Այս առումով սիոնիստ հրեաները լիովին իրավունք ունեն բառափոխելու իրենց արյունաքթու աստված Եհովայի խոսքերը և ասել, թե իրենք աշխարհի բազում ժողովուրդներին այնպիսի օրենքներ են տվել, որոնցով այդ ժողովուրդները չափտի կարողանան ապրել:

Շատ ուսումնասիրողներ գրում են, որ իշխանության կամ նյութական հարստությունների հասած սիոնիստները արհամարհական վերաբերմունք են դրսևորում ոչ հրեաների նկատմամբ: Այստեղ ստիպված ենք ասելու, որ զարմանալու ոչինչ չկա: Հետաքրքիր է, արդեն նպաստավոր դիրքի հասած սիոնիստ հրեաները և իրենց հրեա ներկայացնող այլազգի սիոնիստները ինչո՞ւ պետք է

թաքցնեն իրենց արհամարհական վերաբերմունքը դեպի ոչ հրեաները: Նրանք շատ լավ գիտեն, որ իրենք կարողացել ու կարողանում են ժողովուրդներին հիմարացնելով մոլորեցնել և նրանց գլուխը մտցնել ցանկացած, նույնիսկ ինքնակործան գաղափար: Թերևս դրա ամենատպավորիչ ու վառ օրինակը պետք է համարվի այն, որ սիոնիստ հրեաները իրենց զավակներից մեկին աստված են դարձրել ու երկինք բարձրացրել և հասել են այն բանին, որ այդ ականհայտ ստին հավատում են բազում ժողովուրդներ, իսկ դրան հակադրվողներին ենթարկել են ֆիզիկական ու բարոյական բռնությունների: Այս առումով, հարցն ուղղենք նշված ուսումնասիրողներին, թե շուրջ երկու հազարամյակ խաբված և նույն խաբկանքին անկոտրում կառչած մարդիկ արդյո՞ք արժանի են հարգանքի:

Ակնառու է, որ սիոնիստները ժամանակին, օգտագործելով հուդայաքրիստոնեությունը, կարողացել են կրոնական կայսրություն ստեղծել՝ աշխարհի բնակչության զգալի զանգվածի ներառմամբ, իսկ մեր օրերում «Կայուն զարգացում» հայեցակարգի միջոցով փորձում են սիոնական աշխարհիկ կայսրություն ստեղծել, արդեն համարյա համայն մարդկության ընդգրկմամբ:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ԱՌԱՋԱԲԱՆ.....	5
ՎԱՐԿԵՐ	22
«ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»	71
«Կայուն զարգացում» հայեցակարգը Նորանկախ երկրներում.....	82
«Կայուն զարգացում» հայեցակարգը Հայաստանի Հանրապետությունում	101
Կիևի կոնֆերանսը	130
ԴՐԱՄԱԸՆՈՐՅՆԵՐ	149
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ	164
ԱՄՓՈՓՈՒՄ	177

ՀԱԿՈՒ ԱՐԲԱԿԻ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ

**ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ
ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

АКОП АРБАКОВИЧ САНАСАРЯН

**КООРДИНИРОВАННЫЙ
ЗАГОВОР**

В исследовании анализируются использование грантов, кредитов, концепции “Устойчивого развития”, международных конвенций и других влиятельных средств для приспособления государственных юридических структур и хода жизни к всемирному моноцентральному управлению.

НАКОБ SANASARYAN

CO-ORDINATED CONSPIRACY

The study analyzes the use of grants, loans, the concept of “Sustainable development”, international conventions and other powerful tools for adjusting the governmental legal structures and public life towards monocentric worldwide administration.

**Սրբագրիչ Արմենակ Ղազինյան
Էջադրումը՝ Վահրամ Մանուսաջյանի**

Տպաքանակը՝ 1000 օրինակ

Տպագրվել է «ԳԱՍՊՐԻՆՏ» ՍՊԸ տպագրատանը